Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2019

Բովանդակություն

1. Հանցավորության կառուցվածքը, շարժընթացը, հանցագործությունների բացահայտման վիճակը 3
2. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ.....22
3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ.....59
4. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ.....73
5. Պետական շահերի պաշտպանության ոլորտ 86
6. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ 97
7. Միջազգային-իրավական համագործակցության ոլորտ 105
8. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման ոլորտ.....115
9. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ.....123
10. Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման ոլորտ.....134

1. Հանցավորության կառուցվածքը, շարժընթացը, հանցագործությունների բացահայտման վիճակը

2018թ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 22.551 դեպք (2017թ.՝ 20.285), որոնցից 11.344-ը՝ Երևան քաղաքում:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերն աճել են 2266-ով կամ 11.2%-ով:

Հանցավորության շարժընթացի վերլուծությունը վկայում է, որ հանցագործությունների դեպքերի աճն ապահովվել է առավելապես միջին ծանրության (6700 դեպք կամ ընդհանուր հանցագործությունների 29.7%) և ծանր (3638 դեպք կամ ընդհանուր հանցագործությունների 16.1%) հանցագործությունների հաշվին, իսկ 2018թ. արձանագրված հանցագործությունների տեսակարար կշռում, ինչպես 2017թ., շարունակել են բարձր մնալ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքերը (11.989 դեպք կամ ընդհանուր հանցագործությունների 53.1%-ը), որոնք, սակայն, 2017թ. համեմատ, 390-ով կամ 3.2%-ով նվազել են:

Դրան հակառակ, միջին ծանրության հանցագործությունները 2018թ. աճել են 1688-ով (5012-6700) կամ 33.7%-ով, ծանր հանցագործությունները՝ 909-ով կամ 33.3%-ով (2729-3638), իսկ առանձնապես ծանր հանցագործության դեպքերն աճել են 59-ով կամ 36.6%-ով (165-224):

Առանձնապես ծանր հանցագործությունների աճը հիմնականում պայմանավորվել է կոռուպցիոն բնույթի առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման աճի ցուցանիշով, ինչը դրական դինամիկա է:

Ծանր հանցագործությունների աճը հիմնականում պայմանավորվել է կոռուպցիոն բնույթի ծանր հանցագործությունների և բնակարանային գողությունների աճի ցուցանիշով: Առաջինը, անշուշտ, դրական դինամիկայի վկայություն է, երկրորդը՝ մտահոգիչ:

Միջին և ոչ մեծ ծանրության հանցագործությունների դինամիկան, ի թիվս առանձին հանցատեսակների շարժընթացի, էապես պայմանավորվել է այս տարվանից ավտոմեքենաներից կատարված գողությունների դեպքերը ՀՀ դատախազության կողմից գողության առավել վտանգավոր տեսակով որակելու պրակտիկայի փոփոխությամբ: Դրա արդյունքում նախկինում որպես ոչ մեծ ծանրության հանցագործություններ որակվող նշված դեպքերը այսուհետ դիտվում են որպես պահեստարան ապօրինի մուտք գործելով կատարված, որակվում և հաշվառվում որպես միջին ծանրության հանցագործություններ: Այսինքն՝ այս դեպքում շարժընթացը պայմանավորված է հաշվառման գործընթացի փոփոխություններով, ինչպես նաև մասնավոր մեղադրանքի դեպքերով քաղաքացիների նախաձեռնողականության աճով:

Տարեթիվը	Հանցագործության դեպքերի ընդհանուր թիվը	ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքեր	միջին ծանրության հանցագործության դեպքեր	ծանր հանցագործության դեպքեր	առանձնապես ծանր հանցագործության դեպքեր
2017	20.285	12.379	5012	2729	165
2018	22.551	11.989	6700	3638	224
2018	**+2267**	**-390**	**+1688**	**+909**	**+60**
աճը	**+11.2%**	**-3.2%**	**+33.7%**	**+33.3%**	**+36.6%**

2018թվական



2017 թվական



Եթե 2017թ. առանձնապես ծանր հանցագործությունները կազմել են ընդհանուր հանցագործությունների 0.80%-ը, ապա 2018թ.՝ 1.0%-ը: Ծանր հանցագործությունները 2017թ. կազմել են ընդհանուր հանցագործությունների 13.5%-ը, իսկ 2018թ.՝ 16.1%-ը:

2008-2018 թվականների հանցավորության կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ընդհանուր հանցագործությունների կազմում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշիռն արտահայտող միջին տարեկան տոկոսային ցուցանիշը կազմել է 28.1%: Մինչդեռ, 2018թ. ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները կազմել են ընդհանուր հանցագործությունների ընդամենը 17.1%-ը:





Ստորև ներկայացվում է 2008-2018թթ. հանցավորության կառուցվածքը՝ ըստ հանցագործությունների վտանգավորության աստիճանի.

Տարեթիվը	Հանցագործությունների ընդհանուր թիվը	Ոչ մեծ ծանրության հանցագործություններ		Միջին ծանրության հանցագործություններ		Ծանր հանցագործություններ		Առանձնապես ծանր հանցագործություններ		Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ	
2008	9271	3442	37%	1556	17%	4083	44%	190	2%	4273	46%
2009	14339	6740	47%	2182	15,2%	5154	36%	263	1,8%	5417	38%
2010	15477	7664	49,5%	2509	16,2%	5007	32,4%	297	1,9%	5304	34%
2011	16572	8478	51%	3785	23%	3818	23%	491	3%	4309	26%
2012	15776	9420	60%	3656	23%	2544	16%	156	1%	2700	17%

2013	18333	11372	62%	3743	20,4%	3088	16,8%	130	0,7%	3218	18%
2014	17546	9981	57%	4073	23%	3319	19%	173	1%	3492	20%
2015	17043	9185	54%	4455	26%	3238	19%	165	1%	3403	20%
2016	18764	10757	57%	4728	25%	3081	16%	198	1%	3279	17%
2017	20285	12380	61%	5012	24,7%	2729	13,4%	164	0,8%	2893	14%
2018	22551	11989	53.2%	6700	29.7%	3638	16.1%	224	1.0%	3862	17.1 %

Կարող ենք փաստել, որ 2008 թվականից սկսած 2018 թվականի նման ցուցանիշ գրանցվել է միայն 2012 և 2016 թվականներին /17.0%/, իսկ ավելի լավ ցուցանիշ արձանագրվել է միայն 2017 թվականին /14.0%/:

Ինչպես վերը նշվեց, 2018թ. հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 22.551 դեպք, այսինքն՝ 100.000 բնակչին բաժին է ընկնում 760 դեպք: Պետք է նշել, որ այս ցուցանիշով մեր երկիրը էական դրական պատկեր է ապահովել այնպիսի երկրների շարքում, ինչպիսիք են՝ Ղազախստանի Հանրապետությունը, որտեղ այդ ցուցանիշը 1599 է, Ռուսաստանի Դաշնությունը՝ 1356, Ուկրաինան՝ 1157, Մոլդովան՝ 904, Բելառուսի Հանրապետությունը՝ 884:

2018թ. արձանագրված հանցագործությունների դեպքերի աճի հիմնական պատճառներից մեկը նախորդ տարիներին կատարված և 2018թ. բացահայտված դեպքերն են, որոնք արտացոլվել են այս տարվա հանցավորության վերաբերյալ վիճակագրական տվյալներում: Այսպես, 2018թ. արձանագրված 22.551 հանցագործության դեպքերից 3755-ը կամ 16.6%-ը կատարվել են նախորդ տարիներին: Նշվածի հիմնական պատճառներից մեկն է քաղաքացիների նախաձեռնողականության ակնհայտ աճը, ինչն արտահայտվել է հատկապես նախորդ տարիներին կատարված հանցագործությունների մասին վերջիններիս կողմից տրված հաղորդումներով:

Հանցագործությունների դեպքերի աճը պայմանավորվել է նաև բարձր լատենտայնություն ունեցող կոռուպցիոն բնույթի այնպիսի հանցատեսակների դեպքերի աճով, ինչպիսիք են՝ պետական և հանրային գույքի հափշտակության, կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու դեպքերը: Այսպես, 2018թ. ընթացքում 362 դեպքով կամ 278.5%-ով /130-492/ աճել է պետական և հանրային գույքի հափշտակության, 298 դեպքով կամ 182.8%-ով ՝ կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության դեպքերի թիվը /163-461/, իսկ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու դեպքերն աճել են 90-ով կամ 60%-ով /150-240/:

Միաժամանակ, նվազում է արձանագրվել հանրային ամենամեծ վտանգավորություն ունեցող հանցատեսակով՝ սպանությունով:

2018թ. ընթացքում Հանրապետությունում գրանցվել է սպանության 36 դեպք: Այս ցուցանիշը նվազագույնն է՝ առնվազն վերջին 38 տարվա կտրվածքով: Ընդ որում՝ նշված դեպքերից 3-ը վերաբերում են անձի անհետ կորելու փաստերին:

Նախորդ՝ 2017թ. համեմատությամբ (արձանագրվել է 47 դեպք, որոնցից 6-ը՝ անհետ կորածների հետ կապված) հանրային ամենամեծ վտանգավորություն ունեցող այս հանցատեսակով դեպքերը նվազել են 11-ով կամ 23.4%-ով, իսկ 2016թ. (66 դեպք, որոնցից 10-ը՝ անհետ կորածների հետ կապված) նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 30-ով կամ 45.4%-ով: Հատկանշական է, որ վերջին երեք տարվա կտրվածքով, փաստորեն, ավելի քան երեք անգամ նվազել են նաև անձանց անհետ կորելու դեպքերը:

Ըստ տասնամյակների կատարված համեմատական վերլուծությունը վկայում է, որ եթե 1980-ականներին (1980-1989թթ.) սպանությունների տարեկան միջին ցուցանիշը կազմել է 60 դեպք, ապա 1990-ականներին այդ թիվը կտրուկ ավելացել է՝ դառնալով 160: Ընդ որում՝ այս երկու տասնամյակների անցումը, որը պատմականորեն նշանավորվում է ԽՍՀՄ-ի փլուզմամբ և ՀՀ անկախության շրջանի մեկնարկով, աչքի է ընկել սպանությունների ցուցանիշի կտրուկ աճով: Այսպես՝ 1989թ. հանրապետությունում արձանագրվել է սպանության 88 դեպք, հաջորդ տարի՝ 1990թ, արդեն՝ 178 դեպք կամ կրկնակի ավելի: 1990 թվականից սկսած՝ սպանությունների եռանիշ թվով ցուցանիշը պահպանվել է մինչև 1997թ: Ընդ որում՝ 1990-1997թթ. ժամանակահատվածում տարեկան կատարվել են եռանիշ թվով սպանություններ, և այդ իմաստով վատթարագույն ցուցանիշն արձանագրվել է 1992թ.՝ 305 դեպք:

2000-2009թթ. տարեկան տեղի ունեցող սպանությունների միջին թիվը կազմել է 73, իսկ 2010թ.-ից մինչև 2018թ. ընկած ժամանակահատվածում՝ 50: Ընդ որում՝ վերջին տասնամյակում /2008-2018թթ./ սպանության դեպքերը նվազել են շուրջ 53.8%-ով /78-36/:

Նշենք, որ 2018թ. 100.000 բնակչին բաժին է ընկնում սպանության 1.2[1] դեպք, իսկ 1995-2017թթ. ՀՀ-ում գրանցված սպանությունների միջին գործակիցը 100.000 բնակչի հաշվով կազմել է 2.2 դեպք:

Սպանությունների վիճակագրությունը, դրա շարժընթացի միտումները, ի թիվս այլ հանգամանքների, կարևորագույն ցուցիչ ու ելակետ են յուրաքանչյուր երկրում հանցավորության ընդհանուր վիճակի, դրա դեմ տարվող պայքարի, հատկապես կանխարգելիչ միջոցների, ինչպես նաև հասարակության իրավագիտակցության, սոցիալ-հոգեբանական բազում գործոնների մակարդակի գնահատման համար:

Ի տարբերություն սպանության դեպքերի՝ 2018թ. սպանության փորձի դեպքերը նախորդ տարվա համեմատ աճել են 7-ով կամ 30.4%-ով /23-30/:

2018թ. դրական դինամիկա է արձանագրվել նաև հանրային մեծ վտանգավորություն ունեցող այնպիսի հանցատեսակներով, ինչպիսիք են՝ առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու դեպքերը՝ 90-ով կամ 8.1%-ով /1113-1023/, այդ թվում նաև առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը՝ 3-ով կամ 1.5%-ով /194-191/, մարդու դեմ ուղղված հանցագործությունները՝ 69-ով կամ 1.4%-ով /4868-4799/, սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները՝ 18-ով կամ 17.6%-ով /102-84/:

2018թ. ընթացքում հանրապետությունում 8-ով կամ 15.4%-ով աճել են հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերը: 2018 թվականին արձանագրվել է այդպիսի 60 դեպք նախորդ տարվա 52 դեպքի դիմաց:

Որպես հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի աճի պատճառ կարելի է նշել այն, որ, 2017 թվականի համեմատ, հաշվետու ժամանակահատվածում նվազել են լատենտային բարձր աստիճան ունեցող՝ հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների դեպքերը: Եթե 2017թ. այս հանցատեսակով արձանագրվել է 858 դեպք, ապա 2018թ.՝ ընդամենը 674, ինչը վկայում է այս ուղղությամբ օպերատիվ մարմինների կատարած ոչ արդյունավետ աշխատանքի մասին:

---

[1] 2019թվականի հունվարի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակի 2.969.000 հաշվարկի հիման վրա: Տե՛ս ազգային վիճակագրական ծառայության http://www.armstat.am/file/article/sv_12_19_520.pdf /կետ 5.2/:

Այդուհանդերձ, պետք է փաստել, որ վերջին տարիներին նկատելիորեն նվազել են հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունները: Այսպես, եթե 2007թ. հրազենի գործադրմամբ կատարվել է 106 հանցագործություն, 2008թ.՝ 84, 2009թ.՝ 100, ապա 2017թ.՝ ընդամենը 52 հանցագործություն, իսկ 2018թ.՝ 60:

Մտահոգիչ է, որ բացասական դինամիկա է արձանագրվել անձնական գույքի հափշտակության դեպքերով՝ աճը կազմել է 1453 դեպք կամ 19.5% /7433-8886/: Մասնավորապես, 2018թ. նախորդ տարվա համեմատությամբ 56 դեպքով կամ 30.6%-ով /183-239/ աճել են հանրային մեծ վտանգավորություն ներկայացնող կողոպուտի դեպքերը, 1135-ով կամ 19%-ով՝ գողության, 1-ով կամ 2.2%-ով՝ ավազակության, 549 դեպքով կամ 61.8%-ով /889-1438/ բնակարանային գողության դեպքերը: 2018թ. էական աճ է արձանագրվել նաև յուրացման կամ վատնման /288-539/, ինչպես նաև խարդախության /1083-1455/ դեպքերով:

Բնակարանային գողության դեպքերի էական աճը և դրան զուգահեռ՝ բացահայտման մտահոգիչ ցածր մակարդակը վկայում են, որ այս հանցագործության կանխարգելմանն ու բացահայտմանն ուղղված միջոցառումներն անբավարար են: Այս հանցագործությունների քանակն ու առանձին դեպքերում դրանց կազմակերպվածության բարձր աստիճանը վկայում են, որ բազմաթիվ դեպքերում գործ ունենք հանցավոր վարքագծի այս դրսևորման մեջ հմտացած, հատուկ միջոցներ ու հնարքներ կիրառող կազմակերպված խմբերի հետ, որոնք, փաստորեն, օպերատիվ տեսադաշտում չեն: Հետևաբար, հանցագործության այս տեսակի նախականխման, կանխման ու բացահայտման ուղղությամբ հետաքննության մարմնի աշխատանքը բավարար համարվել չի կարող:

Ինչպես արձանագրվել է ՀՀ դատախազության կոլեգիայի 2017թ. հոկտեմբերի 27-ի նիստում ընդունված որոշմամբ, բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների դեմ պայքարում էական նշանակություն ունեն բազմաբնակարան շենքերի, հատկապես՝ դրանց մուտքերի՝ հատուկ փականներով դռներով ու տեսագրող սարքերով կահավորման գործընթացի շարունակականության ապահովումը:

Բացի դրանից, անհրաժեշտ է ավելի մեծացնել ոստիկանության արտաքին ծառայության ծավալները՝ պարեկային ծառայություն սահմանելով՝ այս հանցագործությունների համար առավել թիրախային հատվածներում: Ընդ որում, փորձը ցույց է տալիս, որ տարվա կոնկրետ ժամանակահատվածներում, երբ պարեկային ծառայությունն ուժեղացվում է, բնակարանային գողությունների թիվը զգալիորեն նվազում է, իսկ բացահայտման դեպքերը՝ ավելանում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումներին հանձնարարվել է 2018թ. արձանագրված բնակարանային գողությունների դեպքերով կատարել ուսումնասիրություն, որի արդյունքում առանձնացնել բնակարանային գողությունների ռիսկային հատվածները, այդ հատվածները նշագրել քարտեզների վրա: Ուսումնասիրության արդյունքներով իրավապահ, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ անցկացնել համատեղ խորհրդակցություն՝ բնակարանային գողությունների դեպքերի նախականխման, կանխման ու բացահայտման ուղղությամբ գործուն միջոցներ մշակելու և իրականացնելու նպատակով:

Բացի դրանից, բնակարանային գողությունների դեմ տարվող քրեաիրավական պայքարի խստացման նկատառումներով ՀՀ դատախազությունում մշակվել և Հայաստանի Հանրապետության Կառավարություն է ուղարկվել «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» համապատասխան օրենքի նախագիծ:

Ստորև ներկայացվում է 2007-2017թթ. սպանության, սպանության փորձի, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու, ավազակության, ինչպես նաև հրազենի կամ ռազմամթերքի գործադրմամբ հանցագործությունների վերաբերյալ աղյուսակը.

	Տարեթիվը	Հանցագործությունների ընդհանուր թիվը	Հրազենի գործադրմամբ հանցագործություններ	Սպանություն	Սպանության փորձ	Դիտ. առողջ. ծանր վնաս	Ավազակություն	Բնակարանային գողություններ
1.	2008	9271	84	78	30	215	126	1009
2.	2009	14339	100	68	29	181	151	988
3.	2010	15477	66	41	27	167	107	1156
4.	2011	16572	60	60	29	170	106	901
5.	2012	15776	63	50	25	170	63	1054
6.	2013	18333	66	48	25	186	73	1323
7.	2014	17546	68	53	28	216	69	1442
8.	2015	17043	69	52	35	173	54	1369
9.	2016	18764	62	66	36	200	53	1250
10.	2017	20285	52	49	23	194	46	889
11.	2018	22551	60	35	30	191	47	1438

2018թ. հանրապետությունում արձանագրվել է խուլիգանության 234 դեպք՝ նախորդ տարվա 202-ի դիմաց, աճը կազմել է 32 դեպք կամ 15.8%: Խուլիգանության 234 դեպքից 53-ը կամ 22.6%-ը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ /2017թ.՝ 41-ը կամ 20.3%-ը/:

Հանրապետությունում կատարված խուլիգանության դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալների համեմատությունը վկայում է դրանց խիստ տարբերակվածության մասին: Եթե հաշվետու տարում Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում գրանցվել է 80, ապա Արաբկիրում՝ 18, Կոտայքի մարզում՝ 7, Արագածոտնի մարզում, Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջաններում՝ 3-ական խուլիգանության դեպք: Թեև թվային այս տարբերությունը բացատրվում կամ կարող է բացատրվել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի առանձնահատկություններով, մասնավորապես, նրանով, որ հանգստի և զվարճանքի վայրերը հիմնականում տեղակայված են հենց այդ վարչական շրջանում, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ գործ ունենք նաև խուլիգանության դեպքերի նկատմամբ տարբերակված քրեաիրավական և քրեադատավարական մոտեցումների հետ, որոնց չեզոքացման հարցը միշտ դատախազության ուշադրության կենտրոնում է:

Ի սկզբանե պետք է նշել, որ խուլիգանության հանցակազմի վերաբերյալ վճռաբեկ դատարանի հայտնի իրավական դիրքորոշումները իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվում են ակնհայտորեն լայն, անձնական փոխհարաբերությունների և կենցաղային վեճի շրջանակները ընկալվում են չափազանց ընդարձակ՝ երբեմն ներառելով անձի ինքնահաստատման, այլոց հանդեպ իր առավելություններն ընդգծելու, հասարակությանը հակադրվելու ձգտումներով ակնհայտորեն պայմանավորված դեպքերը: Արդյունքում, դեպքի ամենասկզբնական նկարագրությամբ խուլիգանության հատկանիշներ պարունակող արարքները հանցագործության դեպքի վերաբերյալ ամփոփագրերում վերնագրվում են որպես ծեծ կամ մարմնական վնասվածք, և վարույթն իրականացնող մարմնի կողմից դիտվում են որպես այդպիսիք՝ ոչ խուլիգանական դրդմամբ կատարված լինելու կանխավարկածով, այդ դեպքերին արագ դատավարական արձագանք չի տրվում՝ հնարավորություն տալով շահագրգիռ անձանց պայմանավորվելու արարքի արհեստական ոչ խուլիգանական շարժառիթի շուրջ և մատուցելու այն վարույթն իրականացնող մարմնին՝ պատճառ դառնալով հասարակական կարգի կոպիտ խախտման վերաբերյալ ապացույցների կորստի: Ընդ որում, նկատելի է նաև, որ վիճաբանության ժամանակ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս

պատճառելու ոչ հազվադեպ դեպքերում քննությունը կենտրոնանում է բացառապես վերջինիս վրա, լավագույն դեպքում ուշացած ուշադրություն ցույց տալով խուլիգանության հատկանիշներին:

Հետևաբար, շարունակական ջանքեր են գործադրվում խուլիգանության դեպքերի նկատմամբ դատավարական վերաբերմունքը փոփոխության ենթարկելու ուղղությամբ՝ ենթադրելով ավելի արագ ու օպերատիվ աշխատանք՝ ուղղված հանցանք կատարած անձանց ողջ շրջանակը և հանցակազմի հատկանիշների առկայությունը պարզելուն, այն գիտակցությամբ, որ ինչպես առողջությանը վնաս պատճառելու, այնպես էլ խուլիգանության դեպքերի բացահայտումը և այն կատարած անձանց անվերապահ քրեական պատասխանատվության ենթարկման ապահովումը հնարավոր չէ դիտարկել միայն քրեական դատավարության անմիջական խնդիրների համատեքստում և պետք է փաստել, որ դրանք, շատ հաճախ կատարված լինելով Երևան քաղաքի ամենակենտրոնական ու ամենաբանուկ փողոցներում և խանգարելով մարդկանց հանգիստը, բերում են ավելի ընդհանուր բնույթի բացասական հետևանքների, մարդկանց մոտ առաջացնում անպաշտպանության զգացում, վախ սեփական անվտանգության համար:

2018թ. էականորեն աճել են ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեպքերը: Այսպես, 2018թ. այդ բնույթի դեպքերի թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 311-ով կամ 32%-ով /972-1283/, այդ թվում՝ 44-ով կամ 25%-ով /176-220/ աճել է մահվան ելքով դեպքերի թիվը:

Հանրապետությունում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերի առթիվ նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և այդ բնագավառում հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքների վերացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցներն ակտիվացնելու անհրաժեշտություն ունեն:

Ճանապարհատրանսպորտային պատահարները պայմանավորված են եղել ինչպես տրանսպորտային միջոցների և հետիոտների կողմից ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելով, այնպես էլ՝ այլ գործոններով: Մասնավորապես՝ միևնույն փողոցներում և խաչմերուկներում երբեմն կրկնվող ճանապարհատրանսպորտային պատահարներին նպաստող պայմաններ են հանդիսացել նաև վերոհիշյալ վայրերում գործող ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կարգավորման միջոցների անարդյունավետությունը, հետևաբար դրանք հետագայում փոփոխելու և վերանայելու անհրաժեշտություն է առաջացել:

Ընդ որում՝ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ճանապարհատրանսպորտային պատահարներիպատճառ են դառնում հետիոտնային անցումների գծանշումների անտեսանելիությունը, հետիոտնային կարգավորվող անցումների լուսացույցները տրանսպորտային միջոցների վարորդների տեսադաշտից դուրս գտնվելու հանգամանքը, տեսանկարահանող և լուսանկարահանող (արագաչափ) սարքերի բացակայությունը և այլն:

Այս կապակցությամբ ՀՀ դատախազության կոլեգիայի որոշմամբ ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է 2018թ. ընթացքում արձանագրված ՃԵԿ-ի կանոնները խախտելու դեպքերով կատարել ուսումնասիրություն, որի արդյունքում առանձնացնել ռիսկային հատվածները, այդ հատվածները նշագրել քարտեզների վրա, պարզել յուրաքանչյուր դեպքով, հատկապես ռիսկային հատվածներում արձանագրված հանցագործություններին նպաստած կամ դրա պատճառ դարձած հանգամանքները և դրանք

վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդագրեր ներկայացնել համապատասխան իրավասու մարմիններին:

Բացի դրանից, ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեմ տարվող քրեաիրավական պայքարի համաչափության, պատժողական քաղաքականության խստացման նկատառումներով ՀՀ դատախազությունում մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» համապատասխան օրենքի նախագիծ:

Այս հանցագործությունների շարունակական աճը, ինչ խոսք, պայմանավորված է նաև հանրապետությունում ավտոպարկի ծավալների հարաճուն աճով: Մասնավորապես՝ 2017 թվականին ՀՀ ներկրված շուրջ 39.282 տրանսպորտային միջոցի համեմատությամբ հաշվետու տարում արձանագրվել է ներկրման 41.5% աճ՝ 2018 թվականի ընթացքում ներկրվել է շուրջ 67.255 տրանսպորտային միջոց:

Հանցատեսակի աննախադեպ աճի պայմաններում չի կարելի չնշել վերոգրյալ պատճառների շարքում զգալի կշիռ ունեցող մեկ այլ ու շատ ավելի խորքային, հաղթահարման տեսանկյունից ավելի բարդ ու ժամանակատար գործոնի՝ երթևեկության մշակույթի, հանդուրժողականության ու զիջողականության պակասի մասին:

Այս հանցատեսակի դեպքերի նվազման վրա իր դրական ազդեցությունը կարող է ունենալ ՀՀ կառավարության նախաձեռնած՝ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման պատասխանատվության եղանակների բարեփոխումների փաթեթը, ինչպես նաև վարորդական իրավունքի տրամադրման գործընթացում ակնկալվող բարելավումները:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների դեպքերը հաշվետու տարում նվազել են 400-ով կամ 35.1%-ով՝ 738 դեպք նախորդ տարվա 1138-ի դիմաց, որոնցից իրացումը կամ իրացնելու նպատակով շրջանառությունը՝ 427 դեպք, նախորդ տարվա 612 դեպքի դիմաց, այսինքն՝ նվազումը կազմել է 185 դեպք կամ 30.2%:

Որպես այս բնույթի հանցագործությունների դեպքերի նվազման պատճառ կարելի է նշել ՀՀ կառավարության 2018 թվականիհունիսի 27-ի N 707-Ն «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ(հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանելու մասին» որոշման ընդունումը, որի համաձայն՝ մի շարք տեսակի թմրամիջոցների զգալի չափերի ստորին շեմը մի քանի անգամ բարձրացվել է:

Միաժամանակ պետք է փաստել, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը շարունակում են բնութագրվել լատենտայնության խիստ բարձր աստիճանով, և պաշտոնական վիճակագրության թվերը իրական պատկերը վստահաբար չեն արտացոլում: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ամենավտանգավոր դրսևորումները, իհարկե, կապված են դրանով զբաղվող կազմակերպված խմբերի կողմից նոր, հատկապես հանցավոր վարքագծի քողարկումը, վերահսկողությունից հնարավորինս դուրս գտնվելն ապահովող այնպիսի մեխանիզմների կիրառման հետ, ինչպիսիք են՝ սոցիալական ցանցերում հրապարակային գովազդի միջոցով ձեռքբերողին գտնելը, դրամական փոխանցումների միջոցով գումարը ստանալն ու դարձյալ վերահսկողությունից դուրս՝ թմրամիջոցը փոխանցելը: Ընդ որում, որպես կանոն, այս մեխանիզմում օգտագործվում են ՀՀ–ում ընդհանրապես

չբնակվող կամ նույնիսկ չգտնված անձանց անվամբ գրանցված հեռախոսահամարներ, որոնք վերջիններս ձեռք չեն բերել: Այսինքն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության կազմակերպված մեխանիզմների գործողությանը նպաստում է նաև բջջային օպերատորների կողմից հեռախոսաքարտերի վաճառքի նկատմամբ պատշաճ վերահսկողության բացակայությունը, ինչի արդյունքում այդ հեռախոսահամարները գրանցվում են այլ՝ դրա հետ առնչություն չունեցող անձանց տվյալներով, ինչը գրեթե անհնարին է դարձնում այդ շղթայի բացահայտումը: Այս խնդիրը լուծելու նպատակով համապատասխան միջնորդագիր է ներկայացվել, որը քննարկվել է և տրվել է պատասխան այն մասին, որ այդ մոտեցումը վերանայվել է:

2017 թվականի համեմատ, 2018 թվականին նվազել է անչափահասների հանցավորության ցուցանիշը: Եթե 2017 թվականին արձանագրվել է անչափահասի կողմից կամ նրա մասնակցությամբ կատարված հանցագործության 403 դեպք, ապա 2018թ. արձանագրվել է նման 359 դեպք, այսինքն՝ անչափահասի կողմից կամ նրա մասնակցությամբ կատարված հանցագործության դեպքերը 2018թ. նվազել են 44-ով կամ 12.0%-ով: 17-ով կամ 5.0%-ով նվազել է նաև հանցանք կատարած անչափահասների թիվը (341-324): Նշված հանգամանքները թույլ են տալիս փաստել, որ արձանագրվել է այս ոլորտի հանցավորության վիճակի բարելավում:

Անչափահասների հանցավորության նվազումը տեղի է ունեցել Երևան քաղաքում արձանագրված հանցագործությունների դեպքերի նվազման հաշվին, իսկ ՀՀ մարզերում արձանագրվել է անչափահասների կողմից կատարված հանցագործությունների դեպքերի աճ: Եթե 2017 թվականին Երևան քաղաքում արձանագրվել է անչափահասի կողմից կատարված 227, ապա 2018 թվականին՝ 167 դեպք կամ 60-ով պակաս: Նախորդ տարի մարզերում կատարված 176 դեպքի փոխարեն 2018 թվականին կատարվել է 192-ը կամ 16-ով ավելի:

Միաժամանակ մտահոգիչ է, որ նախորդ տարվա համեմատությամբ աճ է արձանագրվել սպանության, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու, ավազակության, բնակարանային գողության և կողոպուտի դեպքերով: Եթե 2017թ. անչափահասների կողմից կատարված սպանության և ավազակության դեպքեր չեն արձանագրվել, ապա 2018թ. արձանագրվել են նման 1-ական դեպքեր, եթե 2017թ. արձանագրվել է առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու 10 դեպք, ապա հաշվետու ժամանակաշրջանում արդեն 17 դեպք, եթե 2017թ. արձանագրվել է բնակարանային գողության 23 դեպք, ապա 2018թ.՝ 32 դեպք, եթե 2017թ. արձանագրվել է կողոպուտի 5 դեպք, ապա 2018թ.՝ արդեն 9 դեպք:

Մյուս հանցատեսակներով հիմնականում արձանագրվել է նվազում:

2018թ. 12 ամսվա ընթացքում հանցանք կատարած անձանցից 299-ը եղել են նախկինում հանցանք կատարած անձինք: 2017թ. տվյալների համաձայն՝ հանցագործություն կատարած անձանցից 470-ն են կրկնահանցագործ եղել:

Փաստորեն, 2017թ. համեմատ, 2018թ. կրկնահանցագործների թիվը նվազել է 171-ով կամ 36,4%-ով:

Կրկնահանցագործների կողմից հանցանք կատարելու ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Երևանի քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանում, որտեղ 2018թ. հանցանք է կատարել 52 կրկնահանցագործ կամ 2018թ. հանցանք կատարած կրկնահանցագործների 17,4%-ը, իսկ մարզերից՝ Շիրակի մարզում, որտեղ 2018թ. հանցանք է

կատարել 48 կրկնահանցագործ կամ 2018թ. հանցանք կատարած կրկնահանցագործների 16%-ը:

Գտնում ենք, որ կրկնահանցագործության դեմ պայքարի առավել արդյունավետության հիմքերը պետք է ամրապնդվեն երկու ուղղությունով՝ միաժամանակ և հավասարապես, այն է՝ կրկնահանցագործության դեմ պայքարի գործնական և տեսական առումներով:

Կրկնահանցագործության դեմ պայքարի գործնական ուղղությունը Հայաստանի Հանրապետության ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ N 1254-Ն որոշման հետևողական կատարումն է ՀՀ ոստիկանության կողմից:

Նշված որոշման 6-րդ բաժնի 26-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների տեղամասային տեսուչները հանցագործությունների և վարչական իրավախախտումների պրոֆիլակտիկա իրականացնելիս պարտավոր են անհատական պրոֆիլակտիկ աշխատանքներ իրականացնել և տեղամասի անձնագրում հաշվառել ազատազրկման վայրերից վերադարձած անձանց՝ նրանց կողմից հետագայում հանցագործությունների կատարումը բացառելու նպատակով: Այս կապակցությամբ հետևողականության և արդյունավետ աշխատանքի խթան կարող է հանդիսանալ դատախազի կողմից տվյալ տարածքը սպասարկող ոստիկանության վարչության պետից ամենամսյա պարբերականությամբ տեղեկությունների ստացումը՝ նախորդ ամսում ազատազրկման վայրերից վերադարձած անձանց (թվաքանակ, կատարած հանցանքի, տուժողի, վերջինիս մերձավորների և պատժի կրումից ազատված անձի փոխհարաբերությունների վերաբերյալ տեղեկություն) և նրանցից յուրաքանչյուրի հետ տվյալ ամսում կատարված պրոֆիլակտիկ աշխատանքների վերաբերյալ:

Բացի դրանից, կրկնահանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության ցուցանիշը, մեր կարծիքով, կարող է էլ ավելի բարձրանալ, եթե ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների տեղամասային տեսուչները հանցագործությունների պրոֆիլակտիկա իրականացնելիս անհատական պրոֆիլակտիկ աշխատանքներ իրականացնեն և տեղամասի անձնագրում հաշվառեն նաև բոլոր այն անձանց, որոնք քրեական պատասխանատվությունից ազատվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-9-րդ, 11-13-րդ կետերով կամ 37-րդ հոդվածով նախատեսված՝ ոչ արդարացնող հիմքերով կամ որոնց նկատմամբ նշանակվել է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ: Իր հերթին, վերը նշված առաջարկը պայմանավորում է ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ N 1254-Ն որոշման մեջ համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտությունը:

Կրկնահանցագործության դեմ պայքարի տեսական հիմքը, մեր կարծիքով, պետք է հանդիսանա հայեցողական քրեական հետապնդման քաղաքականության փոփոխությունը՝ կապված դիմողի կողմից բողոք չունենալու կամ կասկածյալի ու մեղադրյալի հետ տուժողի հաշտվելու պարագայում քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու պարտադիրության հարցի հետ:

2017թ. դեկտեմբերի 13-ի ՀՕ-325-Ն օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը լրացվեց 4-րդ մասով, համաձայն որի՝ «Անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց՝ դատախազն իրավասու է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններով հարուցելու քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ

լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում»:

Մեր կարծիքով, առավել ճիշտ կլիներ, եթե մասնավոր հետապնդման գործ հարուցելու դատախազի լիազորությունը կապվեր ոչ միայն կատարած դեպքի բնույթի և տուժողի անձի առանձնահատկությունների, այլ նաև հանցանքը կատարած սուբյեկտի քրեաիրավական նկարագրի հետ, մասնավորապես, այն հանգամանքի հետ, թե վերջին արարքը կատարելուն նախորդած ժամանակահատվածում արդյոք տվյալ անձի կողմից այլ, այդ թվում՝ մասնավոր հետապնդման գործի հարուցման հիմք հանդիսացող արարքներ կատարվել են, թե՝ ոչ:

Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի ներկայիս իրավակարգավորումների պարագայում անձը կարող է պարբերաբար կատարել նշված հոդվածի 4-րդ մասում նկարագրված իրավիճակի ներքո չգնահատվող բազմաթիվ արարքներ և ամեն անգամ ազատվել քրեական պատասխանատվությունից՝ դիմողի՝ բողոք չունենալու կամ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2018 թվականի ընթացքում արձանագրված 1579 դեպքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կամ 5-րդ կետով նախատեսված հիմքերով 933 անձի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է այն դեպքում, երբ նույն անձի նկատմամբ նշված հիմքերից որևէ մեկով նախկինում որոշումներ են կայացված եղել քրեական հետապնդումից հրաժարվելու վերաբերյալ:

Ակնհայտ է, որ նման իրավիճակը ոչ միայն չի նպաստում անձի մոտ հանցանք կատարելու նախահակվածության նվազմանը, այլ նաև ավելացնում է այդպիսի ձգտումը՝ ստեղծելով անպատժելիության զգացում, ինչը, բացի այն, որ կրկին հանցանք կատարելու էական նախադրյալ է հանդիսանում, նաև հղի է նույն անձի կողմից այլ՝ ավելի ծանր հանցագործություններ հետագայում կատարելու վտանգով:

Վերոգրյալի հիման վրա՝ գտնում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը նոր լրացման կարիք ունի՝ այն առումով, որ դատախազի կողմից քրեական գործ հարուցելու և հանրային կարգով քրեական հետապնդում իրականացնելու հանգամանքը պետք է առկախել ոչ միայն կատարված դեպքի բնույթից և տուժողի անձի առանձնահատկություններից, այլ նաև հանցանքը կատարած սուբյեկտի քրեաիրավական վերոնշյալ նկարագրից:

Նշված խնդիրը լուծելու նպատակով ՀՀ դատախազությունում մշակվել և ՀՀ Կառավարություն է ուղարկվել «Քրեական դատավարության օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին համապատասխան օրենքի նախագիծ:

Կրկնահանցագործների մասին խոսելիս անհրաժեշտ է նաև նշել, որ, նկատի ունենալով համաներման հետևանքով հանրապետությունում հանցագործության դեպքերի հնարավոր աճի հետ կապված ռիսկերը և դրանց նախականխման ու կանխման աշխատանքներն ակտիվացնելու անհրաժեշտությունը, ՀՀ ոստիկանությանը հանձնարարվել է ուժեղացված հսկողություն իրականացնել համաներմամբ պատժի հետագա կրումից ազատված, ինչպես նաև նախաքննության և դատաքննության ընթացքում քրեական հետապնդումը դադարեցված այն անձանց հետագա վարքագծի նկատմամբ, որոնք մեղադրվել են դիտավորությամբ կատարված հանրորեն առավել վտանգավոր արարքների համար և որոնց ազատության մեջ

գտնվելու ընթացքում դրսևորած վարքագիծը նախկինում աչքի է ընկել քրեածին բարձր ռիսկայնությամբ:

Այս ուղղությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում կատարվել է ուսումնասիրություն, որի արդյունքներով կազմվել և ոստիկանություն է ուղարկվել արդեն իսկ պատժի կրումից ազատված, վերը նշված ռիսկերը պարունակող անձանց ցանկ՝ նրանց մշտական օպերատիվ տեսադաշտում պահելու, այդ անձանց մոտ հանցանք կատարելու նախահակվածությունը նվազագույնի հասցնելուն ուղղված համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար:

Հարկ է նշել, որ համաներման կիրառման արդյունքում 628 անձ ազատվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից, որոնցից 66-ն արդեն կատարել է 121 հանցագործություն:

Ավարտելով հանցավորության վիճակի, հանցագործությունների առանձին տեսակների դինամիկայի վերաբերյալ վերլուծությունը՝ պետք է փաստել, որ չնայած 2018թ. արձանագրված հանցագործությունների դեպքերը աճել են, սակայն դա ամենևին չի վկայում երկրում քրեածին վիճակի վատթարացման մասին, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանցագործությունների թվի աճը առավելապես հանցագործությունների բացահայտման, հայտնաբերման, նաև հաշվառման գործընթացների բարելավման, քաղաքացիների առավել նախաձեռնողականության աճի արդյունք է: Նման հետևության հանգելու համար բավական է, օրինակ, համադրել լատենտային ու ոչ լատենտային հանցագործությունների ցուցանիշները և հաշվի առնել այն փոփոխությունները, որոնք կատարվել են հանցագործությունների հաշվառման գործընթացներում: Վիճակագրական տվյալներից հետևում է, որ աճ է արձանագրվում, մեծ մասամբ, նախկին տարիներին կատարված, սակայն հայտնի չդարձած հանցագործությունների նոր բացահայտումների տվյալներով: Ըստ հաշվառման կարգի՝ նման հանցագործությունները հաշվառվում են բացահայտված տարվա ցուցանիշներում:

Բացի դրանից, ամբողջ աշխարհում ընդունված է, որ եթե բացահայտվում են լատենտայնության բարձր ցուցանիշով աչքի ընկնող հանցատեսակները, ինչպես, օրինակ, կոռուպցիոն բնույթի հանցագործությունները, թմրանյութերի ապօրինի շրջանառությունը, ապա դա չի վկայում երկրում քրեածին վիճակի վատթարացման մասին:

Մյուս կողմից, ցուցանիշների վրա էական ազդեցություն են ունեցել հանցագործությունների հաշվառման գործընթացի իրավական բարեփոխումները: Գաղտնիք չէ, որ նախկինում առկա էր ոստիկանության կողմից «վիճակագրությունը բարելավելու» մղումով դեպքեր թաքցնելու արատավոր պրակտիկան, ինչի համար պատասխանատվության են ենթարկվել ոստիկանության բազմաթիվ աշխատակիցներ: Նման դրսևորումները անհամեմատ նվազել են: Բացի դրանից, շարունակական բարելավման են ենթարկվել քրեական հետապնդման մարմինների՝ հանցագործությունների բացահայտման, հայտնաբերման գործառույթների իրականացման մասնագիտական, տեխնիկական հնարավորությունները, կատարելագործվել են պրոֆիլակտիկ միջոցները և, ամենակարևորը, հատկապես լատենտային հանցագործությունների դեպքում զգալիորեն աճել է քաղաքացիների նախաձեռնողականությունը, իրավապահ մարմինների հետ համագործակցության մակարդակը:

Այդուհանդերձ, ընդհանուր միտումներին զուգահեռ, հանցագործությունների առանձին տեսակներ ունեն իրենց շարժընթացի առանձնահատուկ պատճառներն ու պայմանները,

որոնք յուրաքանչյուր ժամանակային կտրվածքով վերլուծության, դրանով պայմանավորված հակազդեցության քայլերի անհրաժեշտություն ունեն:

Հանցագործությունների դեպքերի աճին զուգընթաց՝ 2018թ. արձանագրվել է հանցագործությունների բացահայտման ցուցանիշի նվազում: Այսպես, 2018թ. բացահայտվել են արձանագրված 22.551 հանցագործություններից 14.114-ը կամ 62,6%-ը՝ այն դեպքում, երբ 2017թ. բացահայտվել է կատարված 20.285 հանցագործություններից 16.894-ը կամ 82.1%-ը: Այսինքն՝ 2017թ. համեմատ, 2018թ. հանցագործությունների բացահայտման ցուցանիշը նվազել է 19.5%-ով:

Միջին ծանրության՝ 6700 հանցագործությունից բացահայտվել է 3190-ը կամ 47.6%-ը, այն դեպքում, երբ 2017թ. այս հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 70.9%:

Ծանր՝ 3638 հանցագործությունից բացահայտվել է 1230-ը կամ 33.8%-ը, այն դեպքում, երբ 2017թ. այս հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 60.0%:

Հաշվետու ժամանակահատվածում նվազել է նաև առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը՝ 28.3%-ով. արձանագրված առանձնապես ծանր 224 հանցագործությունից բացահայտվել է 121-ը կամ 54%-ը (նախորդ տարի՝ 164-ից 135-ը կամ 82.3 %-ը):

Համեմետաբար բարձր ցուցանիշ է արձանագրվել առանձնապես ծանր հանցագործություններից սպանությունների և սպանության փորձերի բացահայտման ցուցանիշում, որոնք 2018թ. կազմել են 71.4% (սպանության 35 դեպքից բացահայտվել է 25-ը) և 73.3% (սպանության փորձի 30 դեպքից բացահայտվել է 22-ը):

Չնայած դրան՝ նշված ցուցանիշները դարձյալ զիջում են 2017թ. արձանագրված ցուցանիշներին: Այսպես, 2017թ. բացահայտվել է սպանության 49 դեպքից 36-ը կամ 73.5%-ը, սպանության փորձի 23 դեպքից՝ 21-ը կամ 91.3%-ը: Այսինքն՝ 2017թ. համեմատ, 2018թ. սպանության դեպքերի բացահայտման ցուցանիշը նվազել է 2.1%-ով, իսկ սպանության փորձի բացահայտման ցուցանիշը՝ 18.0%-ով:

2018թ. ընթացքում նվազել է նաև առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի բացահայտման ցուցանիշը. եթե 2017թ. արձանագրված՝ 194 դեպքից նույն ժամանակահատվածում բացահայտվել են 167-ը կամ 86,1%-ը, ապա 2018թ. ընթացքում՝ 191 դեպքից 140-ը կամ 73,3%-ը:

Փաստորեն, չնայած նրան, որ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը 2018թ. նվազել են, այս հանցատեսակի բացահայտման ցուցանիշը ոչ միայն չի բարելավվել, այլ ընդհակառակը 12.8%-ով նվազել է:

Միջին ծանրության կամ ծանր մարմնական վնասվածքի ելքով ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերի՝ 311-ով կամ 32%-ով աճին (972-128) զուգահեռ նվազել է բացահայտման տոկոսային ցուցանիշը՝ կազմելով 88,9%՝ 2017թ. արձանագրված 98,3%-ի փոխարեն:

Էապես՝ 31.9%-ով նվազել է նաև մահվան ելքով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 66,4%՝ 2017թ. արձանագրված 98.3%-ի փոխարեն:

2017թ. համեմատ, 2018թ. արձանագրվել է նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշի նվազում՝ 19,3%-ով (81,4%-62,1%), ինչն էլ ավելի է խորացնում վերը արտահայտված կասկածն այն մասին, որ, 2017թ. համեմատ,

2018թ. արձանագրված թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի նվազումը կարող է այդ դեպքերի լատենտայնության ուղղակի հետևանք լինել:

2017թ. համեմատ, 2018թ. բացասական դինամիկա է արձանագրվել նաև սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշում: Այսպես, եթե 2017թ. սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 69,2%, ապա 2018թ. նշված ցուցանիշը 23,8%-ով նվազել է՝ կազմելով 45,4%, ընդ որում, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշի անկումը հատկապես զգալի է բնակարանային գողությունների բացահայտման ցուցանիշի տեսանկյունից, որը, 2017թ. համեմատ, 2018թ. նվազել է 14,7%-ով՝ կազմելով 19,3%՝ 2017թ. արձաագրված 34%-ի փոխարեն:

Նույնը կարելի է արձանագրել նաև կողոպուտի բացահայտման ցուցանիշի վերաբերյալ, որը, 2017թ. համեմատ (70,9%), 2018թ. կազմել է 56,9%, այսինքն՝ 14%-ով պակաս, քան 2017թ.:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշում միակ դրական դինամիկան 2018թ. արձանագրվել է ավազակությունների բացահայտման ցուցանիշի տեսանկյունից, որը, չնայած նրան, որ հաշվետու ժամանակահատվածում ավազակության դեպքերի թվաքանակը նույնն է մնացել (46-46), 2017թ. համեմատ (69,6%), 2018թ. աճել է 2,1%-ով՝ կազմելով 71,7%:

Այսպիսով, փաստվում է, որ 2018թ. նվազել է հանցագործությունների բացահայտման պաշտոնական ցուցանիշը, ինչը, բնականաբար, մտահոգության առիթ է:

Սակայն հարկ է փաստել, որ 2018թ. այս վիճակագրական ցուցանիշը լիարժեք համադրելի չէ ինչպես 2017թ., այնպես էլ դրանից առաջ հանցագործությունների բացահայտման վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալների հետ:

Այսպես, բարեփոխումների արդյունքում 2018թ. սկսած (ՀՀ դատախազության նախաձեռնությամբ) հանցագործությունների բացահայտման հաշվառումը արձանագրվում է բացառապես անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին դատավարական որոշման առկայության դեպքում, իսկ նախորդ տարիներին հանցագործությունը համարվում էր բացահայտված, երբ հայտնի էր դառնում այն ենթադրաբար կատարած անձը:

Հաշվառման նոր համակարգը օբյեկտիվ պատկեր է արտացոլում և, հետևաբար, միանշանակ աշխատանքների բացասական ցուցիչ չի կարող համարվել:

Հայտնի է, որ հանցագործությունների չբացահայտման և, հակառակը, բացահայտման գրավականը անհետաձգելի քննչական և օպերատիվ-հետախուզական գործողությունների ժամանակին և պատշաճ կատարումն է, մինչդեռ հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման վրա շարունակում են լուրջ ազդեցություն ունենալ այնպիսի սուբյեկտիվ պատճառներ, ինչպիսիք են՝ քննիչի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող աշխատակիցների համագործակցության ոչ բավարար մակարդակը, կոնկրետ քրեական գործերով իրականացվող քննության որակը, քննչական և օպերատիվ-հետախուզական աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպումը:

Անվիճելի համարելով, որ հանցագործությունների բացահայտման վիճակի բարելավման հիմքում առաջին հերթին պետք է լինի հետաքննության մարմինների աշխատանքի կատարելագործումն ու դրա արդյունավետության բարձրացումը, չի կարելի սահմանափակվել այդ աշխատանքում առկա թերությունների մասին փաստարկներով և պետք է արձանագրել, որ գործ ունենք նաև օբյեկտիվ բարդությունների ու խոչընդոտների,

իսկ առանձին դեպքերում՝ ընդհուպ քրեադատավարական օրենքի իրավակարգավորումներից բխող խնդիրների հետ:

Օրինակ, հանցագործության դեպքերը պատկերող տեսագրությունները ստանալը երբեմն պայմանավորված է լինում բազմաթիվ, առերևույթ ուշադրության և քննարկման ոչ ենթակա տեխնիկական բարդություններով, որոնք, սակայն, լրջորեն ազդում են դրանցով կատարվելիք աշխատանքի օպերատիվության վրա: Խոսքը, մի կողմից, պետական նշանակության տեսագրող սարքերին հետաքննության մարմինների մատչելիության բացակայության, մյուս կողմից՝ հասարակության անդամների՝ հատկապես մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարում իրավապահ գործունեությանը աջակցելուց խուսափելու ու դրա արդյունքում այդ սարքերը վերցնելուն խոչընդոտելու մասին է:

Առկա խնդիրը մեղմելու նպատակով, Երևան քաղաքի դատախազի կողմից անհրաժեշտ հիմնավորումներով գրություն է հասցեագրվել Երևանի քաղաքապետին՝ առաջարկելով քննարկել Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող «Փարկինգ սիթի» ընկերության կողմից տեղադրված տեսագրող սարքերին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությանը անհրաժեշտ տեխնիկական կարգավորումներով ուղիղ մատչելիություն ապահովելու հարցը: Այդ հնարավորությունը տրամադրելու դեպքում ՀՀ ոստիկանության մայրաքաղաքի ստորաբաժանումը ընդհուպ կկարողանա դեպքից վայրկյաններ անց հետևելու հանցանք կատարած անձանց շարժին՝ նոր ու լուրջ հնարավորություն ունենալով կատարված հանցագործության բացահայտման համար:

Հանցագործությունների բացահայտման միջոցների շարքում աստիճանաբար արդյունավետության պակաս է արձանագրվում «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման դեպքում: Ակնհայտ է, որ նախ հետաքննության մարմինների ունեցած տեխնիկական հնարավորությունները ժամանակի ընթացքում անփոփոխ են մնում հանցագործությունների թվի տարեկան կայուն աճի պայմաններում, բացի դրանից, առկա տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս վերահսկելու սովորական բջջային կապով իրականացվող հեռախոսազրույցները այն դեպքում, երբ բջջային հեռախոսների համապատասխան ծրագրային հավելվածները ավելի շատ են օգտագործվում և դրանք վերահսկել, որպես կանոն, հնարավոր չէ:

Գաղտնիք չէ, որ խուլիգանության և մարմնական վնասվածք պատճառելու դեպքերի, ավազակության, կողոպուտի և գողությունների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների մասնակիցների շրջանակը պարզելու, կոնկրետ անձանց դրանց մասնակից լինելու հանգամանքը ապացուցողական բարձր չափանիշով ստուգելու հիմնական եղանակներից մեկը այդ անձանցից նմուշներ ստանալը, քննման, փորձաքննության ենթարկելն է՝ համապատասխանաբար մարմնական վնասվածքների առկայությունը, թմրամիջոց օգտագործած լինելը և այլ հանգամանքներ պարզելու նպատակով:

ՀՀ քրեական դատավարության և քրեական օրենսգրքերի՝ հիմնախնդրին վերաբերող իրավակարգավորումները, մասնավորապես, վերը նշված գործողությունները հարկադրաբար կատարելու հնարավորություններ ուղղակիորեն նախատեսված չլինելը, ավելին՝ նմուշ չտալն ու փորձաքննության չենթարկվելը առանձին ձևակերպումներով որպես լռելու իրավունքի տարր ներկայացնելը, դրանք տալուց հրաժարվելու համար քրեական պատասխանատվություն նախատեսված չլինելը բերում են հանցանք կատարած անձի ազատ հնարավորության՝ խոչընդոտել այդ ապացույցները ձեռք բերելուն: Եվ դա այն դեպքում, երբ լռելու իրավունքի բովանդակության վերաբերյալ եվրոպական իրավունքն

ամբողջությամբ այլ մոտեցում ունի և դրանից առավել քան հստակ է, որ լռելու իրավունքը վերաբերում է բացառապես ցուցմունք տալուն և նյութեր չտրամադրելու, նմուշներ չտալու, փորձաքննության ու քննման չենթարկվելու հնարավորություն չի ենթադրում: Ընդ որում, այս մոտեցման հիմքում ընկած է ոչ միայն լռելու իրավունքի ներքին բովանդակության մեկնաբանությունը, այլև այն, որ, ըստ եվրոպական դատարանի, այդ իրավունքի չափազանց լայն մեկնաբանությունը կխաթարի հանցավորության դեմ պայքարը, կզրկի իշխանություններին հանցագործությունները բացահայտելու գործիքակազմից: Նշված խնդիրները լուծելու նպատակով ՀՀ քննչական կոմիտեի կողմից նախապատրաստվել է «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» համապատասխան օրենսդրական փաթեթ, որը սահմանված կարգով շրջանառվել է՝ կարծիքի ներկայացվելով նաև ՀՀ դատախազություն:

Գտնում ենք, որ գործնականում առաջացող վերը նկարագրված խնդիրները շուտափույթ լուծման նպատակով անհրաժեշտ է դատախազության կողմից ներկայացված նկատառումների հաշվառմամբ լրամշակել հիշյալ օրենսդրական փաթեթը ու արագացնել դրա ընդունմանն ուղղված օրենսդրական գործընթացի մյուս փուլերը:

Ավարտելով հանցագործությունների բացահայտման ցուցանիշների վերաբերյալ վերլուծությունը՝ պետք է փաստել, որ ավանդաբար, նմանատիպ վերլուծությունների շրջանակներում ուշադրության են արժանացել դրանց առարկայական ու տեղային առանձնահատուկ դրսևորումները, առավելապես ընդգծվել են հետաքննության մարմինների աշխատանքի թերությունները, արվել են մասնավոր հետևություններ, հիմք են դարձել շտկելու այս կամ այն բացասական ցուցանիշը բարելավելուն ուղղված միջոցառումները: Բայց ներկայացված վերլուծությունը, կարծում ենք, բավարար է արձանագրելու, որ հանցավորությունը ակնհայտորեն ոչ միայն և միգուցե ոչ այնքան քանակական, որքան որակական փոփոխությունների է ենթարկվել, այդպիսի փոփոխություններ են կրել հանցագործությունների պատճառներն ու դրանց նպաստող պայմանները, կատարելագործվել են դրանց կատարման մեխանիզմները, հանցավորությունը դարձել է ավելի համակարգված ու կազմակերպված, ինչը ենթադրում է, որ փոփոխվող ու կատարելագործվող հանցավորությանն արձագանքելու նոր միջոցների մասին խոսելու ժամանակն է:

Մեր համոզմամբ, հանցագործությունների հակազդման գործընթացը չի կարող սահմանափակվել տարբեր հաշվետու ժամանակահատվածներում արձանագրված կոնկրետ մտահոգությունների չեզոքացմամբ և ենթադրում է ավելի համալիր, ընդգրկուն ու «պայքար հանցավորության դեմ» հասկացության բովանդակությանը համապատասխան մոտեցում: Հանցավորության դեմ պայքարը պետք է իրականացվի պաշտոնապես ճանաչված քաղաքականությամբ՝ հաստատված ազգային ռազմավարական ծրագրի հիման վրա, որում հստակեցված են դրա բոլոր դերակատարների ծրագրային անելիքները՝ տարրական կրթություն ապահովող դպրոցից մինչև ՀՀ դատախազություն:

2. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

2018թ. ընթացքում հանրապետությունում նախապատրաստվել է 54.245 նյութ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 46.103-ի դիմաց: Փաստորեն՝ նախապատրաստված նյութերի թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 8142-ով, ինչը կարելի է պայմանավորել և՛ 2018թ. հանրապետությունում արձանագրված հանցագործության դեպքերի թվի աճով, և՛ դեպքերի ստուգումը հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին հաղորդումների գրանցամատյանում գրանցելուց հետո, համապատասխան դեպքերում դրանց ստուգումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով իրականացնելու հարցում դատախազության կողմից դրսևորած հետևողականությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստված 54.245 ավարտված նյութից 33.929-ով կամ 62.5%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից 26.499-ը կամ 78.1%-ը՝արդարացման, 7430-ը կամ 21.9%-ը՝ ոչ արդարացման հիմքով:

Համեմատության համար նշենք, որ 2017թ. նախապատրաստված 46.103 ավարտված նյութից 30.524-ով կամ 66.2%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից 23.409-ը կամ 76.7%-ը՝ արդարացման, 7115-ը կամ 23.3%-ը՝ ոչ արդարացման հիմքով:

2018թ. ընթացքում նախապատրաստված 54.245 նյութից 18.522-ով կամ 34.1%-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 356-ը կամ 1.9%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում: Նշված 356 քրեական գործից 30-ը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազի կողմից, մյուսները՝ հսկող դատախազների կամ նրանց անմիջական վերադասների կողմից:

Համեմատության համար նշենք, որ 2017թ. ընթացքում նախապատրաստված 46.103 նյութից 14.380-ով կամ 31.2%-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 295-ը կամ 2.0%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում: Նշված 295 քրեական գործից 31-ը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազի, մյուսները՝ հսկող դատախազների կամ նրանց անմիջական վերադասների կողմից:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացվելու արդյունքում 2018թ. հարուցված հիշյալ 356 քրեական գործից 18-ը կամ 5.0%-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 32-ը կամ 9.0%-ը միացվել է այլ գործերի, 128-ով կամ 35.9%-ով վարույթը կարճվել է, 51-ով կամ 14.2%-ով՝ կասեցվել, 127-ով կամ 35.7%-ով նախաքննությունը շարունակվել է 2019թ. հունվարի 1-ի դրությամբ:

Ուշադրության է արժանի այն, որ 2018թ. քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու արդյունքում 18 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Փաստորեն, 18 դեպքում քրեական դատավարության խնդիրները իրագործվել են բացառապես դատախազի հետևողականության և դատախազական պատշաճ հսկողության շնորհիվ:

Համեմատության համար նշենք, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացվելու արդյունքում 2017թ. հարուցվել է 286 քրեական գործ, որոնցից 10-ը կամ 3.5%-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 3-ը կամ 1.4%-ն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու հարցը քննելու, 5-ը կամ 1.7%-ը միացվել է այլ գործերի, 214-ով կամ 74.8%-ով վարույթը կարճվել է, 12-ով կամ 4.2%-ով՝ կասեցվել, 42-ով կամ 14.7%-ով նախաքննությունը շարունակվել է 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Նշենք նաև, որ 2018 թվականին վերացվել է քրեական գործ հարուցելու մասին 61, իսկ 2017 թվականին՝ 14 որոշում:

2017թ. համեմատ, 2018թ. նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելու մասին որոշումների քանակը աճել է 4142-ով (14.380-18.522) կամ 28.8%-ով: 70-ով կամ 23.7%-ով աճել են նաև քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները վերացնելու դեպքերը (295-365), 3405-ով կամ 11.2%-ով (30.524-33.929)՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների թիվը, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ ոչ մեծ ծանրության մասնավոր մեղադրանքի դեպքերի հաշվառման աշխատանքների բարելավմամբ:

2018թ. ընթացքում հանրապետության նախաքննության մարմինների կողմից քննվել է 27.684 քրեական գործ (2017թ.՝ 22.007): Նախորդ տարվա համեմատությամբ քննված քրեական գործերի թիվը աճել է 5677-ով կամ 25.8%-ով:

2018թ. ՀՀ նախաքննության մարմինների քննիչների տարեկան ծանրաբեռնվածությունը կազմել է 51.5 քրեական գործ, նախորդ տարվա 42.3 քրեական գործի դիմաց, իսկ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների տարեկան զբաղվածությունը կազմել է 102.9 քրեական գործ, նախորդ տարվա 81.8 քրեական գործի դիմաց:

2018թ. քննված 27.684 քրեական գործից 2984-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2017թ.՝ 3094), որը 110-ով կամ 3.6%-ով պակաս է, քան 2017 թվականին, իսկ 24.700-ը վարույթ է ընդունվել 2018թ. ընթացքում (2017թ.՝ 18.911), որը 5789-ով կամ 30.6%-ով ավելի է, քան 2017 թվականին:

2018թ. վարույթ ընդունված 24.700 քրեական գործից 18.438-ը հարուցվել է հաշվետու ժամանակաշրջանում (2017թ.՝ 13.861). այդ թվում՝ 6680-ը հարուցվել է նախաքննության մարմինների (2017թ.՝ 6392), 10.496-ը՝ հետաքննության մարմինների (2017թ.՝ 6810), իսկ 1262-ը՝ դատախազների կողմից (2017թ.՝ 659):

Էապես ակտիվացել է հետաքննության փուլը՝ հետաքննության մարմինների աշխատանքի վերաբերյալ կատարված բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում դատախազության կողմից մշտապես շեշտադրվել է հանցագործության բացահայտման նպատակով անհետաձգելի քննչական գործողությունների օպերատիվ կատարումը, հետաքննության և նախաքննության մարմինների կողմից հաճախ քննչական նույնանման գործողությունների կրկնության բացառումը:

603-ով կամ 91.5%-ով /659-1.262/ աճել են դատախազների կողմից քրեական գործեր հարուցելու դեպքերը, ինչը ևս միտված է հանցագործությունների արագ բացահայտման, միաժամանակ վարույթի մասնակիցների իրավունքների ապահովման, քաղաքացիներին ավելորդ անհարմարություններից զերծ պահելու նպատակների իրականացմանը: Այսպես.

- քրեական գործի հարուցման հիմքերի առերևույթ առկայության օպերատիվ ստուգումը, դրանց արդյունքներով անհապաղ քրեական գործի հարուցումը նախ բարձրացնում է հանցագործությունը տաք հետքերով բացահայտելու, հանցագործության

հետքերը պահպանելու, արձանագրելու, ապացուցողական անհրաժեշտ բազան ապահովելու կարևորագույն խնդրի պատշաճ իրագործումը:

- Վերը նշվածի հապաղումը, միաժամանակ, հաճախ հանգեցնում էր քրեադատավարական նույնաբնույթ գործողությունների կրկնության: Մասնավորապես, հետաքննության մարմինները նախ բացատրություն էին վերցնում անձանցից, որից հետո նախաքննական մարմինները նույն անձանցից արդեն ցուցմունքներ էին վերցնում, ինչը հանգեցնում էր քաղաքացիների լրացուցիչ անհարմարությունների, երբեմն ապացուցողական նշանակության տվյալների կորստի:

Որդեգրված նոր մոտեցումները բացառում են նաև հիշյալ բացասական դրսևորումները:

2018թ. ավարտվել է 10.121 քրեական գործի վարույթ (2017թ.՝ 9127), այդ թվում՝ 2787-ը՝ 3773 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2017թ.՝ 3328 քրեական գործ 4400 անձի վերաբերյալ)[2], 74-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2017թ.՝ 63), 7260-ը կարճվել է (2017թ.՝ 5736), որոնցից 3183-ը՝ արդարացնող (2017թ.՝ 2925), 4077-ը՝ ոչ արդարացնող հիմքով (2017թ.՝ 2811) :

Հաշվետու ժամանակաշրջանում 8237 քրեական գործով վարույթները կասեցվել են (2017թ.՝ 6963), որոնցից 6523-ը՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու ենթակա անձի անհայտ լինելու (2017թ.՝ 4871), 1644-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու (2017թ.՝ 1928), իսկ 70-ը՝ այլ հիմքերով (2017թ.՝ 164):

2018թ. 1145 քրեական գործ ուղարկվել է ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնող այլ մարմիններ (2017թ.՝ 962), 2615 քրեական գործ միացվել է (2017թ.՝ 1841), քրեական գործ հարուցելու մասին 15 որոշում վերացվել է դատախազի կողմից (2017թ.՝ 5):

2018թ. վերջին անավարտ է մնացել 5551 քրեական գործ (2017թ.՝ 3109), ինչը 2442-ով կամ 78.5%-ով ավելի է, քան 2017 թվականին:

2018թ. ընթացքում դատախազների կողմից ստուգվել է վարույթը կարճելու մասին 10.323 որոշման օրինականություն: 2018 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 254 որոշում կամ ստուգված որոշումների 2.5%-ը, որոնցից 22-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
2. քրեական հետապնդում չիրականացնելու մասին 41 որոշում՝ 56 անձի նկատմամբ, որոնցից 1-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 21 որոշում՝ 19 կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, որոնցից 1-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Համեմատության համար նշենք, որ 2017 թվականին ստուգվել է վարույթը կարճելու մասին 7821 որոշման օրինականությունը: 2017 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 271 որոշում կամ ստուգված որոշումների 3,5%-ը, որոնցից 29-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

---

[2] Մեղադրական եզրակացությամբ արդարացնող գործերի և անձանց վերաբերյալ վիճակագրական տ
առանց կրկնակիի դատարան ուղարկված վիճակագրական «Քրեական գործերի հանձնում, խմբագրում և դատարան ուղարկում» 1 ամսաթերթ
Մ) հաշվետվությունները՝ հաշվետվության ժամանակաշրջանում դատախազությունում հետաքննություն իրականացնող 12 այլ մարմիններ 52 անձանց նկատմամբ 52 վ
վիճակագրական տվյալները: Մասնանշված տողում արտացոլված թվերն արտացոլում են
ընդունված թվերին, որոնք էլ համապատասխանեցվելիս են վերլուծ ենթակա վերջին հինգ տարվա (հաշվետու ժամանակաշրջանում ստացված թղթերի
1-ին բաժնի մեղադրական եզրակացությունների 2-ի տողերի գումարի բաշխում

2. քրեական հետապնդում չիրականացնելու մասին 37 որոշում, որոնցից 2-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 23 որոշում, որոնցից 4-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 235 բողոք (2017թ.՝ 385), որոնցից բավարարվել է 18-ը (2017թ.՝ 48) կամ 7.6%-ը (2017թ.՝ 12.5%):

Նույն ժամանակահատվածում քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների դեմ բերվել է 63 բողոք (2017թ.՝ 17): Նշված բողոքներից բավարարվել է 5-ը (2017թ.՝ 1):

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ նույն ժամանակահատվածում բերվել է 32 բողոք, որոնցից 6-ը բավարարվել է, իսկ 2017 թվականին այդպիսի բողոք չի բերվել:

Փաստենք, որ քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերված բողոքների թիվը 2018թ. նվազել է 72-ով կամ 18.0%-ով՝ կազմելով 330 բողոք՝ նախորդ տարվա 402-ի դիմաց: Բերված բողոքներից բավարավել է 29-ը կամ 9.0%-ը (2017թ.՝ 49 կամ 12.2 %):

Փաստորեն, 2018թ. ստուգվել է վարույթը կարճելու մասին 2502 որոշում ավելի, քան 2017թ., սակայն արդյունքում վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ կայացված որոշումների թիվը նվազել է 17-ով:

2018թ. ստուգվել է վարույթը կասեցնելու մասին 13.723 որոշման օրինականություն, ինչը 3231-ով կամ 24.0%-ով ավելի է նախորդ տարվա նույն ցուցանիշից (2017թ.՝ 10.492):

Հաշվետու ժամանակահատվածում վարույթը կասեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 51 բողոք, որոնցից 5-ը բավարարվել է: Նախորդ տարի բերվել է նման 32 բողոք, որոնք մերժվել են: Նախորդ տարվա համեմատ բողոքների թիվը աճել է 19-ով կամ 37.2%-ով:

2018 թվականին վարույթը կասեցնելու մասին ստուգված 13.723 որոշումից 260-ը կամ 2.0%-ը վերացվել է (2017թ.՝ 10.492-ից վերացվել է 219-ը կամ 2.1%-ը):

Արդյունքում՝ 2018 թվականին՝

1. քրեական գործով վարույթը կասեցնելու մասին վերացվել է 41-ով ավելի որոշում,

2. ստուգված որոշումների թվում քրեական գործերով վարույթը կասեցնելու մասին որոշումների վերացման տոկոսային ցուցանիշը նվազել է 1.9%-ով (2.1-0.2),

3. քրեական գործով վարույթը կարճելու մասին վերացվել է 17-ով պակաս որոշում,

4. քրեական գործով վարույթը կարճելու մասին ստուգված որոշումների թվում վերացումների տոկոսային ցուցանիշը նվազել 1.0%-ով (3.5-2.5),

5. քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 72-ով կամ 21.8%-ով պակաս բողոք:

2018թ. քրեական գործ հարուցելը մերժելու, քրեական գործով վարույթը կասեցնելու, կարճելու, քրեական հետապնդում չիրականանացնելու մասին կայացված որոշումների դեմ վարույթի մասնակիցների կողմից դատարան բերվել է 375 բողոք, նախորդ տարվա 1072-ի դիմաց:

Պետք է փաստել, որ նման ցուցանիշները արձանագրվել են օրինականության ամրապնդման նպատակով քրեական հետապնդման մարմինների փոխհամագործակցության արդյունավետության բարձրացման շնորհիվ:

Վիճակագրական տվյալները փաստում են քրեական գործերով հետաքննության և նախաքննության օրինականության վիճակի էական բարելավման մասին, ինչն իր ազդեցությունն է ունեցել քրեական հետապնդման մարմինների նկատմամբ դատավարության մասնակիցների վստահության ավելացման վրա:

2018թ. ընթացքում դատախազների կողմից քրեական գործերով տրվել է 2243 ցուցում, նախորդ տարվա 2341 ցուցումի դիմաց, այսինքն ցուցումների թիվը նվազել է 98-ով կամ 4.2%-ով:

2018թ. ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 320 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 136 անձ ենթարկվել է կարգապահական տույժի, իսկ մեկը ենթարկվել է քրեական պատասխանատվության:

Համեմատության համար նշենք, որ 2017թ. ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 212 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 138 անձ, իսկ 4-ը՝ ենթարկվել է քրեական պատասխանատվության:

2018թ. ընթացքում ձերբակալվել է 1019 անձ, նախորդ տարվա 968-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվը աճել է 51-ով կամ 5.3%-ով: Ձերբակալումից ազատվել է 346 անձ՝ 2017թ. 209-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալումից ազատված անձանց թիվը աճել է 137-ով կամ 65.6%-ով:

2018թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 870 միջնորդություն (այս ցուցանիշը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով մեղադրյալների վերաբերյալ տվյալները), որոնցից բավարարվել է 804-ը կամ 92.4%-ը, մերժվել՝ 66-ը կամ 7.6%-ը: Ներկայացված միջնորդություններից 211-ի կամ 26.2%-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Համեմատության համար նշենք, որ 2017թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1087 միջնորդություն, որոնցից բավարարվել է 998-ը կամ 91.8%-ը, մերժվել՝ 89-ը կամ 8.2%-ը: Ներկայացված միջնորդություններից 129-ի կամ 12.9%-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Այսպիսով, 2017 թ. համեմատ, 2018 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը նվազել է 217-ով կամ 20.0%-ով:

2018թ. ընթացքում կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու դեպքերն աճել են 82-ով կամ 63.6%-ով:

Էականորեն աճել են նաև կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննության արդյունքում գրավ կիրառելու որոշումները:

Մասնավորապես, 2018թ. ընթացքում դատարան ներկայացված և բավարարված՝ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդություններից 56-ի դեպքում կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Մինչդեռ 2017թ. գրավ է կիրառվել կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդություններից 15-ի քննության արդյունքում, ինչը 41-ով կամ 273**%-**ով քիչ է 2018թ. համեմատությամբ:

Պետք է փաստել, որ դատախազության կողմից էլ ավելի է խստացվել անչափահասի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն ներկայացնելու քրեադատավարական պրակտիկան: Մասնավորապես, դատախազներին հանձնարարվել է անչափահաս մեղադրյալների նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը լուծելիս առաջնահերթ քննարկել «հսկողության հանձնել» խափանման միջոցը կիրառելու հարցը: Առաջին անգամ միջին ծանրության և ծանր հանցագործություն կատարած անչափահասների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրել բացառապես այն դեպքերում, երբ քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալները փաստում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործողությունները մեղադրյալի կողմից արդեն իսկ կատարված լինելու մասին: Նման մոտեցումը հանգեցրել է նրան, որ գործնականում համարյա բացառվել են անչափահասների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու դեպքերը:

2018 թվականի ընթացքում հետախուզվել է 15.924 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 2410-ը կամ 15.1 %-ը:

2017 թվականի համեմատությամբ 2018 թվականին հետախուզվողների թիվն ավելացել է 665-ով կամ 4.3%-ով: Հետախուզվողների հայտնաբերման քանակական ցուցանիշը բարելավվել է 576-ով, իսկ տոկոսայինը՝ 3.1-ով:

Ընդհանուր հանցատեսակների մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների գերակշիռ թիվը հաշվի առնելով՝ նույն տվյալները ներկայացվում են առանց նշված հոդվածով հետախուզվողների տվյալների: Այսպես.

2017 թվականին հետախուզվել է 3407 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1152-ը կամ 33.81%-ը:

2018 թվականին հետախուզվել է 3733 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1159-ը կամ 31.04 %-ը:

Փաստորեն՝ 2017 թվականի համեմատությամբ 2018 թվականին հետախուզվողների թիվն ավելացել է 326-ով կամ 9.6%-ով:

2017 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվել է 11.852 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 682-ը կամ 5.75%-ը:

2018 թվականին նշված հոդվածով հետախուզվել է 12191 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1251-ը կամ 10.26 %-ը:

Փաստորեն՝ 2017 թվականի համեմատությամբ 2018 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների թիվն ավելացել է 339-ով /2.9%-ով/, հայտնաբերման քանակական ցուցանիշն ավելացել է 569-ով, իսկ տոկոսային ցուցանիշը բարելավվել է 4.5-ով:

2018 թվականին նախկին տարիներին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով կասեցված քրեական գործերի նյութերի ստուգման արդյունքում հայտնաբերված թերություններն ու բացթողումները վերացնելու նպատակով, քրեական գործերով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից քննիչներին տրվել է 89 ցուցում, իսկ հետաքննության մարմնին՝ 99 հանձնարարություն:

Տարի	Հետախուզվել են			Հայտնաբերվել են			
	ՀՀ քր. օր. 327-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդվ.	Ընդ. տարվա ընթացքում	ՀՀ քր. օր. 327-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդվ.	Ընդ.	Հայտն. %-ը
2017	11852	3407	15259	682	1152	1834	12
2018	12191	3733	15924	1251	1159	2410	15.1

Այսպիսով, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ հետախուզման մեջ է մնացել 13514 մեղադրյալ կամ 89-ով ավելի, քան նախորդ տարի /13.425/, որոնցից 10.940-ը հետախուզվում են ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ /նախորդ տարվա՝ 11.170-ի համեմատությամբ՝ 230-ով պակաս/, իսկ 2574-ը /նախորդ տարվա 2255-ի համեմատությամբ՝ 319-ով ավելի/՝ այլ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարելու համար:

ՀՀ գլխավոր դատախազությունը, ապահովելով հետախուզական աշխատանքների օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների շարունակականությունը, 2018 թվականին ամփոփել է դատից խուսափող ամբաստանյալների և պատժից խուսափող դատապարտյալների նկատմամբ հետախուզական աշխատանքների կազմակերպման ու իրականացման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության վիճակը:

Ամփոփման և վերլուծության արդյունքում պարզվել է, որ հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման վիճակը անհրաժեշտ մակարդակի վրա չի գտնվում, իսկ մի շարք դեպքերում հիշյալ աշխատանքների կատարման ընթացքում թույլ են տրվում այնպիսի խախտումներ, թերություններ և բացթողումներ, որոնցով պայմանավորված՝ կա՛մ անձինք խուսափում են քրեական պատասխանատվությունից, կա՛մ անհիմն շարունակում են ոստիկանությունում հաշվառված մնալ որպես հետախուզվողներ: Հայտնաբերվել են նաև մի շարք ընդհանուր բնույթի թերություններ և բացթողումներ, որոնք հիմնականում կապված են հետախուզական աշխատանքների ոչ պատշաճ փաստաթղթավորման հետ:

Հայտնաբերված խախտումները վերացնելու և դրանք հետագայում բացառելու նպատակով համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ նախաքննական մարմինների ղեկավարներին:

Բացի դրանից, ուսումնասիրությունը փաստել է մի շարք իրավական ակտերի անհստակություններ և բացեր, որոնք հնարավորություն են տվել թույլ տալու խախտումներ, նպաստելու անձանց՝ քրեական պատասխանատվությունից խուսափելուն:

Նշված իրավական ակտերի շարքում է «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշումը, որի կարգավորումների համաձայն՝ ՀՀ ՍԷԿՏ համակարգին տրամադրվում են խափանման միջոցներից միայն չհեռանալու մասին ստորագրության վերաբերյալ տվյալները, եթե այդ խափանման միջոցը կիրառելու վերաբերյալ որոշումը կայացրել է քննիչը կամ դատախազը:

Նշված կարգավորումը խնդրահարույց է նախ և առաջ՝ մյուս խափանման միջոցները չնախատեսելու և այդ խափանման միջոցների վերաբերյալ տվյալների տրամադրումը քրեական հետապնդման մարմնի կողմից կայացված լինելու պայմանի նախատեսման առումով:

Հնարավոր է՝ ՀՀ ՍԷԿՏ համակարգին տրամադրվող տվյալների ցանկում այլ խափանման միջոցների չնախատեսումը պայմանավորված է քրեադատավարական հակակշիռների՝ սանկցիաների առկայությամբ, օրինակ՝

գրավի կիրառման դեպքում եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք, դատախազը դիմում է դատարան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու միջնորդությամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մաս),

երաշխավորության դեպքում՝ երաշխավորողի կողմից մուծված դրամական գումարը քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վերածվում է պետության եկամտի, եթե երաշխավորողը չի կատարել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը ապահովելու իր պարտավորությունը /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 147-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ/, բացի դրանից ՀՀ քրեական օրենսգրքի 346-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում անձնական երաշխավորի կողմից իր ստանձնած պարտավորությունները չարամտորեն չկատարելու համար,

հսկողության հանձնելու և հրամանատարության հսկողությանը հանձնելու դեպքերում իրենց պարտականությունները չկատարելու համար հսկողություն իրականացնելու պարտավորություն ստանձնած անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 4-րդ մաս, 149-րդ հոդվածի 5-րդ մաս),

կալանավորման դեպքում՝ մեղադրյալն արդեն իսկ գտնվում է արգելանքի տակ, իսկ եթե չի գտնվում, ենթադրվում է, որ պետք է նրա նկատմամբ հայտարարված լինի հետախուզում, իսկ հետախուզման մեջ գտնվող անձանց տվյալները նշված որոշումն արդեն իսկ նախատեսում է ՀՀ ՍԷԿՏ համակարգին տրամադրվող տեղեկությունների ցանկում:

Նշենք, սակայն, որ չնայած նշված հակակշիռներին և դատավարական սանկցիաներին, պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով փաստվել է, որ դրանք գործուն միջոցներ չեն և, այդ խափանման միջոցները կիրառված լինելու պայմաններում, մեղադրյալները, ամբաստանյալները և դատապարտյալները լքել են ՀՀ սահմանը:

Նման իրավիճակը հաստատում է անհրաժեշտությունն այն բանի, որ անձի նկատմամբ ոչ միայն ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց ընտրելու, այլ նաև քրեական հետապնդում սկսելու դեպքում այդ անձի տվյալները պետք է տրամադրվեն ՀՀ ՍԷԿՏ համակարգին:

Բացի դրանից, հիշյալ որոշմամբ կարգավորված չէ նաև համապատասխան տվյալները ՀՀ ՍԷԿՏ համակարգին տրամադրելու արդյունքում անձի իրավունքների սահմանափակումը վերացնելու հարցը՝ անհրաժեշտությունը վերանալու դեպքում:

Նշված հարցի կարգավորման անհրաժեշտությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ՝ փաստելով, որ խափանման միջոցի վերացման մասին որոշման վերաբերյալ տեղեկությունը ՀՀ ՍԷԿՏ համակարգին տրամադրելու պարտականություն սահմանված չէ, ինչը հարցականի տակ է դնում անձի իրավունքի իրականացման որոշակիությունը: Նման դեպքում ՀՀ

Սահմանադրական դատարանը «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող նշված որոշման մեջ բացահայտված սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ «խափանման միջոցի կիրառման մասին տեղեկությունները՝ կիրառման պահին» ՍԷԿՏ համակարգում տեղադրելու պարտականությունը պետք է համահունչ լինի «խափանման միջոցի վերացման մասին տեղեկությունները՝ խափանման միջոցի վերացման պահին» ՍԷԿՏ համակարգ ուղարկելու պարտականությանը: Անձի տեղաշարժման ազատությունը սահմանափակելու պարագայում այն պետք է իրացվի բացառապես խափանման միջոցի վերացման մասին որոշում ընդունելու վերաբերյալ տեղեկությունը ևս նույն համակարգում տեղադրելու՝ իրավասու մարմնի հստակ պարտականության իրացման և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խոչընդոտները վերացնելու պայմանով:

Նման պայմաններում ակնհայտ է, անձին ձերբակալելու կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումներից զատ, նաև այդ որոշումները վերացնելու մասին տվյալները ՀՀ ՍԷԿՏ համակարգին տրամադրելու անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը ՀՀ դատախազությունում նախապատրաստվել և ՀՀ արդարադատության նախարարություն է ուղարկվել ՀՀ Կառավարության վերը նշված որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Կառավարության որոշման նախագիծ, որը ներկայումս քննարկման փուլում է:

Բացի դրանից, փոփոխության և լրացման է ենթակա նաև «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշումը:

Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը» և «Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես» դրույթները ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ հետաքննության կամ նախաքննության մարմինը կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես կարող է վերցնել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշման առկայության դեպքում:

Նման ձևակերպումից կարող է բխել այն հարցադրումը, թե արդյոք հնարավո՞ր է ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման մեջ չնշված խափանման միջոցների կիրառման պարագայում անձնագիրը վերցնելը համարվել իրավաչափ:

Այս հարցադրման պատասխանը պետք է համարել դրական հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ Սահմանադրական դատարանը, ի թիվս այլ իրավական նորմերի, հիշյալ որոշմամբ քննության է առել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետի սահմանադրականության հարցը: Համաձայն այդ կետի՝ «Կասկածյալների, մեղադրյալների, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը կամ կալանքը, ինչպես նաև ազատազրկման դատապարտված անձանց անձնագրերը ժամանակավորապես վերցնում են հետաքննության կամ նախաքննության մարմինները կամ դատարանը, իսկ ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձանց անձնագրերը՝ զինկոմիսարիատները»:

Նշված որոշմամբ քննարկվել է նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցը: Նշված հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը»:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ նման կանոնակարգման պայմաններում քրեական դատավարության շրջանակներում կասկածյալից կամ մեղադրյալից անձնագիր վերցնելու վերաբերյալ առկա է երկու ինքնուրույն կանոնակարգում: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ վիճարկվող նորմերի իրավաչափությունը դիտարկել է հետևյալ դեպքերի տեսանկյունից.

ա) երբ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ առկա է խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշում,

բ) երբ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ առկա չէ խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշում:

Ըստ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշման շրջանակներում իրավաչափ է դառնում նաև այդպիսի կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելը: Այս դեպքում անձնագիրը վերցնելը խափանման միջոցի արդյունավետ իրացման երաշխիք է: Սակայն նույնը չի կարելի ասել այն դեպքի համար, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից, առանց խափանման միջոցի (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառման, վերցվում է կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը: Հաշվի առնելով խափանման միջոց կիրառելու և դրա համատեքստում անձի անձնագիրը վերցնելու նպատակը, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ վերը նշված դեպքում բացակայում է նաև կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, նրանց կողմից դատավճռի կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ ողջամիտ կասկածը, հետևաբար՝ նաև անձնագիրը վերցնելու միջոցով կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը:

Նման վերլուծության արդյունքում ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ անձնագիրը կասկածյալից կամ մեղադրյալից կարող է վերցվել բացառապես խափանման միջոցի կիրառման դեպքում:

Փաստորեն՝ անձնագիրը վերցնելը չի համարվի իրավաչափ, եթե անձի նկատմամբ չի ընտրվել խափանման միջոց:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:

Հետևաբար՝ բոլոր խափանման միջոցների կիրառման նպատակը կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելը կամ դատավճռի կատարումն ապահովելն է:

Նման պարագայում բոլոր խափանման միջոցներն ընտրելու դեպքում էլ, նման նպատակի առկայության պայմաններում, կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը վերցնելը պետք է համարել իրավաչափ, և նախատեսվող այդպիսի կարգավորումը տեղավորվում է ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշման տրամաբանության մեջ:

Հետևաբար «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշումը պետք է փոփոխել և լրացնել՝ սահմանելով բոլոր խափանման միջոցների, ինչպես նաև ձերբակալման վերաբերյալ որոշման առկայության դեպքում կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը վերցնելու հնարավորություն:

Հաշվի առնելով վերոգրյալը ՀՀ դատախազությունում նախապատրաստվել և ՀՀ արդարադատության նախարարություն է ուղարկվել ՀՀ Կառավարության վերը նշված որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Կառավարության որոշման նախագիծ, որը ներկայումս քննարկման փուլում է:

2018թ. ընթացքում ավարտված քրեական գործերի 55.4%-ը (2017թ.՝ 51.4%) քննվել է մինչև 2 ամիս, 20.5%-ը (2017թ.՝ 21.8%)՝ մինչև 4 ամիս, 12.0%-ը (2017թ.՝ 13.1%)՝ մինչև 6 ամիս, 10.0%-ը (2017թ.՝ 10.8%)՝ մինչև 1 տարի, 2.1%-ը (2017թ.՝ 2.9%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:

2018թ. ընթացքում դատարան ուղարկված 879 քրեական գործով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 22.411.076.195 ՀՀ դրամի գույքային վնաս (2017թ.՝ 19.046.893.965), որից պետությանը՝ 12.598.174.706 ՀՀ դրամի (2017թ.՝ 17.168.449.303), իրավաբանական անձանց՝ 8.240.568.158 ՀՀ դրամի (2017թ.՝ 512.409.568), ֆիզիկական անձանց՝ 1.572.333.331 ՀՀ դրամի (2017թ.՝ 1.366.035.094):

Նախաքննության ընթացքում վերականգնվել է 5.545.836.166 ՀՀ դրամի չափով գույքային վնաս (2017թ.՝ 9.085.325.722), որից պետությանը՝ 4.794.787.662 ՀՀ դրամի (2017թ.՝ 8.822.502.766), իրավաբանական անձանց՝ 359.735.129 ՀՀ դրամի (2017թ.՝ 107.026.146), ֆիզիկական անձանց՝ 391.313.375 ՀՀ դրամի չափով (2017թ.՝ 155.796.810):

2018թ. ընթացքում ոչ արդարացնող հիմքերով կարճված քրեական գործերով և նույն հիմքերով մերժված նյութերով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 2.358.306.484 ՀՀ դրամի գույքային վնաս, որից պետությանը՝ 2.152.392.824 ՀՀ դրամի, իրավաբանական անձանց՝ 108.119.640 ՀՀ դրամի, ֆիզիկական անձանց՝ 97.794.020 ՀՀ դրամի:

Նյութերի նախապատրաստման և նախաքննության ընթացքում վերականգնվել է 1.884.765.223 ՀՀ դրամի չափով գույքային վնաս, որից պետությանը՝ 1.758.737.983 ՀՀ դրամի, իրավաբանական անձանց՝ 73.102.640 ՀՀ դրամի, ֆիզիկական անձանց՝ 52.924.600 ՀՀ դրամի չափով:

2018թ. ընթացքում բացահայտված հանցագործությունների դեպքերով ՀՀ իրավասու մարմինների կողմից հարուցված քրեական գործերով հանցագործությամբ պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 84.869.951.060 ՀՀ դրամ:

Բացահայտված ընդհանուր վնասից 2018թ. ընթացքում վերականգնվել է 27.775.221.334 ՀՀ դրամը, իսկ շուրջ 6.922.245.802 դրամի վնաս, առկա դրամական միջոցներով, երաշխավորված է քրեադատավարական անհրաժեշտ գործիքակազմով, այն է՝ այդ չափով առկա արժույթի կամ արտարժույթի վրա դրված կալանքով:

2018թ. ընթացքում քննված քրեական գործերով դատարան է ներկայացվել 4938 խուզարկության միջնորդություն (2017թ.՝ 4132), որոնցից 4657-ը՝ բնակարանի խուզարկություն կատարելու, իսկ 281-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար: Ներկայացված 4938 միջնորդությունից բավարարվել է 4758-ը կամ 96.4%-ը (2017թ.՝ 4017-ը կամ 97.2%-ը), մերժվել է 180-ը կամ 3.6%-ը (2017թ.՝ 115-ը կամ 2.8%-ը), որոնցից 168-ը՝ բնակարանի խուզարկության, իսկ 12-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման:

2018թ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից մեծածավալ աշխատանք է կատարվել նաև հանրապետությունում անցկացված ընտրությունների ընթացքում ընտրական իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկման, դրանց հիման վրա նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ պատշաճ դատախազական հսկողության ապահովման ուղղությամբ:

Այսպես.

2018թ. դեկտեմբերի 9-ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ հրապարակումները, քաղաքացիների հաղորդումները և ահազանգերը գրանցելու և հաշվառելու, հաղորդումների քննարկման և դրանց հիման վրա նախապատրաստվող նյութերի ու հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի հրամանով դատախազության համակարգում ստեղծվել է աշխատանքային խումբ:

Աշխատանքային խմբին հանձնարարվել է ուսումնասիրել արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ ստացված հաղորդումները, լուծել դրանց ենթակայության հարցը, գործնական աջակցություն ցուցաբերել դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին և դատախազներին՝ այդ հաղորդումների քննարկման, նյութերի նախապատրաստման և հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելիս: Բացի դրանից, խմբի գործառույթների մեջ է մտել նաև պատշաճ և օպերատիվ լուսաբանմամբ իրականացվող աշխատանքների հրապարակայնության ապահովումը:

Աշխատանքային խմբի առջև խնդիր է դրվել ընտրական իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվությունն ստանալու, ինչպես նաև ընտրական գործընթացում ներգրավված սուբյեկտների կողմից ընտրական իրավախախտումների վերաբերյալ բարձրացված հրատապ խնդիրներին արագ արձագանքումն ապահովելու նպատակով, սերտորեն համագործակցել ՀՀ ԿԸՀ-ի, դիտորդական առաքելություն իրականացնող և շահագրգիռ այլ կազմակերպությունների, իրավապահ մյուս մարմինների, ընտրությունները լուսաբանող լրատվամիջոցների հետ:

Աշխատանքային խումբը ուսումնասիրել և ամփոփել է դեկտեմբերի 9-ին կայացած ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում իրավապահ մարմինների ստացած ընտրական առերևույթ հանցագործությունների վերաբերյալ 442 դեպքի մասին ահազանգ:

Դեպքերից 190-ի մասին տեղեկությունները ստացվել են ՀՀ գլխավոր դատախազության աշխատանքային խմբի շրջանակներում իրականացվող հասանելի ԶԼՄ-ների հրապարակումների և սոցիալական ցանցերում քաղաքացիների կողմից կատարված գրառումների մշտադիտարկման արդյունքում: 157 դեպքի մասին հայտնվել է քաղաքացիների կողմից՝ ՀՀ ոստիկանություն կամ դատախազություն ներկայացված դիմումների և հաղորդումների տեսքով, իսկ մնացած մասը՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված զեկուցագրերի արդյունքում:

Ընտրությունների նախապատրաստման շրջանում, ինչպես նաև քվեարկության օրվա ընթացքում հայտնի դարձած ընտրական իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց ճնշող մեծամասնությունը կրել են ընդհանուր, վերացական բնույթ կամ վերաբերել են նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներին, քվեարկության կազմակերպմանը վերաբերող տեխնիկական բնույթի խնդիրներին՝ քվեարկության սենյակների կահավորմանը, տեխնիկական սարքավորումների գործարկմանը, տեղամասերին հարող տարածքներում կուտակումների առաջացմանը, տեղամասային հանձնաժողովների աշխատակարգային որոշ խախտումներին:

Աշխատանքային խումբը, ընտրախախտումներին առնչվող որոշակի հաղորդումները պատշաճ ստուգելու, այդպիսի դեպքերը խափանելու, հանցանք կատարած անձի պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու նպատակով, բովանդակային նկարագրությամբ առերևույթ ընտրական բնույթի հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդումներն օպերատիվ կերպով ուղարկել է ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բաժիններ, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ ստուգելու, անհետաձգելի քննչական, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու միջոցով հաղորդումների իրական հանգամանքները պարզելու և սեղմ ժամկետում իրավական գնահատական տալու նպատակով:

Նշված 442 դեպքից վերացական և ընդհանուր բնույթի տվյալներ պարունակող 271 դեպքով իրականացվել կամ իրականացվում են ստուգողական գործողություններ: Դրանց արդյունքում 161-ով արդեն իսկ հերքվել են ներկայացված ենթադրյալ իրավախախտման փաստերը և թողնվել են անհետևանք:

165-ով քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու նպատակով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նախապատրաստվել կամ նախապատրաստվում են նյութեր: Դրանցից՝

113-ը վերաբերում է մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու փորձերին,

4-ը՝ վստահված անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելուն,

13-ը՝ ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելուն,

1-ը՝ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելուն,

9-ը՝ քվերակության գաղտնիությունը խախտելուն,

11-ը՝ ընտրակաշառք տալուն,

3-ը՝ կեղծ քվեաթերթ իրացնելուն,

2-ը՝ քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարեցնելուն հարկադրելուն,

9-ը՝ այլ:

Նշված 165 հաղորդումից 154-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին, իսկ 11-ով հարուցվել են քրեական գործեր: Հարուցված 11 քրեական գործից 4-ը վերաբերել են մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու փորձերին, 4-ը՝ ընտրակաշառք տալուն կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելուն, 1-ը՝ քվեարկության գաղտնիությունը խախտելուն, 1-ը՝ ընտրության արդյունքները կեղծելուն, 1-ը՝ ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելուն:

Նշված 11 քրեական գործից 9-ի վարույթը կարճվել է, 1-ինը՝ կասեցվել՝ անձը հայտնի չլինելու հիմքով, 1-ի նախաքննությունը շարունակվում է:

ՀՀ գլխավոր դատախազությունում ձևավորված աշխատանքային խումբը ստուգման առարկա է դարձրել նաև 2018թ. սեպտեմբերի 23-ին կայացած Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արձանագրված ընտրական իրավախախտումների վերաբերյալ 271 զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների և ՀՀ ոստիկանության տարածքային բաժիններում ստացված նույն բնույթի ահազանգերի, որոնցից 207-ի ստուգման արդյունքում ընտրական բնույթի հանցագործությունների փաստերը ստուգողական գործողությունների արդյունքում հերքվել են, 64 դեպքով նախապատրաստվել են նյութեր, որոնցից 9-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին, իսկ 55 դեպքերի վերաբերյալ նախապատրաստված նյութերով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Հարուցված 9 քրեական գործից 2-ը 2 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 5-ի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով, 1-ինը կասեցվել է՝ անձը հայտնի չլինելու հիմքով, 1-ի նախաքննությունը շարունակվում է:

2018թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից մեծածավալ աշխատանք է կատարվել 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների փաստի առթիվ քննվող թիվ 62202608 քրեական գործով:

Մասնավորապես, 2018թ. հուլիսի 3-ին նշված քրեական գործին է միացվել 2008 թվականի փետրվարի 23-ից մարտի 2-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության գործադիր մարմնի ղեկավար անձի՝ ՀՀ պաշտպանության նախարարի կողմից, այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը տապալելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նույն օրը հարուցված քրեական գործը:

Նախաքննության ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում է հարուցվել 2008 թվականի դրությամբ ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի, ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանի և ՀՀ

պաշտպանության նախարարի տեղակալ Յուրի Խաչատուրովի նկատմամբ, իսկ ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-րդ հոդվածի 1-ին մասով:

Քննչական խմբի կողմից գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու, մեղավոր անձանց շրջանակը պարզելու և նրանց գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով, որպես վկա հարցաքննվել են 1000-ից ավելի անձինք, հետաքննության մարմիններին՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության և ԱԱԾ համապատասխան ծառայություններին տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ բազմաթիվ հանձնարարություններ, նշանակվել է 23 փորձաքննություն, փորձաքննության է ներկայացվել ավելի քան 146 միավոր հրազեն և մեծ քանակությամբ զինամթերք, կատարվել է 40-ից ավելի խուզարկություն, քաղաքացիներից և պետական տարբեր հիմնարկներից կատարվել է 85 առգրավում:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով դատախազական հսկողություն ու վերահսկողություն է սահմանվել ՀՀ 2018թ. նոյեմբերի 6-ին ուժի մեջ մտած՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառման գործընթացի օրինականության նկատմամբ: Խնդիր էր դրվել դատախազական ներգործության գործիքակազմի միջոցով ապահովել համաներում հայտարարելու մասին օրենքի՝ ողջամիտ ժամկետներում և օրենսդրությամբ նախատեսված կարգով ճշգրիտ ու միատեսակ կիրառումը:

Սահմանվել է, որ դատախազության համապատասխան ստորաբաժանումներում և դատախազների կողմից մանրակրկիտ պետք է ուսումնասիրվեն մինչդատական քրեական վարույթում գտնվող քրեական գործերով համաներման մասին օրենքի կիրառման արդյունքում ընդունված որոշումները, ինչպես նաև առաջին ատյանի և վերաքննիչ քրեական դատարաններում քննված՝ անմիջական դատախազական հսկողության տակ գտնվող քրեական գործերով՝ նույն օրենքի կիրառմամբ կայացված դատական ակտերը: Ուսումնասիրության արդյունքում համաներման մասին օրենքի սխալ կիրառման դեպքեր հայտնաբերելիս ձեռնարկվելու են դրանցից բխող դատախազական ներգործության միջոցներ: Մասնավորապես՝ եթե առաջին ատյանի և վերաքննիչ քրեական դատարաններում քննված քրեական գործերով հայտնաբերվեն համաներման մասին օրենքի սխալ կիրառման դեպքեր, ապա պարտադիր քննարկման առարկա կդարձվի դատական այդ ակտերը բողոքարկելու հարցը:

Ուսումնասիրության առարկա է նաև համաներման կիրառման վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկների պետերի կայացրած որոշումների օրինականությունը: Այդ շրջանակներում համաներման մասին օրենքի հետ անհամապատասխանություններ հայտնաբերելու պարագայում քայլեր կձեռնարկվեն դրանց վերացման և համաներման ենթակա դատապարտյալների իրավունքների վերականգնման ուղղությամբ:

Ի կատարումն այդ հրամանի՝ ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանումներում դատախազների կողմից մանրակրկիտ ուսումնասիրվում են մինչդատական քրեական վարույթում գտնվող քրեական գործերով համաներման մասին

օրենքի կիրառման արդյունքում ընդունված որոշումները, ինչպես նաև առաջին ատյանի և վերաքննիչ քրեական դատարաններում քննված՝ անմիջական դատախազական հսկողության տակ գտնվող քրեական գործերով՝ նույն օրենքի կիրառմամբ կայացված դատական ակտերը: Ուսումնասիրվում է նաև համաներման կիրառման վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերի կայացրած որոշումների օրինականությունը:

Գործընթացի շրջանակներում ՀՀ տարածքային դատախազությունների, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության վերահսկողություն իրականացնող վարչությունների կողմից համապատասխան դատավարական փաստաթղթերի և որոշումների ուսումնասիրությունները վկայում են, որ համաներման կիրարկումը հիմնականում համապատասխանել է օրենքով սահմանված պայմաններին ու պահանջներին: Այդուհանդերձ, արձանագրվել են 19 անձի վերաբերյալ համաներման մասին օրենքի սխալ կիրառման դեպքեր, որոնց շտկման նպատակով ձեռնարկվել են դատախազական ներգործության միջոցներ, մասնավորապես, վերացվել են խախումներով կայացված համապատասխան դատավարական որոշումները:

Այս փուլում համաներման մասին օրենքի կիրառման հիմնական խնդիրները պայմանավորված են եղել առավելապես նախաքննության ընթացքում գտնվող քրեական գործերով մեղադրյալների կամ կասկածյալների նկատմամբ այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ կայացված որոշումների ոչ բավարար հիմնավորվածությամբ: Միայն մեկ դեպքում է, որ դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ վերացվել է քրեակատարողական հիմնարկի պետի որոշում, որը վերաբերել է դատապարտյալի պատժի չկրած մասը անհիմն կերպով 1/3-ով կրճատելուն:

Խախտումներում գերակշռել են այն դեպքերը, երբ մեղադրյալի կամ կասկածյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ չիրականացնելու, քրեական գործի վարույթը կարճելու որոշումները կայացվել են թերի կատարված նախաքննության պայմաններում, երբ չեն ձեռնարկվել անհրաժեշտ բոլոր միջոցները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման ուղղությամբ, չեն ստուգվել գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնք առնչվում են օրինակ, հանցադեպի առկայությունն ապացուցված լինելու, համաներման ակտ կիրառելու հիմքերին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջությունն ապահովված լինելու, իսկ առավելապես՝ մեղադրյալի կողմից հնարավոր այլ հանցագործություն կատարված լինելու հետ:

Եղել են նաև դեպքեր, երբ մեղադրյալի նկատմամբ համաներման մասին օրենքը կիրառելիս անտեսվել է, որ մեղադրյալի կողմից երկու կամ ավելի նույնատիպ հանցանք կատարելու պայմաններում համաներման օրենքի դրույթները կիրառելի չեն, եթե մեղսագրվող արարքների համար նախատեսված՝ անազատության հետ կապված առավելագույն պատիժների հանրագումարը գերազանցում է օրենքով սահմանված տարիների թիվը:

Որոշ դեպքերում քրեական գործերի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ համաներման ակտ կիրառելու համար հիմք հանդիսացող ոչ բոլոր անհրաժեշտ հանգամանքներն են ամբողջությամբ ստուգվել և ճիշտ գնահատվել, մասնավորապես, կապված վերջին տասը տարվա ընթացքում մեղադրյալի ունեցած դատվածության, նրա

նկատմամբ նախկինում համաներում կիրառված լինելու, պատիժը կրելու ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու, առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության հետ: Մեկ դեպքում էլ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու որոշումը կայացնելիս անուշադրության է մատնվել այն հանգամանքը, որ հանցագործությունն ավարտվել է համաներման մասին օրենքով նախատեսված 2018թ. հոկտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածում:

«Համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառման գործընթացի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության գործընթացը շարունակվում է, հատուկ ուշադրության առարկա է համաներման ենթակա անձանց իրավունքների լիարժեք պաշտպանությունը՝ բացառելու հատկապես նրանց նկատմամբ համաներման ակտը միտումնավոր կամ որևէ այլ պատճառով անհիմն, ապօրինի չկիրառելու հնարավոր դեպքերը:

2018թ. ՀՀ դատախազությունում ուսումնասիրություն է կատարվել նաև ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2018 թվականի ընթացքում ընտանիքում բռնության 397 դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, այդ թվում՝

ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը	Հարուցված գործերի թիվը
104	5
106	1
110	1
112	8
113	8
117	36
118	233
119	11
120	1
121	1
131	2
133	3
134	1
137	50
138	3
141	11
142	3
147	1
167.1	3
173	7
176	1
177	1
185	2
322	1

353	1
353.1	2
	397

Այդ դեպքերի առթիվ հարուցված 65 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ, 11-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան, 224-ով վարույթը կարճվել է /արդարացնող հիմքով՝ 63-ը, ոչ արդարացնող հիմքով՝ 161-ը, այդ թվում՝ հաշտության հիմքով՝ 126-ը/ և քրեական հետապնդումը դադարեցվել է, 9-ով վարույթը կասեցվել է /ՀՀ ՔԴՕ 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ/, 1-ն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն, 11-ը միացվել են, 76-ը փոխանցվել է հաջորդ տարի:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունմանը զուգահեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում, դատախազին բացառիկ իրավասություն է վերապահվել հանրային կարգով, այսինքն՝ առանց տուժողի բողոքի առկայության, քրեական վարույթ հարուցել ընտանեկան բռնության բոլոր այն դեպքերում, երբ դատախազի գնահատմամբ տուժողը իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

Նշված դրույթի կիրառումը պատշաճ ապահովելու նպատակով դատախազների համար մշակվել է ուղեցույց, որի համաձայն՝ յուրաքանչյուր այն դեպքում, երբ ստուգման արդյունքում կպարզվի բռնության ենթարկվածի՝ անօգնական վիճակում գտնվելու կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ դատախազի լիազորությունը պետք է համարել պարտադիր, այլ ոչ թե հայեցողական:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2018 թվականի մայիսի 18-ին հանձնարարվել է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվեցիայի 2-րդ հոդվածով նախատեսված՝ կյանքի իրավունքի երաշխավորման՝ պետության պոզիտիվ պարտականության պատշաճ կատարման հրամայականից ելնելով՝ ընտանիքում բռնության ենթարկված անձի կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայության յուրաքանչյուր դեպքում վերջինիս վիճակը գնահատել որպես անօգնական:

ՀՀ գլխավոր դատախազի հիշյալ հանձնարարականից հետո՝ 2018 թվականի ընթացքում մասնավոր մեղադրանքի 34 դեպքով, անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելու հանգամանքից, ընտանիքում բռնության դեպքերում, երբ անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարողացել պաշտպանել իր իրավաչափ շահերը, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի, դատախազի կողմից հարուցվել է 34 քրեական գործ:

Նշենք, որ մինչ այդ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով որևէ քրեական գործ հարուցված չի եղել:

ՀՀ գլխավոր դատախազությունում ամփոփվել են նաև 2018թ. ընթացքում ապօրինի ծառահատումների դեմ քրեաիրավական պայքարի արդյունքները:

Պարզվել է, որ հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է շրջակա միջավայրի անվտանգության դեմ ողղված հանցագործության 953 դեպք: Դրանցից 801-ը

կամ մոտ 84%-ը եղել են ծառերի ապօրինի հատումների դեպքեր: Համեմատության համար նշենք, որ 2017թ. ընթացքում արձանագրվել է ապօրինի ծառահատման 606 դեպք, այսինքն հայտնաբերման ցուցանիշն ավելացել է ավելի քան 32%-ով:

Արձանագրված դեպքերից 217-ով հարուցվել են քրեական գործեր: Վարույթում քննված քրեական գործերով որպես մեղադրյալ է ներգրավվել 68 անձ: 2017թ. նշված հանցագործության հատկանիշներով հարուցված քրեական գործերի թիվը եղել է 108, իսկ վարույթում քննված քրեական գործերով որպես մեղադրյալ է ներգրավվել 38 անձ: Համեմատությունը փաստում է, որ 2018թ. ընթացքում, նախորդող տարվա համեմատ, հարուցված քրեական գործերի քանակը կրկնապատկվել է, իսկ որպես մեղադրյալ ներգրավված անձան թիվն ավելացել է մոտ 79 տոկոսով: Եթե 2017թ. ապօրինի ծառահատում կատարելու համար 34 անձ է դատի տրվել, ապա 2018թ. նրանց թիվը կազմել է 38:

Ապօրինի անտառահատումների դեմ պայքարի նշանակալի արդյունքները հնարավոր է եղել ապահովել այս հանցատեսակի նախականխման, կանխման, բացահայտված դեպքերով քննության արդյունավետության բարձրացման ուղղությամբ ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնությամբ և ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ՀՀ ոստիկանության հետ համատեղ ձեռնարկված և սերտ համագործակցությամբ իրականացված համալիր միջոցառումների արդյունքում:

Մասնավորապես՝ դատախազության առաջարկությամբ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից անտառօգտագործման պայմանագրերի ձևերում փայտանյութի ձեռքբերման և իրացման հետ կապված մի քանի պարտադիր դրույթների ամրագրման արդյունքում վերացվել է տարատեսակ պատճառաբանություններով անտառատոմսում նշված տեսակից կամ չափից տարբերվող ծառեր հատելու, փայտանյութը սահմանված ժամկետների խախտմամբ անտառից հանելու և տեղափոխելու հնարավորությունը:

Համապատասխան իրավական ակտերում անտառի պահպանության համար պատասխանատու յուրաքանչյուր պաշտոնյայի իրավունքների և պարտականությունների հստակեցման, լիազորությունների կրկնությունները վերացնելու գործընթացի արդյունքում հասցեականացվել են ծառահատմանն առնչվող բոլոր սուբյեկտների գործառույթների ու պատասխանատվության շրջանակները: Որպես հետևանք՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու հեռանկարից խուսափելու նկատառումով պաշտոնատար անձինք հիմնականում ձեռնպահ են մնացել իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու միջոցով ապօրինի ծառահատումները հնարավոր դարձնելուց, հաճախ դրանց հանցակցելուց:

Գլխավոր դատախազի՝ ՀՀ ոստիկանության պետին ուղղված գրության արդյունքում նախաձեռնված և ՀՀ բնապահպանության նախարարության ու ՀՀ ոստիկանության կողմից շրջանառության մեջ դրված ապօրինի ծառահատումների կանխարգելման ու տեղափոխման դեմ համատեղ միջոցառումների պլանով առաջնորդվելու շնորհիվ առավել մանրամասն են ստուգվել համապատասխան մեքենաների վարորդների կամ ուղևորների մոտ բնափայտը տեղափոխելու համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունն ու ամբողջությունը: Իսկ ապօրինի ծառահատման և ապօրինի ձեռք բերված բնափայտը անտառտնտեսությունից դուրս բերելու յուրաքանչյուր դեպքի կապակցությամբ

իրականացվել են օպերատիվ-հետախուզական գործողություններ՝ պարզելու ծառի պահպանման կամ անտառտնտեսությունից բացթողնման համար պատասխանատու իրավասու անձանց շրջանակը:

Պայքարի արդյունավետության համար կարևոր նշանակություն է ունեցել նաև դեռևս 2017թ. կեսերից, ՀՀ գլխավոր դատախազության առաջարկով իրավասու մարմինների կողմից որդեգրված՝ բնութանը հասցված վնասի հաշվարկման նոր սկզբունքի կիրարկումը, որով այլևս որպես վնաս է հաշվարկվում ոչ միայն փայտանյութի արժեքը, այլ նաև շրջակա միջավայրը նախկին տեսքի բերելու համար անհրաժեշտ՝ բազմապատիկով հաշվարկվող գումարի չափը:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ և դատախազության կողմից որդեգրված նոր քրեական քաղաքականությամբ ապօրինի ծառահատման ի հայտ բերված յուրաքանչյուր դեպքով պարտադիր քննության առարկա է դարձվել հանցագործությունների կատարմանն անտառային ֆոնդի պահպանության համար պատասխանատու անձանց մասնակցության հավանականությունը, այսինքն հնարավոր կոռուպցիոն սխեմաների առկայության հանգամանքների պարզումը:

Բոլոր այն դեպքերում, երբ քննության ընթացքում բավարար ապացույցներ են ձեռք բերվում ապօրինի ծառահատման հանցագործություններին անտառների պահպանության համար պատասխանատու պաշտոնատար անձանց մասնակցության վերաբերյալ, անվերապահորեն կիրառվում են նրանց քրեական պատասխանատվության երթակելուն ուղղված իրավական բոլոր գործիքները:

Մասնավորապես՝ նախորդ տարվա ընթացքում վարույթում քննված քրեական գործերով քրեական հետապնդում է իրականացվել թվով 31 պաշտոնատար անձանց նկատմամբ, այդ թվում՝ բնապահպանական պետական տեսչության պետի 1 տեղակալ, բնապահպանական պետական տեսչության բաժնի պետի 1 տեղակալ, բնապահպանական պետական տեսչության 9 տեսուչ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարբեր անտառտնտեսությունների թվով 4 տնօրեն, 8 անտառապետ, 6 անտառապահ, անտառտնտեսության մեկ ինժեներ և ոստիկանության բաժնի պետի մեկ տեղակալ:

Պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական հետապնդումներն իրականացվել են շահադիտական նպատակներով ապօրինի ծառառահատումների կատարման, անտառից փայտանյութի ապօրինի դուրսբերման կանխման, արգելման, հայտնաբերման իրենց պարտականությունները չկատարելուն ուղղված հանցավոր գործողություններ կատարելու կամ անգործություն ցուցաբերելու շրջանակներում կաշառք ստանալու, պաշտոնեական կեղծիք կատարելու, փաստաթղթեր վնասելու կամ ոչնչացնելու, պաշտոնական լիազորությունները չարաշահելու կամ դրանց հանցակցության հատկանիշներով: Միայն նշված պաշտոնատար անձանց նման հանցավոր վարքագծի արդյունքում հաշվարկված՝ պետությանը պատճառված վնասը կազմել է ավելի քան 690 մլն դրամ, որից վերականգնվել է 28.5մլն դրամը:

Նշվածներից 19 պաշտոնատար անձանց վերաբերյալ քրեական գործերն ուղարկվել են դատարան, որոնցից 7-ի նկատգմամբ կայացվել են մեղադրական դատավճիռներ:

Անտառային տնտեսություն վարող պաշտոնատար անձանց մասով խստացվել է պատժողական քաղաքականությունը: Այն դրսևորվում է քրեական գործերի դատական քննության ընթացքում: Մեղադրող դատախազների կողմից ավելի հաճախակի միջնորդվել

է հիմնական պատիժներին զուգահեռ հանցագործություն կատարած պաշտոնատար անձանց նկատմամբ նշանակել նաև լրացուցիչ պատիժներ՝ ինչպես օրինակ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից ժամանակավոր զրկելը:

Ինչպես ապօրինի ծառահատումների, այնպես էլ այս ոլորտում սխեմատիկ բնույթ կրող կոռուպցիոն հանցագործությունների նկատմամբ իրավապահ մարմինների լիարժեք անհանդուրժողականության քաղաքականությունը, որպես առաջնահերթություն, շարունակվելու է նաև հետայսու:

Ամփոփելով 2018թ. Հայաստանի Հանրապետությունում իրականացված քննության, քրեական հետապնդման արդյունքները՝ կարող ենք փաստել այդ աշխատանքներում հետևյալ առանձնահատկությունները.

1. 2018 թվականին էականորեն աճել է քննված քրեական գործերի թիվը, ինչն, իր հերթին, հանգեցրել է ինչպես Հայաստանի Հանրապետության նախաքննության մարմինների քննիչների, այնպես էլ քրեական գործերի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների ծանրաբեռնվածության աճի:

2018թ. քննված 27.684 քրեական գործից 25.823-ը կամ 93.3%-ը քննվել է ՀՀ քննչական կոմիտեի, 780-ը կամ 2.8%-ը՝ ՀՀ ՀՔԾ-ի, 715-ը կամ 2.6%-ը՝ ՀՀ ՊԵԿ քննչական վարչության, իսկ 366-ը կամ 1.3%-ը՝ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի վարույթում:

Եթե 2017թ. Հայաստանի Հանրապետության նախաքննության մարմինների քննիչների կողմից քննվել է 22.007 քրեական գործ, ապա 2018թ.՝ 27.684 քրեական գործ, այսինքն՝ 5677-ով կամ 25.8%-ով ավելի: Եթե 2017թ. քննիչների տարեկան ծանրաբեռնվածությունը կազմել է 42.3 քրեական գործ, ապա 2018թ.՝ 51.5 քրեական գործ: Եթե 2017թ. քրեական գործերի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների տարեկան զբաղվածությունը կազմել է 81.8 քրեական գործ, ապա 2018թ.՝ 102.9 քրեական գործ:

Պետք է փաստել, որ քննված քրեական գործերի աճի հիմնական պատճառներից մեկը քաղաքացիների նախաձեռնողականության ակնհայտ աճն է, ինչն արտահայտվել է հատկապես նախորդ տարիներին կատարված հանցագործությունների մասին վերջիններիս կողմից տրված հաղորդումներով, որի արդյունքում 2018թ. բացահայտվել է նախորդ տարիներին կատարված հանցագործությունների 3755 դեպք:

2. էապես բարելավվել է կալանավորման պրակտիկան: Այսպես.

2017թ. համեմատ, 2018թ. 217-ով կամ 20.0%-ով նվազել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների թիվը, այն դեպքում, երբ 2018թ. ընթացքում վարույթում գտնվող քրեական գործերով անցնող մեղադրյալների թիվը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 581-ով կամ 9.7%-ով (6582-6001):

Եթե 2017թ. վարույթում գտնվող քրեական գործերով անցնող 6001 մեղադրյալից 1087-ի կամ 18.1%-ի վերաբերյալ է միջնորդություն ներկայացվել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, ապա 2018թ. ընթացքում այդպիսի միջնորդություն է ներկայացվել վարույթում գտնվող քրեական գործերով անցնող 6582 մեղադրյալից ընդամենը 870-ի կամ 13.2%-ի վերաբերյալ:

Միաժամանակ, 0.6%-ով (8.2%-7.6%) նվազել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների մերժման տոկոսային ցուցանիշը:

Հարկ է ավելացնել, որ 2018թ. ընթացքում դատախազի որոշմամբ խափանման միջոց կալանավորումը վերացվել է 51 անձի նկատմամբ, որը 17-ով կամ 50.0%-ով ավելի է 2017թ. ընթացքում դատախազի որոշմամբ կալանքից ազատված անձանց թվից:

2018թ. ընթացքում դատախազի կողմից հետ է վերցվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ մեղադրյալի կալանավորման ժամկետը երկարացնելու մասին քննիչի 8 միջնորդություն՝ 2017թ. արձանագրված 5 միջնորդության դիմաց, այսինքն՝ աճը կազմել է 37.5%:

Նույն ժամանակահատվածում արձանագրվել է նաև մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը մերժելու կամ միջնորդության քննության արդյունքում գրավ կիրառելու մասին դատական ակտերի բողոքարկման արդյունավետության ցուցանիշի փաստացի ավելի քան 52 տոկոսով բարելավում: Մասնավորապես, եթե 2017թ. բավարարվել են նշված դատական ակտերի դեմ դատախազի կողմից ներկայացված բողոքներից 25-ը, ապա 2018թ.՝ 38-ը:

Ընդհանուր առմամբ, ներկայացված տվյալները վկայում են 2018թ. դրսևորված որոշակի միտումների մասին:

Նախ, շարունակվել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին բավարար չափով հիմքեր չունեցող միջնորդություններ ներկայացնելուց առավելագույնս հրաժարվելու գործընթացը, ինչով էլ պայմանավորված է ավելի շատ մեղադրյալների առկայության պայմաններում այս խափանման միջոցի կիրառման միջնորդությունների նվազումը:

Բացի դրանից, դատախազների կողմից դրսևորվել է առավել հետևողականություն՝ խափանման միջոց կալանավորումն ընտրելու մասին անհիմն միջնորդությունների քննությունը կանխելու կամ առանց անհրաժեշտության անձի՝ կալանքի տակ մնալը բացառելու հարցերում: Վերջինս դրսևորվել է դատախազների կողմից դատարաններից ավելի մեծ թվով միջնորդություններ հետ վերցնելով, ինչպես նաև նրանց կողմից խափանման միջոց կալանավորումը վերացնելու ավելի շատ որոշումներ կայացնելով:

2018թ. էականորեն, այն է 82 դեպքով կամ 63.6%-ով ավելացել են կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման դեպքերը:

Այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման որոշումների ավելացման միտումը բխում է անազատության հետ չկապված խափանման միջոցների, այդ թվում նաև գրավի կիրառման պրակտիկայի ընդլայնմանը նպաստելու՝ ՀՀ գլխավոր դատախազության որդեգրած քրեական քաղաքականությունից: 2018թ. հուլիսի 12-ին կայացած ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է խափանման միջոց ընտրելու հարցի քննարկման յուրաքանչյուր դեպքում պարտադիր դիտարկել անազատության հետ չկապված խափանման միջոցների կիրառման հնարավորության հարցը, իսկ խափանման միջոց կալանքի կիրառման կամ այդ խափանման միջոցի կիրառման ժամկետների երկարացման միջնորդությունների քննության ընթացքում, գնահատելով քրեական գործի՝ փաստական տվյալների հիման վրա մեղադրյալի կողմից ազատության մեջ մնալու պայմանների խախտման ռիսկերը, դիտարկել այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառմանը չառարկելու հնարավորությունը:

Այդուհանդերձ՝ կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ 2018թ. ընթացքում դատարանների կողմից մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը շատ դեպքերում թույլատրելի է համարվել անհիմն և ոչ բավարար պատճառաբանություններով՝

չընդունելով մեղադրող կողմի ներկայացրած առարկությունները: Մասնավորապես՝ գրավի կիրառումը թույլատրելի է համարվել նաև այն դեպքերում, երբ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց է ընտրվել քրեական դատավարության մասնակիցների վրա ապօրինի ազդեցություն գործադրելու կամ մեղադրյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականության առկայությամբ: Նման դեպքում գրավի կիրառումն իրավաչափ լինել չի կարող, քանի որ գրավը, որպես կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց, չի կարող երաշխավորել դրանց հնարավոր կատարման բացառումը: Նշված արձանագրումները վերահաստատվել են դատարանների համար կիրառության համար պարտադիր՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում: Եվ չնայած այդ հանգամանքին՝ ստորադաս դատարանները շատ դեպքերում նշված նախադեպային դիրքորոշմանը չեն հետևում և, պարտավոր լինելով հանդերձ, չեն պատճառաբանում, թե ինչու վերոհիշյալ նախադեպային դիրքորոշումը կոնկրետ դեպքում չի կիրառվում:

Նման մոտեցման հետևանքներն արդեն իսկ զգալի են: Մասնավորապես, 2018թ. արձանագրվել է 6 դեպք, երբ կալանքի միջնորդությունը մերժելու (3 դեպք), կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը մերժելու (2 դեպք) և գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու (1 դեպք) դատական ակտի հիման վրա մնալով ազատության մեջ՝ անձը դրսևորել է ոչ պատշաճ վարքագիծ: Նշված 6 դեպքից 3-ի դեպքում անձը, մնալով ազատության մեջ, կատարել է նոր հանցանք, 1-ի դեպքում խուսափել է քննությունից, 2-ի դեպքում ապօրինի ազդեցություն է գործադրել քրեական դատավարության մասնակիցների վրա:

Նշված 6 դեպքից 5-ով մեղադրյալները կրկին կալանավորվել են, իսկ 1-ով քննությունից խուսափող անձի նկատմամբ հայտարարվել է հետախուզում և նրա նկատմամբ կրկին որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

3. 2018թ. ընթացքում էական դրական ցուցանիշ է արձանագրվել բացահայտված հանցագործությունների դեպքերով ՀՀ իրավասու մարմինների կողմից հարուցված քրեական գործերով հանցագործությամբ պետությանը պատճառված ընդհանուր վնասի բացահայտման և վերականգնման բնագավառում:

2018թ. ընթացքում բացահայտված հանցագործությունների դեպքերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 84.869.951.060 ՀՀ դրամ: Նշված գործերից 19.788.780.504 դրամի պատճառված վնասը բացահայտվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության, 19.059.578.008 դրամի վնասը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության, 11.893.702.087 դրամի վնասը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության, իսկ մնացած 34.127.890.461 դրամի վնասը՝ ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննված կամ քննվող գործերի նախաքննությամբ:

Ընդ որում, նշվածից մոտ 30 մլրդ ՀՀ դրամի վնասի փաստերով քրեական գործեր են հարուցվել ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարված ուսումնասիրությունների արդյունքում:

Բացահայտված ընդհանուր վնասից 2018թ. ընթացքում վերականգնվել է 27.775.221.334 ՀՀ դրամը, իսկ շուրջ 6.922.245.802 դրամի վնաս, առկա դրամական միջոցներով, երաշխավորված է քրեադատավարական անհրաժեշտ գործիքակազմով, այն է՝ այդ չափով առկա արժույթի կամ արտարժույթի վրա դրված կալանքով: Նշված գործերից 16.364.401.693 դրամը վերականգնվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության

քննչական վարչության, 8.544.256.013 դրամը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության, 1.689.254.799 դրամը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության, իսկ մնացած 1.177.308.829 դրամը՝ ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննված կամ քննվող գործերի նախաքննությամբ:

4. 2018թ. էապես բարելավվել է հանցագործությունները տաք հետքերով բացահայտելու, քրեական գործ հարուցելու առերևույթ հիմքերի առկայության դեպքում անհապաղ քրեական գործ հարուցելու պրակտիկան:

Այս առումով պետք է փաստել, որ շարունակում է աճել հետաքննության մարմինների կողմից հարուցված քրեական գործերի թիվը:

Այսպես, եթե 2017թ. հարուցված 11.152 քրեական գործից նախաքննության մարմինների կողմից հարուցվել է 3930-ը կամ 35.2%-ը, իսկ հետաքննության մարմինների կողմից՝ 6799-ը կամ 60%-ը, ապա 2018թ. հարուցված 15.934 քրեական գործից նախաքննության մարմինների կողմից հարուցվել է ընդամենը 4738-ը կամ 29.7%-ը, իսկ հետաքննության մարմինների կողմից՝ 10.477-ը կամ 65.8%-ը:

5. 2018թ. էապես ավելացել է ոչ միայն դատախազների կողմից հարուցված քրեական գործերի թիվը, այլև վերջիններիս կողմից քրեական գործ հարուցելու մասին որոշումները վերացնելու դեպքերը:

Այսպես, եթե 2017թ. դատախազների կողմից հարուցվել է 659 քրեական գործ, ապա 2018թ.՝ 1262 քրեական գործ: Եթե 2017թ. դատախազների կողմից վերացվել է քրեական գործ հարուցելու մասին 14 որոշում, ապա 2018թ. վերացվել է նման 61 որոշում:

Նշված ցուցանիշները վկայում են դատախազական հսկողության արդյունավետության համակողմանի զարգացման մասին: Դատախազների գործունեության վերը նշված ցուցանիշների համադրությամբ ակնհայտ է դառնում, որ միաժամանակ ապահովվում է ինչպես անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում անհապաղ քրեական գործի հարուցումը, այնպես էլ քրեական գործերի անհիմն հարուցումների բացառումը:

Արձանագրված դրական ցուցանիշների հետ մեկտեղ պետք է փաստել, որ հանրապետությունում մինչդատական վարույթը դեռևս որոշ ուղղություններով բարելավվելու անհրաժեշտություն ունի, դեռևս առկա են խնդիրներ և բացթողումներ, որոնք բացասաբար են անդրադառնում քրեադատավարական խնդիրների արդյունավետ լուծման վրա: Այսպես.

- Շարունակում է խնդիր մնալ նախաքննության ժամկետների ձգձգումը, ինչը առաջացնում է դատավարության մասնակիցների, իսկ որոշ դեպքերում նաև հասարակության տարբեր շերտերի դժգոհությունը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քրեական գործերի 10.0%-ը քննվել է 6 ամսից մինչև 1 տարի ժամկետում, 2.1%-ը՝ 1 տարուց ավելի ժամկետում:

- Բազում խնդիրներ են առկա փորձաքննությունների իրականացման ոլորտում՝ կապված փորձագետ կադրերի համալրվածության, վերջիններիս պատշաճ մասնագիտական որակի, փորձաքննությունների լիարժեքության հետ: Արձանագրվել են ինչպես փորձագետների կողմից փորձաքննությունների կատարման ժամկետները անհարկի ձգձգելու, ակնհայտ չհիմնավորված եզրակացություններ տալու դեպքեր, այնպես էլ քննիչների կողմից հետազոտման համար ոչ բավարար կամ ոչ պիտանի նմուշներով, ոչ լիարժեք ելակետային տվյալներով, անորոշ հարցադրումներով փորձաքննությունների նշանակման, ինչպես նաև ինքնանպատակ փորձաքննություններ նշանակելու դեպքեր:

- Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում գործնական լրջագույն խնդիրներից մեկը քննչական ենթակայության կանոնների ճիշտ կիրառումն է: Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և վերահսկողության պրակտիկան ցույց է տալիս, որ առանձին դեպքերում քրեական գործերը նախաքննական մարմնի մի ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում ուղարկվում է կամայականորեն, հայեցողաբար և որ ամենակարևորն է՝ տարածքային քննչական ենթակայության կանոնների անտեսմամբ:

Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հստակ չի կարգավորում տարբեր տարածքներում կատարված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը միացնելու հարցերը, այդ թվում՝ թե որ գործը պետք է ուղարկվի այլ տարածք և միացվի մյուսին, ինչի արդյունքում հազվադեպ չեն ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով դրանք հապճեպ այլ տարածք ուղարկելու դեպքերը՝ առանց գնահատելու՝ թե ըստ դատավարական անհրաժեշտության որ քրեական գործը պետք է միացվի մյուսին:

Նշված խնդիրները պատշաճ լուծելու նպատակով 2019թ. դատախազությունում նախաձեռնվել է ուսումնասիրություն, որի արդյունքներով կներկայացվեն դրանց լուծման հնարավոր միջոցներ, այդ թվում՝ ենթակայության դատավարական ինստիտուտը կատարելագործելու նպատակով քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ:

- Նախաքննության ընթացքում քննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության ապահովման տեսանկյունից լրջագույն խնդիրներ է առաջացնում և հանցագործությունների բացահայտման հնարավորությունները չհիմնավորված կերպով սահմանափակում բանկային գաղտնիքի քրեադատավարական պաշտպանության գործիքակազմը:

Բանկային և դրան հավասարեցված գաղտնիքի ստացման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգը խնդրահարույց է, չի համապատասխանում նշված պահանջներին և բազմաթիվ դեպքերում հանգեցնում է դրանց ձեռքբերման չհիմնավորված անհնարինության և գործի քննությունը մտցնում փակուղի:

Այսպես, «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

2. Բանկերի վերահսկողության կապակցությամբ բանկերի և դրանց հաճախորդների վերաբերյալ Կենտրոնական բանկին հայտնի դարձած սույն հոդվածի առաջին մասում սահմանված տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք: Բանկերը համարվում են Կենտրոնական բանկի հաճախորդներ»:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «1.Բանկերը քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են

միայն դատարանի որոշման հիման վրա՝ սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան:

(…)»:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 13.1 հոդվածում սահմանված կոնկրետ իրավիճակներում, մասնավորապես՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում, նախատեսվում է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բանկի կողմից սեփական նախաձեռնությամբ քրեական հետապնդման մարմիններին հայտնելու պարտականություն՝ առանց դատարանի համապատասխան որոշման և առանց որպես կասկածյալ կամ որպես մեղադրյալ ներգրավված անձանց առկայության, որն ուղղակիորեն բխում է նաև միջազգային պայմանագրերով ՀՀ ստանձնած պարտավորություններից, որպիսի հանգամանքը ևս հաստատում է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության նման բարձր աստիճան սահմանելու արդարացված չլինելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(…) Բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունը կամ առգրավումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպություններից բանկային և այլ տեսակի հաշիվների (ավանդների) վերաբերյալ տեղեկությունների ստացումն է, ինչպես նաև իրականացվող ֆինանսական գործարքների մշտական վերահսկումը առանց այն անձանց գիտության, որոնց վերաբերում են այդ գործարքները»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները (…) կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի վերոշարադրյալ դրույթների վերլուծությունից երևում է, որ նշված օրենքը, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, թույլ է տալիս դատարանի որոշման հիման վրա գաղտնի կերպով ստանալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

Անդրադառնալով մեջբերված իրավակարգավորումներին և արձանագրելով, որ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ձեռքբերման հնարավորությունների առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և «Օպերատիվ-հետախուզական

գործունեության մասին» ՀՀ օրենքը հակասություն են պարունակում, ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «անձնական կյանք» հասկացության կոնվենցիոնար մեկնաբանությունը *(տե՛ս NADA v. SWITZERLAND գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 10593/08, կետ 151)*, *ԱՎԴ/0015/07/13* քրեական գործով իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «(…)կոնկրետ քրեական գործի շրջանակներում մինչդատական վարույթն իրականացնող մարմինը դատարանի որոշման հիման վրա կարող է ստանալ բանկի այն հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ: Այլ խոսքով՝ քրեական գործի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները չեն կարող տրամադրվել հետաքննության կամ նախաքննության մարմիններին: Այս տրամաբանությամբ, նշված մարմիններին չեն կարող տրամադրվել նաև անձանց անորոշ շրջանակի կողմից որոշակի ժամանակահատվածում կատարված գործարքների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

ԵԿԴ/0223/07/14 քրեական գործով որոշմամբ վերահաստատելով մեջբերված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է իրավաբանական անձի բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ձեռքբերման հնարավորությանը և փաստել, որ «(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում ամրագրված դրույթի այն մեկնաբանությունը, որ դատարանի որոշման հիման վրա կարող են ստացվել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ բանկային հաշիվների վերաբերյալ տվյալները, օրենսդրական այս դրույթի բովանդակության և կիրառման շրջանակների անհարկի նեղացում է: Նման մեկնաբանությունը չի համապատասխանում քննարկվող դատավարական (քննչական) գործողությունների առջև դրված խնդիրներին, էականորեն սահմանափակում է դրանց՝ քրեական գործով վարույթի համար ունեցած դերն ու նշանակությունը: Արդյունքում, մասնավոր շահը չարդարացված գերակայում է հանցագործությունների բացահայտման (հանցավորության դեմ պայքարի) հանրային շահի նկատմամբ:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում տեղ գտած «քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» հասկացության վերլուծությունը վկայում է, որ խոսքը ոչ թե սոսկ կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ, այլև նրան մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների մասին է, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ այդ իրավաբանական անձի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից:

28. Ելնելով վերոգրյալից և զարգացնելով սույն որոշման 26-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցներով (փաստական տվյալներով) հիմնավորի, որ համապատասխան քննչական գործողության արդյունքում ձեռք են բերվելու կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող և այն իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, որի գործունեությունն

ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից: Նման մեկնաբանության համար հիմք է ծառայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի և 282-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությամբ պետք է ներկայացնի անհրաժեշտ և բավարար փաստեր, որոնք դատարանին հիմք կտան ողջամտորեն ենթադրել, որ տվյալները, որոնք ակնկալվում է ստանալ համապատասխան քննչական գործողության կատարման արդյունքում, անմիջականորեն առնչվում են կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին և վերաբերում են նրա կողմից ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվող, վերահսկվող կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվող իրավաբանական անձին»:

Մեջբերված իրավական դիրքորոշումները զգալիորեն հստակեցրել են բանկային գաղտնիքի պաշտպանության երաշխիքներն ու դրանց ստացման դատավարական հնարավորությունները հենց հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռման սկզբունքի տիրույթում՝ նախ փաստելով, որ օրենսդիրը հնարավոր է համարում բացառապես քրեական հետապնդման ենթարկված անձի բանկային գաղտնիքի ստացումը, այնուհետև հանուն հանրային շահի մեկնաբանելով, որ քրեական դատավարությունում հնարավոր է ստանալ նաև վերջիններիս վերագրվող արարքներին անմիջականորեն առնչվող կամ նրանց կողմից կառավարվող կամ վերահսկվող իրավաբանական անձանց բանկային գաղտնիքը: Արդյունքում կարելի է արձանագրել, որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման տեսանկյունից արդարացված է համարվել այն իրավակարգավորումը, որ սահմանափակման ենթակա է բացառապես քրեական հետապնդման ենթարկված անձի կամ նրան վերը նշված կերպ առնչվող իրավաբանական անձանց բանկային գաղտնիքը:

Մեջբերված մեկնաբանությունները չեն լուծել և չէին էլ կարող լուծել քննարկված իրավակարգավորումների պայմաններում քրեական գործերով բազմիցս առաջացող՝ մեղադրյալի կամ կասկածյալի դատավարական կարգավիճակի բացակայության պատճառով բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ ստանալու անհնարինության խնդիրը:

Բանն այն է, որ բազմաթիվ գործերով հանցագործության բացահայտման կամ դրա կատարման հանգամանքների ամբողջական պարզաբանման համար անհրաժեշտ է ստանալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն այն դեպքում, երբ հանցագործություն կատարած անձը հայտնի չէ, ավելին, բանկային գաղտնիքի ստացումն անհրաժեշտ է հենց հանցանք կատարած անձին ի հայտ բերելու համար: Օրինակ, անհայտ անձի կողմից փաստաթուղթ հափշտակելուց, կամ այն գտնելուց կամ այլ անձի տվյալներով կեղծ փաստաթուղթ պատրաստելուց հետո, խաբեությամբ՝ կեղծ փաստաթուղթ օգտագործելով բանկից կամ վարկային կազմակերպությունից գումար հափշտակելու դեպքում, վերջինիս բացահայտումը հնարավոր է բացառապես բանկային գաղտնիք հանդիսացող փաստաթղթերի, այդ թվում՝ գործարքի կատարման ընթացքը պատկերող տեսագրություններն ստանալու պայմաններում: Ավելին, այս դեպքերում բանկային գաղտնիք համարվող տեղեկությունները ստանալու անհնարինությունը վարույթն իրականացնող մարմնին թույլ չի տալիս պարզել ընդհուպ հանցագործության կատարման մանրամասները, դրան բանկի աշխատակցի ներգրավվածությունը, վերջինիս արարքում

հափշտակության օժանդակության կամ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայությունը պարզելու համար:

Կամ, շատ հաճախ, թեև հանցանք կատարած անձը հայտնի է և ունի կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ, բայց այնքանով, որքանով վերջինս հանցանքը կատարել է ոչ թե իր, այլ ուրիշ անձանց անվամբ բանկային ծառայություններից օգտվելու միջոցով, օրինակ, այլ անձանց անվամբ կեղծ ոսկու գրավադրմամբ՝ խաբեության միջոցով գումար է հափշտակել բանկից, բանկային գաղտնիքի ստացումը դարձյալ հնարավոր չէ: Հանցագործությունն ամբողջությամբ բացահայտել հնարավոր չէ նաև անհիմն հարստացման, կաշառք ստանալու գործերով այն իրավիճակներում, երբ օրինակ, գումարը ստացվել կամ դրվել է ոչ թե հանցավորի, այլ մեկ ուրիշի բանկային հաշվին:

Հանցագործության բացահայտումը, հանցավորության, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը վտանգող՝ մեջբերված իրավակարգավորումների պատճառով առաջացող իրավիճակներ կարելի է շատ թվարկել: Այդ իրավիճակները բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու՝ դատավարական հնարավորությունների վերանայման և բանկային գաղտնիքի երաշխավորման չհիմնավորված ծայրահեղությունները չեզոքացնելու ուղիղ հրամայական են:

Խնդիրը դիտարկելով հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման համատեքստում՝ անհրաժեշտ է փաստել, որ ինչպես նշում է ՀՀ վճռաբեկ դատարանը ԵԿԴ/0223/07/14 քրեական գործով որոշմամբ, «(…)բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության իրավական կանոնակարգումը պետք է իրականացնել այն հաշվով, որ բացառվի դրա երաշխավորման պահանջից ցանկացած կամայական նահանջ՝ հիմք ընդունելով ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, իրավական և ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքները, մասնավորապես տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը, ինչպես նաև մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Հնարավոր սահմանափակումները կարող են իրավաչափ դիտարկվել և արդարացվել միայն սահմանադրական կարգի հիմունքների, հանրության առողջության և բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, հասարակական կարգի պահպանության անհրաժետության առկայության տեսանկյունից:

20. Փաստորեն, բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պետական մարմիններին և պաշտոնատար անձանց կարող են տրամադրվել միայն այն սահմաններում և միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նպատակների, այդ թվում՝ հանրային շահի ապահովման համար՝ պայմանով, որ նախատեսված են մասնավոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործուն երաշխիքներ:

21. Այսպիսով, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման խնդիրը սերտորեն առնչվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման քրեական դատավարության հիմնաքարային խնդրին: Հիմք ընդունելով քրեական դատավարության այս կարևորագույն խնդրի ապահովման անհրաժեշտությունը՝ բանկային գաղտնիքի պահպանության իրավական ռեժիմը կանոնակարգելիս իբրև ուղենիշ նախ և առաջ պետք է ընդունել անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրական պահանջը: Ըստ այդմ, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բացահայտելու օրենսդրական կանոնակարգերը պետք է նախատեսեն համապատասխան

երաշխիքներ՝ բացառելու համար նաև պետական մարմինների և պաշտոնատար անձանց հնարավոր կամայական վարքագիծը:

(…)

24. Սակայն հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության կարևորագույն սկզբունքը ենթադրում է, որ մարդու իրավունքներն ու ազատությունները բացարձակ չեն, և դրանց իրացումը պետք է հակակշռվի ավելի լայն հանրային շահով: Ինչպես արդեն նշվել է, թե Եվրոպական կոնվենցիան և թե ՀՀ Սահմանադրությունն իրավաչափ են համարում անձի համապատասխան իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումը ժողովրդավարական հասարակության կարևորագույն արժեքների պաշտպանության համար: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ Եվրոպական դատարանը խախտում չի արձանագրել բոլոր այն դեպքերում, երբ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքները սահմանափակվել են նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավաչափ նպատակների ապահովման համար (տե՛ս, ի թիվս այլոց, I.S. v. Germany գործով Եվրոպական դատարանի 2014 թվականի հունիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 31021/08) »:

Վերոգրյալը ենթադրում է, որ քրեական հետապնդման մարմնին մատչելի բանկային գաղտնիքի շրջանակի ըստ սուբյեկտի նեղացումը պետք է լինի արդարացված և պայմանավորվի տեղեկությունների գաղտնիության մասնավոր շահի պաշտպանության համար անհրաժեշտ այս կամ այն շոշափելի գործոնով: Ավելի պարզ՝ անհրաժեշտ է հստակ բացատրություն, թե ինչու հնարավոր չէ հանցագործությունների բացահայտման նպատակով ստանալ կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող, բայց հանցագործության մեխանիզմին այս կամ այն կերպ առնչվող անձանց, այդ թվում՝ տուժողի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ինչու է բանկային գաղտնիքի պաշտպանության մասնավոր շահը հենց այս կերպ երաշխավորմամբ հավասարակշռում հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման հանրային շահին:

Մեր գնահատմամբ, այս հարցի ողջամիտ պատասխան առկա չէ: Բանն այն է, որ անձնական կյանքի գաղտնիության պաշտպանությունը, որի շրջանակում մարդու իրավունքների եվրոպական դատարանն ու ՀՀ վճռաբեկ դատարանը դիտարկում են բանկային գաղտնիքի միջազգային իրավական երաշխավորումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նույնական երաշխիքներ ու, համապատասխանաբար, սահմանափակումներ չի ենթադրում: Այլ կերպ ասած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով թույլատրվում է հեռախոսային խոսակցությունները լսելու միջոցով սահմանափակել անձնական կյանքի գաղտնիքը՝ անկախ անձի դատավարական կարգավիճակից: Այն հանգամանքը, որ օրենսդրորեն սահմանված են այն տեղեկությունները (գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ), որոնք կարող են ստացվել հեռախոսային խոսակցությունները լսելու դեպքում և հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը սահմանափակող գործողությունները կատարվում են դատական վերահսկողության ներքո, բավարար է դիտվում այդ իրավունքի նկատմամբ անհարկի միջամտությունը բացառելու համար:

Նույն չափանիշների համատեքստում քննարկելով բանկային գաղտնիք համարվող տեղեկությունների ձեռքբերման դատավարական կառուցակարգը, կարելի փաստել, որ չհիմնավորված միջամտություններից դրա պաշտպանությունն անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա է: Այդ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն նույնիսկ հեռախոսային խոսակցությունները լսելու՝ բանկային գաղտնիքի ստացմանն

ուղղված քննչական գործողությունների նկատմամբ դատական վերահսկողությունն ավելի առարկայական է: Այնքանով, որքանով այս դեպքում ստացվող արդյունքն ավելի կանխատեսելի է, այսինքն՝ ավելի հստակ է, թե ինչ հանցագործության վերաբերյալ գործով ինչ տեղեկություններ են ակնկալվում ստանալ և այդ տեղեկությունները այսպես ասած, ստատիկ են և ոչ թե ապագայում վարվելիք խոսակցությունների արդյունքում են ձեռք բերվելու, ուստի վերահսկողություն իրականացնող դատարանն ավելի իրական հնարավորություններ ունի գնահատելու, թե անձնական կյանքին միջամտությունն արդյոք անհրաժեշտ է, թե ոչ:

Այսպիսով, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման սուբյեկտային սահմանափակումը, այսինքն՝ բացառապես կասկածյալի, մեղադրյալի կամ նրանց կողմից կառավարվող կամ ղեկավարվող կամ հանցագործությանն անմիջականորեն առնչվող իրավաբանական անձի բանկային գաղտնիքը ստանալու հնարավորությունը չի բխում քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սկզբունքից և չհիմնավորված ու չբացատրված առավելություն է տալիս մասնավոր շահին՝ առաջ բերելով գործնական բազմաթիվ խնդիրներ ու անհարկի սահմանափակելով հանցագործությունների բացահայտման հնարավորությունները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումները, այն է՝ բանկային գաղտնիքը բացառապես դատարանի թույլտվությամբ ստանալու վերաբերյալ իրավակարգավորումներն ու ստացվող տեղեկությունների շրջանակի հստակ ամրագրումը բավարար երաշխիք են բանկային գաղտնիքի նկատմամբ անհիմն միջամտությունը բացառելու համար:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ դատախազությունում մշակված՝ քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածի 3.2-րդ մասում և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասերում փոփոխություն կատարելու և «կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» բառերը հանելու առաջարկությունը ՀՀ գլխավոր դատախազի կողմից պաշտոնական ընթացք է ստացել և դրա քննարկումները շարունակվում են:

- Շարունակում է կատարելագործման ենթակա մնալ ցուցմունք տալուց հրաժարվելու դեպքերի նկատմամբ վերաբերմունքը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությամբ սահմանված՝ չափանիշը՝ այն է, «ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ», գործնականում մեկնաբանվում է անսահմանափակ՝ հարցաքննության ենթակա անձի հայեցողական գնահատման վրա այն դեպքերում, երբ գործով այդուհանդերձ որևէ հիմք չկա կարծելու, որ տուժողը որևէ հիմք ունի մտահոգվելու, որ իր հայտնած տվյալները կարող են մեկնաբանվել ի վնաս իրեն: Արդյունքում, անձը հնարավորություն է ունենում անգիր ասելու սահմանադրության մեջբերված նորմը և ազատվել ցուցմունք տալու պարտականությունից և դրանից հրաժարվելու համար քրեական պատասխանատվությունից:

Գործնական այս խնդիրը քննարկվել է ՀՀ դատախազությունում, որի արդյունքում հանձնարարվել է ապահովել, որպեսզի ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու սահմանադրական հիմքը գնահատվի օբյեկտիվորեն՝ առանց բացարձակ կախվածության մեջ դնելու հարցաքննության ենթակա անձի սուբյեկտիվ գնահատումից:

- ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կալանավորման որպես խափանման միջոցի սահմանափակ կիրառմանն ուղղված արդեն իսկ ձեռնարկված միջոցառումները

կարող են ամբողջացվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում խափանման միջոցների ցանկի ընդլայնմամբ, մասնավորապես այնպիսի նոր խափանման միջոցների նախատեսմամբ, ինչպիսիք են տնային կալանքը և վարչական վերահսկողությունը, որոնց կիրառումը կնպաստի իրավակիրառ պրակտիկայում կալանավորումների թվի կրճատմանը:

Նշված խնդրի լուծման նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում նախապատրաստվել և ՀՀ կառավարություն է ուղարկվել «Քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» համապատասխան օրենքի նախագիծ /մանրամասները տես 8-րդ գլխում/:

3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ

2018թ. հանրապետությունում արձանագրվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թվի զգալի աճ:

Մասնավորապես, 2018թ. կաշառք ստանալու, կաշառք տալու և կաշառքի միջնորդության դեպքերն աճել են 298-ով կամ 182.8%-ով /163-461/: Ընդ որում, վերջին 10 տարիներին նկատվել է այս հանցագործությունների շարունակական աճ՝ 2007թ.՝ արձանագրվել է 7 դեպք, 2018թ.՝ 461 դեպք:

90-ով կամ 60.0%-ով աճել են նաև պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու դեպքերը: Եթե 2018թ. արձանագրվել է նման 240 դեպք, ապա 2017թ.՝ ընդամենը 150-ը: Համեմատության համար նշենք, որ 2007 թվականին արձանագրվել է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու ընդամենը 26 դեպք:

211-ով կամ 405.8%-ով աճել են պաշտոնեական դիրքի օգտագործմամբ յուրացումների դեպքերը: 2018թ. արձանագրվել է նման 263 դեպք, նախորդ տարվա 52 դեպքի դիմաց:

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններն ավանդաբար համարվում են լատենտայնության բարձր աստիճան ունեցող հանցագործություններ: Դրանց հայտնաբերումը, բացահայտումը, ինչպես նաև պաշտոնատար անձանց մեղավորության հիմնավորումը, հաճախ մեծ բարդություն է ներկայացնում և պահանջում է քրեական հետապնդման մարմինների կողմից հետևողական, գրագետ պլանավորված, արդյունավետ և համագործակցված գործողությունների իրականացում:

Նշվածով պայմանավորված՝ այս հանցատեսակների թվի աճը դրական է գնահատվում. այդպիսի դինամիկան վկայում է ոչ թե իրականում այդ հանցանքների ծավալների ընդլայնման, այլ դրանց դեմ տարվող, հատկապես, քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացման մասին:

Ընդ որում, պետք է փաստել, որ արձանագրված դեպքերի ճնշող մեծամասնությունը նախկին տարիներին կատարված և 2018թ. բացահայտված դեպքեր են, ինչը վկայում է ոչ թե կոռուպցիոն հանցանքների ծավալների ընդլայնման, այլ հանրային լայն աջակցությամբ դրանց հայտնաբերման, բացահայտման, պաշտոնատար անձանց մեղավորության հիմնավորման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների հետևողական, պլանավորված և համագործակցված գործողությունների արդյունավետության մասին:

Արձանագրված ցուցանիշները փաստում են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման հարցում հանրության կողմից նախաձեռնողականության դրսևորման աննախադեպ բարձր մակարդակի, կոռուպցիայի հանդեպ անհանդուրժողականության հանրային ընկալումների առավել խոր արմատավորման, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ մարմինների դրսևորած բարձր ակտիվության մասին:

Այս համատեքստում 2018թ. առանձնացել է հատկապես քրեական հետապնդման մարմինների համագործակցության շնորհիվ մի քանի ոլորտներում (մի շարք դեպքերում՝ հանրապետության ողջ տարածքի ընդգրկմամբ) տարիներ շարունակ տևականորեն գործած սխեմատիկ բնույթ կրող կոռուպցիոն հանցագործությունների մեծածավալ բացահայտումներով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ընտանեկան նպաստների, գյուղացիներին սերմացու ցորենի և պարարտանյութի հատկացման,

տավարաբուծության, ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար վարչական տուգանքների վճարման, ավտոմեքենաների տեխզննման, «Հյուսիս–հարավ ճանապարհային միջանցք» ծրագրի իրականացման ոլորտներին:

Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ և 2019թ., ինչպես նաև հետագայում, ուսումնասիրության թիրախ են դառնալու նաև հանրային կյանքի, պետական կառավարման այլ ոլորտներ:

2018թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 1988 նյութ, որը գրեթե 4 անգամ գերազանցում է 2017թ.ցուցանիշը (2017թ.՝ 500): Դրանցից 1469-ով, ինչը 3.6 անգամ ավելի է 2017թ.ցուցանիշից (2017թ՝ 403), հարուցվել են քրեական գործեր: Բացի հարուցված 1469 քրեական գործից, հաշվետու ժամանակահատվածում վարույթ է ընդունվել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ 337 քրեական գործ, որոնցից 101-ը նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված քրեական գործեր:

2018թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների կողմից հարուցված քրեական գործերի համար առիթ են հանդիսացել 988 ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները (2017թ.՝ 272), որը գրեթե 3.6 անգամ ավելի է քան 2017թ.-ին, ԶԼՄ-ների 25 հրապարակումները (2017թ.՝ 8) և հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործությունների մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերման 532 հանգամանքը (2017թ.՝ 123 կամ 4.3 անգամ քիչ):

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված ընդհանուրը 2072 քրեական գործից /2017թ.՝ 1005/ ավարտվել է 749-ի վարույթ /2017թ.՝ 520/: Ավարտված 749 քրեական գործից 151-ը (2017թ.՝ 148) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 598-ի վարույթը կարճվել է /2017թ.՝ 371/, որոնցից 472-ը /2017թ.՝ 309/՝ արդարացնող, 126-ը /2017թ.՝ 62/ ոչ արդարացնող հիմքով:

2018թ. ընթացքում ՀՀ նախաքննության մարմինների վարույթում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 960 անձ, ինչն ավելի քան 60%-ով ավելի է 2017թ. կոռուպցիոն քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձանց թվից /2017թ.՝ 599 անձ/: Ընդ որում, եթե 2017թ. ընթացքում քրեական հետապնդման ենթարկված անձանցից միայն 292-ն է եղել պաշտոնատար անձ կամ հանրային ծառայող, ապա 2018թ.՝ 470-ը, կամ շուրջ 61%-ով ավելի:

Քրեական հետապնդման ենթարկված 960 անձից ձերբակալվել է 113-ը, որոնցից 96-ն ազատվել է ձերբակալումից:

Չնայած քրեական հետապնդման ենթարկված անձանց թիվն աճել է, այդուհանդերձ՝ կոռուպցիոն բնույթի քրեական գործերով որպես խափանման միջոց կալանք, 2017թ. համեմատ, կիրառվել է 33.3%-ով ավելի քիչ թվով անձանց նկատմամբ: Մասնավորապես, եթե 2017թ. խափանման միջոց կալանք կիրառվել է 112 անձի նկատմամբ, ապա 2018թ.՝ 84 անձի: 33 անձի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց գրավ, ինչը 2017թ.(25 անձ) համեմատ ավելի է 32%-ով: Նման միտումներն առաջին հերթին պայմանավորված են խափանման միջոց կալանավորման պրակտիկան արմատապես փոխելու, նախապատվությունն առավելապես անազատության հետ չկապված խափանման միջոցներին տալու՝ ՀՀ դատախազության կողմից գործադրվող քրեական քաղաքականությամբ:

Կոռուպցիոն գործերով մեղադրյալի կարգավիճակ ունեցող 54 պաշտոնատար անձի պաշտոնավարում դադարեցվել է: 2017թ. արձանագրվել է նման 32 դեպք:

Նախորդ տարվա ընթացքում դատի է տրվել 288 անձ, ինչը 12-ով կամ 4.0%-ով քիչ է 2017թ. համեմատությամբ: Դատարան ուղարկված կոռուպցիոն բնույթի քրեական գործերի, ինչպես նաև դրանցով դատի տրված անձանց համեմատաբար քիչ քանակը պայմանավորված է իրավապահ համակարգի որդեգրած այն քաղաքականությամբ, որ կոռուպցիոն գործերով պետությանը պատճառված վնասը վերականգնելու դեպքում կիրառվում է լայն խրախուսական գործիքակազմ: Նման քաղաքականության իրականացման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 2018թ. ընթացքում նախորդ տարվա համեմատ կրկնակի (126-62) ավելացել են ոչ արդարացնող հիմքով քրեական գործերի վարույթը կարճելու մասին կայացված որոշումները, երեք անգամ (235-75)՝ անձանց նկատմամբ քրեական հետապնդումը գործուն զղջալու և ոչ արդարացնող այլ հիմքերով դադարեցնելու որոշումները:

Կոռուպցիոն բնույթի առավել տարածված հանցատեսակների վերաբերյալ հաշվետու տարում նախապատրաստված նյութերի և քրեական գործերի շարժն ունեցել է հետևյալ պատկերը.

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված խարդախությունների վերաբերյալ նախապատրաստվել է 189 (2017թ՝ 8) նյութ, որոնցից 145-ով (2017թ՝ 5) հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 206 (2017թ՝. 21) քրեական գործ, որոնցից ավարտվել է 36 (2017թ՝. 8) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 31 (2017թ՝. 3) քրեական գործի վարույթ կարճվել է, որոնցից 10-ը (2017թ.՝ 1)՝ ոչ արդարացնող հիմքով, իսկ 5 (2017թ՝. 5) քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 63 (2017թ.՝ 18) անձ:

6 (2017թ՝. 3) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 5 (2017թ.՝ 6) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 4-ինը (2017թ.՝ 3)՝ ոչ արդարացնող հիմքով: Դատի է տրվել 13 (2017թ.՝ 7) անձ, որոնցից 3-ը (2017թ.՝ 5) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 42 (2017թ.՝ 4) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման կամ վատնման դեպքերի վերաբերյալ նախապատրաստվել է 447 (2017թ.՝ 37) նյութ, որոնցից 383-ով (2017թ.՝ 34) հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 487 (2017թ.՝ 101) քրեական գործ, որից ավարտվել է 168 (2017թ.՝ 54) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 127 (2017թ.՝ 26) գործի վարույթ կարճվել է, որոնցից 61-ը (2017թ.՝ 12)՝ ոչ արդարացնող հիմքով, իսկ 41 (2017թ.՝ 28) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2018թ. ընթացքում նշված հանցագործությունների վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 171 (2017թ.՝ 87) անձ:

9 (2017թ.՝ 4) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 52 (2017թ.՝ 23) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 44-ինը (2017թ.՝ 17)՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 53 (2017թ.՝ 51) անձ, որոնցից 5-ը

(2017թ. ՝ 1) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 66 (2017թ. -18) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դեպքերի վերաբերյալ նախապատրաստվել է 396 (2017թ. ՝ 155) նյութ, որոնցից 214-ով (2017թ.՝ 107) հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 311 (2017թ. ՝ 236) քրեական գործ, որոնցից ավարտվել է 133 (2017թ. ՝ 117) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 117 (2017թ. ՝ 94) գործի վարույթ կարճվել է, որոնցից 14-ինը (2017թ. ՝ 11)՝ ոչ արդարացնող հիմքով, իսկ 16 (2017թ. ՝ 23) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 78 (2017թ. ՝ 92) անձ:

17 (2017թ. ՝ 3) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 26 (2017թ. ՝ 24) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 19-ինը (2017թ. ՝ 13)՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 28 (2017թ. ՝ 56) անձ, որոնցից 3-ը (2017թ. ՝ 13) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 39 (2017թ. ՝ 10) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

Պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքերի վերաբերյալ նախապատրաստվել է 164 (2017թ. ՝ 67) նյութ, որոնցից 115-ով (2017թ. ՝ 54) հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 163 (2017թ. ՝ 96) քրեական գործ, որոնցից ավարտվել է 77 (2017թ. - 58) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 74 (2017թ. ՝58) քրեական գործի վարույթ կարճվել է, որոնցից 1-ը (2017թ. ՝ 0)՝ ոչ արդարացնող հիմքով, իսկ 3 (2017թ. ՝ 0) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 23 (2017թ. ՝ 4) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 20 (2017թ. ՝ 4) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 23 (2017թ. ՝ 4) անձի մեղադրանք է առաջադրվել: 2 (2017թ. ՝ 2) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից մեկը (2017թ. ՝ 0)՝ ոչ արդարացնող հիմքով: 6 (2017թ. ՝ 0) անձ դատի է տրվել: 15 (2017թ. ՝ 1) անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

Պաշտոնեական կեղծիքի վերաբերյալ նախապատրաստվել է 143 (2017թ. ՝ 44) նյութ, որոնցից 100-ով (2017թ.՝ 34) հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 139 (2017թ.՝ 103) քրեական գործ, որոնցից ավարտվել է 69 (2017թ.՝ 64) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 51 (2017թ. ՝ 51) գործի վարույթ կարճվել է, որոնցից 10-ինը (2017թ. ՝ 15)՝ ոչ արդարացնող հիմքերով, իսկ 18 (2017թ. ՝ 13) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 117 (2017թ.՝ 61) անձ:

50 (2017թ.՝ 27) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 49-ինը (2017թ.՝ 17)՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 32 (2017թ.՝ 16) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 29 (2017թ.՝ 19) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2019թ.:

Կաշառք ստանալ, տալ, կաշառքի միջնորդություն.

Նշված երեք հանցակազմերի հատկանիշներով ընդհանուր նախապատրաստվել է 197 (2017թ՝63) նյութ, որոնցից 153-ով (2017թ՝57) հարուցվել է քրեականգործ: 2018թ. նշված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է 282 (2017թ՝148) քրեական գործ, որոնցից ավարտվել է 93-ի (2017թ՝ 88) վարույթը, 57-ը կարճվել է, իսկ 36-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Այսինքն՝ ընդհանուր առմամբ 2018թ., նախորդ տարվա համեմատ, մոտ 3 անգամ ավելի են եղել նշված երեք հանցակազմերի հատկանիշներով նախապատրաստված նյութերը, մոտ 2.7 անգամ՝ հարուցված քրեական գործերը և 2 անգամ՝ վարույթում քննված քրեական գործերը: Ի տարբերություն վերոնշյալի՝ 2018թ. մոտ 12%-ով ավելի քիչ են եղել (36-41) մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերը:

Քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուր 241 անձ (2017թ.՝ 201), ինչը նախորդ տարվա համեմատ 20%-ով ավելի է: Դադարեցվել է 10 (2017թ՝.2) մեղադրյալի պաշտոնավարումը: Դատի է տրվել 108 (2017թ՝118) անձ:

Փողերի լվացման դեպքերի առթիվ նախապատրաստվել է 7 նյութ, որոնցով հարուցվել են քրեական գործեր: 2017թ. այս հանցակազմի հատկանիշներով նյութեր չեն նախապատրաստվել և քրեական գործեր չեն հարուցվել: 2018թ. վարույթում քննվել է 12 քրեական գործ, որոնցից ավարտվել է 1-ի վարույթը և մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան: Քրեական հետապնդման է ենթարկվել 6 անձ՝ նախորդ տարվա 5-ի դիմաց: Դատի է տրվել 1 (2017թ՝.5) անձ:

Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու, պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալու դեպքերի առթիվ նախապատրաստվել է 180 (2017թ՝ 4) նյութ, որոնցով հարուցվել է 154 (2017թ.՝ 3) քրեական գործ: Տարվա ընթացքում վարույթում քննվել է ընդհանուր 172 (2017թ՝.11) քրեական գործ, որոնցից 34-ի վարույթը ավարտվել է: Քննված 172 քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 178 անձ (2017թ՝.14): Փաստացի, ինչպես նախապատրաստված նյութերի, այնպես էլ հարուցված և վարույթում քննված քրեական գործերի քանակը, քրեական հետապնդման ենթարկված անձանց թիվը մի քանի տասնյակ անգամ գերազանցում են 2017թ. արձանագրված ցուցանիշները: 7 (2017թ՝.1) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 2018թ. դատի է տրվել 19 (2017թ՝.2) անձ:

Ընդհանուր առմամբ նախորդ տարվա ընթացքում նախաքննության մարմինների վարույթում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուր 960 անձ, որոնցից 470-ը եղել են պաշտոնատար անձինք:

Համեմատության համար նշենք, որ 2017թ. քրեական հետապնդում է հարուցվել 599 անձի նկատմամբ, որոնցից 292-ը՝ պաշտոնատար անձինք:

Նախորդ տարվա ընթացքում քրեական հետապնդման ենթարկված պաշտոնատար անձանց շրջանակը, ըստ գործունեության ոլորտների և պաշտոնների աստիճանի, ունի հետևյալ պատկերը:

1. Ոստիկանության աշխատակիցներ՝ 17 անձ, այդ թվում՝

ա) բաժնի, բաժանմունքի պետեր և տեղակալներ՝ 8 անձ,

բ) անձնագրային խմբի առաջատար մասնագետ՝ 2 անձ,

գ) ՔՀԲ օպերլիազոր՝ 3 անձ,

դ) տարբեր ստորաբաժանումների տեսուչներ՝ 3 անձ,

ե) ոստիկան՝ 1 անձ,

2. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության պաշտոնատար անձինք՝ հարկադիր կատարողներ՝ 3 անձ,

3. ՀՀ ՊԵԿ-ի պաշտոնատար անձինք՝ 14 անձ, այդ թվում՝

ա) ՊԵԿ-ի վարչության պետ և տեղակալ՝ 3 անձ,

բ) ՊԵԿ-ի գլխավոր մասնագետ՝ 1 անձ,

գ) հարկային բաժնի, բաժանմունքի պետ և տեղակալ՝ 3 անձ,

դ) հարկային, մաքսային տեսուչ՝ 5 անձ,

ե) մաքսային անցակետի հերթափոխի պետ և գլխավոր մասնագետ՝ 2 անձ,

4. ՀՀ ԱԻՆ հրշեջ փրկարար՝ 1 անձ,

5. ՀՀ ՔԿ մարզային քննչական վարչության պետ և քննչական բաժնի պետի տեղակալ - 2, ՀՀ ՔԿ քննիչներ (ավագ քննիչ) - 7, դատախազության նախկին քննիչ - 1,

6. ԱԱԾ և զինված ուժեր՝ 135 անձ, այդ թվում՝

ա) ԱԱԾ սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության բաժնի հերթափոխի պետ և ավագ հսկիչ՝ 2 անձ,

բ) ՊՆ զորամասի հրամանատարներ, տարածքային զինկոմիսարիատի բաժնի պետ, զինկոմիսարիատների աշխատակիցներ և այլն՝ 133 անձ:

7. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության աշխատակիցներ՝ 15 անձ, այդ թվում՝

ա) ՔԿՀ-ի պետ, պետի տեղակալ՝ 3 անձ,

բ) ՔԿՀ-ի բաժանմունքի պետ՝ 1 անձ,

գ) հերթապահ՝ 4 անձ,

դ) մասնագետ՝ 7 անձ:

Քրեական հետապնդման են ենթարկվել նաև այլ պաշտոնատար անձինք և հանրային ծառայողներ: Մասնավորապես՝

1. Առողջապահության ոլորտում 14 անձ՝ դատական բժիշկներ, պոլիկլինիկայի և ԲԿ-ների տնօրեններ ու բժիշկներ,

2. Կրթության ոլորտում 35 անձ՝ բուհերի, դպրոցների, մանկապարտեզների և կրթական այլ հաստատությունների տնօրեններ, ուսուցիչներ, ամբիոնի վարիչ, պահեստապետներ, հաշվապահներ,

3. Պետական գնումների ոլորտում 2 անձ՝ ՊՆԿԾ և ՁԲ վարչության պետի տեղակալ, նյութատնտեսական ապահովման դեպարտամենտի ֆինանսական վարչության նախկին պետ,

4. Սոցիալական ապահովության ոլորտում 56 անձ՝ սոցիալական ապահովության ծառայության բաժնի պետեր, մասնագետներ ու ավագ մասնագետներ, տուն-ինտերնատի տնօրեններ, պահեստապետեր, գլխավոր հաշվապահներ, ԲՍՓ հանձնաժողովի վիճակագիր, համայնքապետարանի սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետ, փոստային բաժանմունքների մասնագետներ,

5. Էներգետիկ և բնական պաշարների ոլորտում 6 անձ՝ բնապահպանության և ընդերքի տեսչության տարածքային բաժնի պետ, պետական ավագ տեսուչ և տեսուչ, անտառապետության անտառապետ, պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ և անտառտնտեսության մասնաճյուղի տնօրեն,

6. Տեղական ինքնակառավարման ոլորտում 73 անձ՝ համայնքապետեր, համայնքապետի տեղակալներ, մասնագետ-տնտեսվարներ, հաշվապահներ, քարտուղար, գանձապահներ, մարզպետարանի բաժնի պետ, կոմունալ ծառայության տնօրեններ, քաղաքապետարանի բաժնի պետեր, մասնագետներ և տեսուչներ,

7. Այլ ոլորտներում 91 անձ՝ հիմնականում առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողներ, ՍՊԸ-ների տնօրեններ, հաշվապահներ, պահեստապետեր, անտառապահներ:

2018թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի՝ միայն նախապատրաստված և ավարտված 100 նյութերով ու քննված և ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված գույքային վնասը կազմել է 4.629.549.320 ՀՀ դրամ, ինչը 12 անգամ գերազանցում է 2017թ. (361.445.834 ՀՀ դրամ) արդյունքը: Պատճառված ընդհանուր վնասից վերականգնվել է 3.938.873.757 ՀՀ դրամը, որը 2017թ. ցուցանիշը գերազանցում է 15 անգամ (252.070.385 ՀՀ դրամ):

2018թ. ընթացքում նախաքննության մարմինների կողմից հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքների վերացման նպատակով իրավասու մարմիններին ուղարկվել է 75 միջնորդագիր:

2018թ. ընթացքում ՀՀ դատախազությունում շարունակվել են իրականացվել նաև իրավական, ինչպես նաև ինստիտուցիոնալ և կազմակերպական բնույթի լուրջ բարեփոխումներ, որոնք ապահովել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կանխարգելման, դրանց հայտնաբերման քրեական հետապնդման աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

Կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի, դրա շրջանակում դատախազական հսկողության վիճակը, այդ գործընթացում առաջացող խնդիրները, պետությանը պատճառված վնասների հայտնաբերման, վերականգնման ուղղությամբ իրականացվող աշխատանքները պարբերաբար քննարկման առարկա են դարձել 2018թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում դատախազության ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ անցկացված օպերատիվ խորդրդակցությունում:

Այս համատեքստում, կարևորվել է հանրապետության ողջ տարածքում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարում դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից նախաձեռնողականությամբ օպերատիվ-հետախուզական գործառույթներով օժտված տարածքային մարմինների աշխատանքներն էապես ակտիվացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ստուգող, տեսչական մարմինների հետ բարձր մակարդակի համագործակցության, ձեռնարկվող միջոցառումների օպերատիվության ապահովումը:

Դատախազության կողմից մշտապես կարևորվել է նաև վարույթի ընթացքում քրեական հետապնդումներին զուգահեռ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կատարման մեջ մեղադրվողների գույքի վրա կալանք դնելու, ինչպես նաև պետությանը պատճառված վնասի վերականգնման ուղղությամբ իրավական բոլոր այլ մեխանիզմների գործուն կիրառման անհրաժեշտությունը:

Օպերատիվ խորհրդակցությունների ընթացքում նսև պարբերաբար նշվել է, որ հիմնական շեշտադրումը պետք է կատարվի կոռուպցիայի կանխարգելման վրա: Այդ նպատոկի իրագործման նկատառումով ՀՀ դատախազությունը ակտիվորեն ներգրավված է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ նոր մոդելների ներդրման շուրջ ընթացող քննարկումներում:

Ինչպես 2017թ.-ին, այնպես էլ՝ 2018թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում պարբերաբար անցկացվել են քննարկումներ կոռուպցիոն բնույթի քրեական գործերով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների և նախաքննություն իրականացնող քննիչների մասնակցությամբ: Վերջիններիս գործունեության ընթացքում հայտնաբերված թերացումներին ու բացթողումներին՝ համապատասխան գրություններով հրավիրվել է հետաքննության և քննչական բաժինների ղեկավարների ուշադրությունը, որոնք էլ յուրաքանչյուր դեպք քննարկել են օպերատիվ խորհրդակցություններում:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քննվող քրեական գործերով անցնող, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնող անձանց վերաբերյալ նախաքննության ընթացքում պարտադիր քննության առարկա դարձնել նաև ապօրինի հարստացման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առերևույթ առկայությունը:

Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ դատախազությունն ակտիվ համագործակցություն է իրականացրել ՀՀ հաշվեքննիչ պալատի և պետական վերահսկողական ծառայության հետ:

Մասնավորապես, ՀՀ հաշվեքննիչ պալատի /09.04.2018թ.-ից հանդիսանում է ՀՀ վերահսկիչ պալատի իրավահաջորդը/ կողմից իրականացրած վերահսկողության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազություն է ուղարկվել.

ա) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ԿԱ ՊԵԿ և Երևանի քաղաքապետարանի պահանջով ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից հարուցված կատարողական վարույթների մասով կազմված արձանագրությունը:

Արձանագրված խախտումների և խախտումները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի կողմից հարուցվել է 7 քրեական գործ՝ խաբեության եղանակով առանձնապես խոշոր չափերի, ընդհանուր առմամբ 1.379.354.000 ՀՀ դրամի վնաս պատճառելու և պետական ծառայություն իրականացնող պատասխանատու պաշտոնատար անձանց, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների, կողմից այլ ծանր հետևանքներ առաջացրած պաշտոնեական անփութություն կատարելու, այսինքն՝ այնպիսի հանցավոր արարքների

համար, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, որի նախաքննությունը կատարվում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

2016-2017թթ. ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջև գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունում առկա իրավական, այնպես էլ՝ ծրագրային բնույթի բացթողումների և թերությունների վերացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար 2018թ. հունիսի 07-ին համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարին և ՀՀ ոստիկանապետին, ինչպես նաև 12.11.18թ. միջնորդագիր է ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատարին նշված պետական շահերի խախտման պատճառների և նպաստող պայմանների վերացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

բ) «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասով կազմված արձանագրությունը:

Արձանագրված խախտումների և խախտումները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը:

գ) ՀՀ գյուղատնտեսության նախարարության ՀՀ-ում տավարաբուծության զարգացման ծրագրի մասով կազմված արձանագրությունը:

Արձանագրված խախտումների և խախտումները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի կողմից խախտումների փաստերի 7 դրվագներով կազմված փաստաթղթերը ուղարկվել են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի, Արարատի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերի դատախազություններ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ և 181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու հարցերը քննարկելու և հետագա ընթացքը լուծելու համար:

Արդյունքում Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի և Վայոց ձորի մարզերի դատախազություններ ուղարկված տվյալներով հարուցվել է 6 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի (խարդախության) և 315-րդ հոդվածի 1-ին մասի (պաշտոնական անփութության) հատկանիշներով:

դ) Արմավիրի մարզի Նորակերտ համայնքում հաշվեքննության ընթացքում կազմված 4 արձանագրությունների պատճենները:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն կողմից նշված գրությունը և կից փաստաթղթերը ուղարկվել են Արմավիրի մարզի դատախազություն՝ Արմավիրի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով քննվող թիվ 57100418 քրեական գործին կցելու և համատեղ ընթացքը լուծելու համար:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ուսումնասիրվել են ՀՀ վերահսկիչ պալատի կողմից հրապարակված 2017 ընթացիկ հաշվետվությունները:

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ վերահսկիչ պալատի

խորհրդի 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ 8/1 որոշմամբ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից վերահսկողություն է իրականացվել ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման՝ մասնավորապես, «Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ» ծրագրի իրականացման համար պետական բաժնեմասով «Մելիորացիա» ՓԲ ընկերությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման օրինականության նկատմամբ:

Արձանագրված խախտումների և խախտումները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ դատախազություն է ուղարկվել 7 տեղեկանք.

1. ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի թիվ 001 հանձնարարագրի հիման վրա ՀՀ ԷԵԲՊՆ <<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ-ում իրականացվող ուսումնասիրության ընթացքի վերաբերյալ տեղեկանքը և կից նյութերը, որոնք ուղարկվել են Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու և ընթացքը լուծելու համար: Նախապատրաստված նյութերով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասին 1-ին կետով հարուցվել է քրեական գործ՝ <<ԲԷՑ>> ՓԲԸ-ի հաշվեկշռում եղած 593.276.712 ՀՀ դրամ արժողության և 2007 թվականի նոյեմբերի 6-ին «Էներգանորոգում» ՓԲԸ տեղափոխված ավտոտրանսֆորմատորից 26.1 տոննա պղնձե մալուխ և 35.8 տոննա էլեկտրատեխնիկական մետաղ յուրացնելու դեպքի առթիվ:

2. ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի հանձնարարագրի հիման վրա ՀՀ ԷԵԲՊՆ <<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ-ում իրականացվող ուսումնասիրության ընթացքի վերաբերյալ 2-րդ տեղեկանքը և կից նյութերը, որոնք ուղարկվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու և ընթացքը լուծելու համար: Նախապատրաստված նյութերով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության պաշտոնատար անձի (անձանց) կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով, ՓԲ ընկերությանը պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 325.941.382 ՀՀ դրամ արժողությամբ՝ Տ-5 ՏՈԴՆ 40000/110 տրանսֆորմատորի յուրացման դեպքի առթիվ:

3. ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի թիվ 008 հանձնարարագրի հիման վրա <<Լուսանշան>> ՊՈԱԿ-ի 2016-2018թթ. գործունեության վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքը և կից նյութերը: Ստացված նյութերը ուսումնասիրվել են ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում, որի արդյունքում, ղեկավարվելով

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, «Լուսանշան» ՊՈԱԿ-ի տնօրենը նախազգուշացվել է պետությանը հասցրած վնաս կամովին հատուցելու մասին: Նախազգուշացման արդյունքում՝ արձանագրված՝ 209.787.000 դրամ վնասն ամբողջությամբ վերականգնվել է:

4. ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի թիվ 008 հանձնարարագրի հիման վրա «Լուսանշան» ՊՈԱԿ-ի 2016-2018թթ. գործունեության վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված 2-րդ տեղեկանքը և կից նյութերը՝ ավել հաշվարկված աշխատավարձերի և իրականացված աշխատանքների ծավալների հավելագրման վերաբերյալ:

Ստացված նյութերը ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու և ընթացքը լուծելու համար:

Նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի և 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ՝ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի և ՀՀ ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքը չարաշահելու և պաշտոնեական դիրքի օգտագործմամբ առանձնապես խոշոր չափերով յուրացում կատարելու դեպքի առթիվ:

5. ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի ներկայացրած՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից ծառայություն ուղարկված տեղեկանքը և կից փաստաթղթերը, որոնք ուղարկվել են Լոռու, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի դատախազություններ՝ դրանցում ներկայացված փաստերում հանցագործության հատկանիշների առերևույթ առկայությունը ստուգելու համար:

Ձեռնարկված ստուգողական գործողությունների և նյութերի նախապատրաստման արդյունքում ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ՝ Լոռու մարզի Շահումյան գյուղի բնակիչ Մարգարիտա Մանվելովայի կողմից 2018թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր կեղծ քաղաքաշինական փաստաթղթեր ներկայացնելու և դրանց հիման վրա իրավունքի պետական գրանցում կատարվելու դեպքի առթիվ:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի և 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ՝ Տավուշի մարզի Աչաջուր համայնքապետարանի համապատասխան պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու և «էկո ֆրուտ» ՍՊ ընկերության համապատասխան աշխատակցի կողմից կեղծ փաստաթուղթ օգտագործելու դեպքի առթիվ:

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնում նախապատրաստված նյութերով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

6. ՀՀ պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղարի կողմից ներկայացված՝ Օլեգ Դուլգարյանի և մյուսների կողմից ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը հասցեագրված դիմումի հիման վրա Լոռու մարզի Ախթալա համայնքի Մեծ Այրումի համայնքապետարանում իրականացված վերահսկողության արդյունքում ձեռք բերված տվյալները, որոնք ուղարկվել են Լոռու մարզի դատախազության քննարկմանը:

Ուղարկված փաստաթղթերը կցվել են ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնում՝ Օլեգ Դուլգարյանի նախկին հաղորդումների հիման վրա Մեծ Այրում համայնքի նախկին ղեկավար Սահակ Նազարյանի կողմից պաշտոնեական դիրքի օգտագործմամբ յուրացումներ կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված քրեական գործին՝ համատեղ ընթացքը լուծելու համար:

7. ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքապետարանից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքների վերաբերյալ ծառայության կողմից կազմված տեղեկանքը, որն ուղարկվել է Կոտայքի մարզի դատախազություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու և ընթացքը լուծելու համար: Նախապատրաստված նյութերով ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի ու 308-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ՝ Նոր Գեղիի համայնքապետարանի համապատասխան պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման և պաշտոնեական դիրքի օգտագործմամբ խոշոր չափերի յուրացում կատարելու դեպքի առթիվ:

Բացի դրանից, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ դատախազությաւն կողմից ակտիվ համագործակցություն է իրականացվել նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /OECD/, Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի /GRECO/, ԱՊՀ և ԵՄ-ի շրջանակներում:

Մասնավորապես, 2018թ. հուլիսի 2-ին Երևանում անցկացվել է ԱՊՀ Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի հերթական նիստը, որի ժամանակ ՀՀ գլխավոր դատախազը ընտրվել է այդ կազմակերպության նախագահ:

Ամփոփելով պետք է փաստել, որ 2018 թվականի ընթացքում ՀՀ քրեական հետապնդման մարմիններն աննախադեպ արդյունքներ են արձանագրել կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում՝ ինչպես քրեական հետապնդման, այնպես էլ՝ պետությանը պատճառված վնասի հայտնաբերման և վերականգնման ուղղություններով, որի հիմնական նախադրյալը կարելի է համարել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում հանրության ակտիվ ներգրավվածությունը և նախաձեռնողականությունը:

4. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ

2018թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 2272 գործ՝ 2931 անձի վերաբերյալ (2017թ.՝ 2747 գործ՝ 3508 անձի վերաբերյալ), որոնցից 2199-ը 2858 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ, իսկ 73-ը 73 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար:

Դատարաններում քննվել և ավարտվել է 2336 քրեական գործ՝ 2876 անձի նկատմամբ (2017թ.՝ 2394 գործ՝ 2949 անձի վերաբերյալ, 2016թ.՝ 2339 քրեական գործ՝ 2905 անձի նկատմամբ): Նշված քրեական գործերից 1663-ով դատապարտվել է 2069 անձ (2017թ.՝ 2047 գործով՝ 2509 անձ, 2016թ.՝ 1969 գործով 2464 անձ): 61 քրեական գործով 62 անձի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց (2017թ.՝ 50 քրեական գործով՝ 50 անձի նկատմամբ, 2016թ.՝ 46 քրեական գործով՝ 46 անձի նկատմամբ):

2018թ. դատարաններում քննված և ավարտված՝ 2876 անձի վերաբերյալ 2336 քրեական գործից 886-ը կամ 31.0%-ը եղել է ոչ մեծ ծանրության՝ 994 անձի նկատմամբ (34.5%), 839-ը՝ միջին ծանրության (36.0%)՝ 1079 անձի նկատմամբ (37.5%), 550-ը՝ ծանր (23.5%)՝ 712 անձի նկատմամբ (24.7%) և 61-ը՝ առանձնապես ծանր (2.6%)՝ 91 անձի նկատմամբ (3.1%):

2017թ. ընթացքում դատարաններում քննված և ավարտված՝ 2949 անձի վերաբերյալ 2394 քրեական գործից 1001-ը եղել է ոչ մեծ ծանրության (41.8%)՝ 1139 անձի նկատմամբ (38.6%), 876-ը՝ միջին ծանրության (36.6%)՝ 1112 անձի նկատմամբ (37.7%), 470-ը՝ ծանր (19.6%)՝ 643 անձի նկատմամբ (21.8%) և 47-ը՝ առանձնապես ծանր (2.0%)՝ 55 անձի նկատմամբ (1.9%):

2018թ. ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 11.5%-ով, միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտվածների թիվը նվազել է 4.2%-ով, ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը աճել է՝ 17.0%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվն աճել է 29.8%-ով:

Դատապարտված անձանցից 75-ը եղել են անչափահասներ (2017թ.՝ 93 անձ, 2016թ.՝ 77 անձ), 165-ը՝ կին (2017թ.՝ 233 կին, 2016թ.՝ 236 կին), 249-ը՝ նախկինում դատված (2017թ.՝ 301 անձ, 2016թ.՝ 296 անձ), 53-ը՝ օտարերկրացի (2017թ.՝ 49 անձ, 2016թ.՝ 51 անձ): 20 գործով 22 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2017թ.՝ 18 գործ՝ 24 անչափահաս, 2016թ.՝ 22 գործ՝ 28 անչափահաս):

2018թ. դատապարտված անչափահասների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 19.3%-ով, դատապարտված կանանց թիվը՝ 29.1%-ով, իսկ նախկինում հանցանք կատարած անձանց թիվը՝ 17.2%-ով:

2018թ. ՀՀ դատարանների կողմից կայացվել է լրիվ կամ մասնակի արդարացման 202 դատական ակտ 241 անձի վերաբերյալ, որոնցից 212-ը (88.0%) ձեռք է բերել լրիվ, իսկ 29-ը (12.0%)՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ:



Համեմատության համար նշենք, որ 2017թ. կայացվել է լրիվ կամ մասնակի արդարացման 143 դատական ակտ 180 անձի վերաբերյալ, որոնցից 142-ը (78.9%) ձեռք է բերել լրիվ, իսկ 38-ը (21.1%)՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ:

2016 թվականի ընթացքում ՀՀ դատարանների կողմից կայացվել է լրիվ կամ մասնակի արդարացման 160 դատական ակտ 187 անձի վերաբերյալ, որոնցից 140-ը ձեռք է բերել լրիվ արդարացվածի կարգավիճակ, իսկ 47-ը՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ:

Այսինքն՝ 2017 թվականի համեմատությամբ 2018 թվականին արդարացման դատավճիռների թիվն աճել է 59-ով, իսկ արդարացվածների թիվը՝ 61-ով:

Վերը նշված թվերի մեջ ներառված են նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ դատարանների կողմից կայացված որոշումները /14 դատական ակտ՝ 16 անձի վերաբերյալ/, որոնցով անձինք ձեռք են բերել լրիվ արդարացվածի կարգավիճակ:

2018թ. կայացված 202 լրիվ կամ մասնակի արդարացման դատական ակտերից 104-ը /96-ը լրիվ, 8-ը մասնակի/՝ 119 անձի վերաբերյալ /108-ը լրիվ, 11-ը մասնակի/ 2018 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մտել է օրինական ուժի մեջ:

Արդարացված 241 անձից 176-ը (73.0%) արդարացվել է ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից, 58-ը (24.0%)՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից, իսկ 7-ը (3.0%)՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից:

2018թ. ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից լրիվ կամ մասնակի արդարացված 9 անձի նկատմամբ կայացված դատական ակտերը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բեկանվել են:

Արդարացված անձանց մեղսագրված հանցագործությունների մեջ առավել շատ տարածված են ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցագործություններով առաջադրված մեղադրանքների դեպքերը, մասնավորապես՝ ոչ մեծ ծանրության հանցագործության մեղադրանքով արդարացվել է 97 անձ (40.2%), միջին ծանրության հանցագործության մեղադրանքով՝ 71 անձ (29.4%), ծանր հանցագործության մեղադրանքով՝ 55 անձ (22.8%), իսկ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով՝ 9 անձ (3.7%):

Համեմատության համար նշենք, որ 2017թ. արդարացված անձանց մեղսագրված հանցագործությունների մեջ առավել շատ տարածված են եղել միջին ծանրության և ծանր

հանցագործություններով առաջադրված մեղադրանքների դեպքերը, մասնավորապես՝ ոչ մեծ ծանրության հանցագործության մեղադրանքով արդարացվել է 34 անձ (18.9%), միջին ծանրության հանցագործության մեղադրանքով՝ 67 անձ (37.2%), ծանր հանցագործության մեղադրանքով՝ 59 անձ (32.8%), իսկ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով՝ 7 անձ (3.9%):

Արդարացվածներին առավել հաճախ մեղսագրվել են ՀՀ քրեական օրենսգրքի ներքոհիշյալ հոդվածներով սահմանված հանցագործությունների կատարում.

- ոչ մեծ ծանրության հանցագործության մեղադրանքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ 64 անձ, 118-րդ հոդվածով՝ 3 անձ, 130-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 3 անձ, 157-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 անձ, 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 անձ,
- միջին ծանրության հանցագործության մեղադրանքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 9 անձ, 131-րդ հոդվածի 1-ին մասով՝ 5 անձ, 308-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 անձ, 316-րդ հոդվածով՝ 3 անձ, 327-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 անձ, 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 3 անձ,
- ծանր հանցագործության մեղադրանքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասով՝ 9 անձ, 131-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 4 անձ, 182-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 4 անձ, 266-րդ հոդվածի 1-ին մասով՝ 4 անձ,
- առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-104-րդ հոդված 1-ին 2-րդ մասերով՝ 3 անձ:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ լրիվ կամ մասնակի արդարացված 241 անձի նկատմամբ առավել հաճախ ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

Այսպես.

Վերը նշված 241 անձից 191-ի (79.3%) նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված է եղել ստորագրություն չհեռանալու մասին, 4-ի (1.7%) նկատմամբ՝ հրամանատարության հսկողությանը հանձնելը, 4-ի (1.7%) նկատմամբ՝ ծնողների հսկողությանը հանձնելը, 5-ի (2.0%) նկատմամբ խափանման միջոց չի ընտրվել, 37-ի (15.3%) նկատմամբ կալանքը, որոնցից 11-ի (համապատասխանաբար՝ 29.7%, 4.5%) նկատմամբ կիրառվել է գրավ:

Այսինքն, փաստացի 26 անձ գտնվել է կալանքի տակ և կայացված վերջնական դատական ակտով լրիվ կամ մասնակի արդարացվել:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ լրիվ արդարացված 212 անձից ընդամենը 11-ի կամ 5.1%-ի նկատմամբ է որպես խափանման միջոց ընտրված եղել կալանավորումը:

Լրիվ և մասնակի արդարացված 241 անձից 237-ը կամ 98.3%-ը հանդիսացել են չափահասներ, իսկ 4-ը կամ 1.7%-ը՝ անչափահասներ:

Արդարացվածներից 225-ը կամ 93.3%-ը հանդիսացել են արական սեռի ներկայացուցիչներ, իսկ 16-ը կամ 6.7%-ը՝ իգական:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ արդարացման դատավճիռների թվի աճը հիմնականում պայմանավորված է՝ թմրամիջոցների զգալի չափը սահմանող իրավական ակտի՝ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը,

դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշման ընդունմամբ, որի համաձայն՝ մի շարք տեսակի թմրամիջոցների զգալի չափերի ստորին շեմը մի քանի անգամ բարձրացվել է: Արդյունքում թմրամիջոց ապօրինի պահելու համար դատի տրված մի շարք անձանց արարքները փաստացի ապաքրեականացվել են և նրանց վերաբերյալ կայացվել են արդարացման դատավճիռներ:

Արդարացման դատավճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մեծամասնությունը պայմանավորված է մեղադրանքի հիմքում դրված ապացույցների բավարարության կապակցությամբ դատական և մինչդատական գնահատականների տարբերությամբ: Այսինքն՝ դատարանները մի շարք դեպքերում մեղադրանքի հիմքում դրված ապացույցները բավարար չեն համարել այն հիմնավորելու համար: Արձանագրելով, որ ապացույցների ներքին համոզմամբ գնահատումը կարող է օբյեկտիվորեն ենթադրել դրանց տարբեր գնահատականներ, այդուհանդերձ նշենք նաև, որ արդարացման առանձին դատավճիռներում ապացույցների բավարարությանը տրված գնահատականների հետ համաձայնել հնարավոր չէ: Դրանց անընդունելիության հիմնական պատճառներից մեկն, ի թիվս այլնի այն է, որ ապացույցների գնահատման ժամանակ մինչդատական վարույթում ձեռք բերված ապացույցներին մեխանիկորեն տրվում է նվազ ապացուցողական նշանակություն:

Ապացույցների գնահատման գործընթացում առկա և արդարացման, ինչպես նաև արարքը վերաորակող մեղադրական դատավճիռներում արտահայտվող լրջագույն խնդիր է հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշի առկայության գնահատման միջոցներից մեկի՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի անսահմանափակ մեկնաբանությունը: Կասկածի տակ չդնելով այս սկզբունքի և, մասնավորապես, չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու հիմնարար կանոնի դատավարական արժեքը, հստակեցնենք, որ այն ենթադրում է ոչ թե ցանկացած, այլ ողջամիտ, ավելի ճիշտ՝ խելամիտ փաստարկները ստուգելու և հերքելու քրեական հետապնդման մարմնի պարտականություն: Իսկ այդ չափանիշներից դուրս փաստարկները, որոնք նույնիսկ հնարավոր չէ ստուգել, չեն կարող կասկածի տակ դնել մեղադրանքը հիմնավորող ապացույցների բավարարությունը: Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքն առանձին հանցագործությունների վերաբերյալ գործերով և առանձին իրավիճակներում հնարավոր է համարում չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու կանոնի բացարձակության սահմանափակումը: Այդ իրավիճակներն առավելապես վերաբերում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերին, որոնցով էլ խնդիրներ են արձանագրվել հաշվետու ժամանակահատվածում:

Ուսումնասիրությունը վկայում է, որ էապես նվազել են ապացույցների անթույլատրելիության հանգեցնող քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, ինչպիսին են քննչական գործողություններ կատարելիս դատավարության լեզվի սկզբունքի, քննչական գործողությունների կատարմանը ընթերակաների մասնակցության կանոնների, վկայի դատավարական կարգավիճակում՝ առանց մեղադրյալի նվազագույն իրավունքների ապահովման, անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննության դատավարական կարգի խախտումները:

2018թ. 503 քրեական գործ՝ 593 անձի վերաբերյալ կարճվել է (2017թ.՝ 202 քրեական գործ՝ 247 անձի նկատմամբ), որոնցից 124-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 329-ը՝ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված 1-ին մասի 13-րդ կետով, 10-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, 66-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 64-ը՝ այլ հիմքով:

2018թ. դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասն ընդհանուր առմամբ կազմել է 1.862.731.779 ՀՀ դրամ (2017թ.՝ 7.361.824.077 ՀՀ դրամ), որից 792.361.680 (2017թ.՝ 430.717.815 ՀՀ դրամ) ՀՀ դրամը՝ պետությանը պատճառված, 1.070.370.099 ՀՀ դրամը (2017թ.՝ 6.931.106.262 ՀՀ դրամ)՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված վնաս:

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է ընդամենը 527.374.159 ՀՀ դրամ (2017թ.՝ 337.692.962 ՀՀ դրամ), որից 70.340.488 ՀՀ դրամը (2017թ.՝ 77.098.393 ՀՀ դրամ)՝ պետությանը, 605.572.671 ՀՀ դրամը (2017թ.՝ 260.594.569 ՀՀ դրամ)՝ իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց պատճառված վնասներից:

2018թ. դատարաններում քննված քրեական գործերից 843 գործով 978 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ, որը կազմում է քննված գործերի 36.1%-ը (2017թ.՝ 1.063 գործով, որը կազմում է քննված գործերի 44.4%-ը):

Ուսումնասիրությունը վկայում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցի կապակցությամբ դատախազի դիրքորոշման հիմքերի հստակության, այդ կապակցությամբ մոտեցումների միասնականացման խնդիրը հիմնականում լուծվել է ՀՀ դատախազության կոլեգիայի որոշմամբ տրված՝ այդ առարկությունների հիմքերը սահմանող մեկնաբանությունների հիման վրա, սակայն դեռևս առկա են դեպքեր, երբ դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ մեղադրողների միջնորդությունները չեն ընդունվել և քրեական գործերը քննվել են արագացված կարգով, քանի որ ՀՀ դատախազության կոլեգիայի որոշմամբ սահմանված պայմանները, մեղադրական եզրակացությունները հաստատելու մասին դատախազների որոշումներում ներկայացվել են առանց հիմնավորումների:

2017թ. դատական քննության ընթացքում 29 գործով 36 անձի նկատմամբ մեղադրողները որոշում են կայացրել առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին (2017թ.՝ 19 գործ, 26 անձ):

2018թ. դատապարտված 2069 անձից 891-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 43.1%-ը: 2017թ. 2509 անձից ազատազրկման է դատապարտվել 974-ը կամ 38.8%-ը: Ինչպես 2017 թվականին, այնպես էլ 2018 թվականին որևէ անձ ցմահ ազատազրկման չի դատապարտվել:

Ընդհանուր դատապարտվածների մեջ կալանքի է դատապարտվել 28 անձ (2017թ.՝ 65 անձ): Այսինքն՝ կալանքի դատապարտված անձանց քանակը ընդհանուր դատապարտված անձանց մեջ կազմում է 1.3%:

Տուգանքի է դատապարտվել 661 անձ (2017թ.՝ 802 անձ): Այսինքն՝ տուգանքի դատապարտված անձանց քանակը ընդհանուր դատապարտված անձանց մեջ կազմում է 31.9%:

487 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 23.5%-ը, նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2017թ.՝ 663 անձի կամ 26.4%-ի նկատմամբ): Դատապարտված անձանցից, որոնց նկատմամբ նշանակված պատիժը

պայմանականորեն չի կիրառվել, 153-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 184-ը՝ միջին ծանրության, 149-ը՝ ծանր, 1-ը՝ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ:

2018թ. դատապարտված 8 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը (2017թ.՝ 13 անձի, 2016թ.՝ 9 անձի նկատմամբ) և նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

2018թ. դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների է դատապարտվել նախնական կալանքի տակ գտնվող 39 անձ (2017թ.՝ 43), որոնք ազատ են արձակվել դատական նիստերի դահլիճից: Դատարանների կողմից նախնական կալանքի տակ չգտնվող 402 անձ դատապարտվել է ազատազրկման (2017թ.՝ 426):

Անդրադառնալով պատժողական քաղաքականության խնդիրներին՝ փաստենք, որ մինչ օրս ուսումնասիրության և քննարկման առարկա դարձած հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, որոնցով սահմանվել են պատժողական քաղաքականության որոշակի ուղղություններ, յուրաքանչյուր դեպքում պատիժ միջնորդելիս դրա տեսակը, չափը, այն կրելու նպատակահարմարությունը գնահատելու չափանիշների առումով արձանագրվել է պրակտիկայի միասնականացման միտում: Այնուհանդերձ, պատժողական քաղաքականության ոլորտում խնդիրները քիչ չեն և որոշակի տևական ժամանակահատվածում դրա դրսևորումների հաշվառմամբ գնահատվում է կոնկրետ տարածքում այդ քաղաքականության հիմնավորվածությունը՝ անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնելու և, ի վերջո, մի կողմից համապատասխան տեղային առանձնահատկություններին, մյուս կողմից՝ ընդհանուր պատժողական քաղաքականությանը դրանց համապատասխանությունն ապահովելու համար:

Առանձին վերաբերմունք է պահանջում անչափահասների նկատմամբ պատժողական քաղաքականությունը՝ վերջիններիս բնութագրող հոգեբանական առանձնահատկություններին համապատասխանելու և դրանց հաշվառմամբ նշանակված պատժի նպատակների իրացումն ապահովելու համար: Այդ համատեքստում անվիճելի է, որ պատժողական քաղաքականությունը փոխվում է հօգուտ ազատազրկման ձևով պատժի նվազեցման և հանցանք կատարած անչափահասներին ուղղելու առավել արդյունավետ քրեաիրավական գործիքակազմի կիրառման: Այս առումով հատկապես կարևորվում է անչափահասների նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում նրանց ուղղմանը նպաստող լրացուցիչ պարտականությունների սահմանումը և պատժի փոխարեն քրեաիրավական ներգործության այլ՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը:

2018 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 321 վերաքննիչ բողոք, որոնցից 13-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 4-ը՝ վարույթ չի ընդունվել, իսկ 3 բողոք հետ է վերցվել վերադաս դատախազի կողմից: Բերված բողոքներից 98-ը կամ 30.5%-ը եղել են արդարացման (2017թ.՝ 79 կամ 21.4%), 9-ը կամ 2.8%-ը՝ կարճման (2017թ.՝ 11 կամ 2.8%), 229-ը կամ 71.3%-ը՝ պատժի մեղմության (2017թ.՝ 209 կամ 56.6%), 2-ը կամ 0.6%-ը՝ պատժի խստության (2017թ.՝ 2 կամ 0.5%), 22-ը կամ 6.8%-ը՝ արարքի վերաորակման դեմ (2017թ.՝ 31 կամ 8.4%), իսկ 35-ը կամ 10.9%-ը (2017թ.՝ 32-ը կամ 8.6%)՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 75-ը կամ 23.4%-ը բավարարվել է, 156-ը կամ 48.6%-ը՝ մերժվել է, 3-ով կամ 0.9%-ով կայացվել է այլ որոշում, 87-ով կամ 27.1%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների դեմ բերված և նախորդ տարվանից փոխանցված վերաքննիչ բողոքները 495-ն են, որոնցից 3-ը հետ է վերցվել, 7-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 3-ը կամ 1.4%-ը եղել է արդարացման, 4-ը կամ 0.8%-ը՝ կարճման դեմ, 20-ը կամ 4.0%-ը՝ պատժի մեղմության դեմ, 355-ը կամ 71.7%-ը պատժի խստության դեմ, 11-ը կամ 2.2%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 89-ը կամ 18.0%-ը՝ այլ հիմքով, 3-ը կամ 0.6%-ը՝ քաղաքացիական հայցի մասով:

Հիշյալ բողոքներից բավարարվել է 53-ը կամ 10.7%-ը, 35-ը կամ 7.1%-ը բավարարվել է մասնակի, 247-ը կամ 49.9%-ը մերժվել է, 21-ով կամ 4.2%-ով կայացվել է այլ որոշում, 129-ով կամ 26.1%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2018 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների կողմից դատական ակտերի դեմ բերված 90 վճռաբեկ բողոքից և նախորդ տարվանից փոխանցված 27 բողոքից 21-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 84-ով որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Ներկայացված բողոքներից 12-ն ընդունվել է վարույթ, որոնցից 6-ը բավարարվել է, 6-ի քննությունն ընթացքի մեջ է:

Պետք է նշել, որ 2018թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների բողոքներով ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք հարցերի վերաբերյալ կարևոր իրավական դիրքորոշումներ է արտահայտել:

Մասնավորապես.

1. *Լուկաշ Վերանյանի* վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանը հստակեցնելով վերաքննիչ բողոքի հիմքի և հիմնավորումների սահմաններից դուրս գալու դատավարական կարգի վերաբերյալ առկա հարցերը իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(…) դատական ակտի բեկանման օրենսդրի կողմից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «անվերապահ» պայմանն իրենից ենթադրում է, որ վերադաս դատարանն իրավասու է դուրս գալու բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից այն բացառիկ դեպքերում, երբ եզրահանգում է, որ ստորադաս դատարանը թույլ է տվել այնպիսի դատական սխալ, որը դատական ակտի իմպերատիվ բեկանման հիմք է: Այսինքն՝ դատական վերանայման սահմաններից դուրս գալու համար անհրաժեշտ է, որ վերադաս դատական ատյանը եզրահանգի, որ ստորադաս դատարանը ոչ թե առերևույթ (prima facie), այլ հաստատապես թույլ է տվել դատական ակտի անվերապահ բեկանման հիմք հանդիսացող դատական սխալ: Այլ կերպ՝ ստորադաս դատարանի կողմից այդպիսի դատական սխալ թույլ տրված լինելը պետք է կասկած չհարուցի ու աներկբա լինի, այլ ոչ թե այդ հարցի վերջնական պարզման նպատակով պահանջվի լրացուցիչ քննության իրականացում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն եզրահանգում է, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքի հնարավոր առկայության կասկածի ուժով դատավարական կողմի բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալը իրավաչափ չի կարող համարվել (…)» *(Տե՛ս Լուկաշ Վերանյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ԵԿԴ/0074/01/17 որոշման 13.1-րդ կետը):*

2. *Հայկ Վարդանյանի* վերաբերյալ գործով հստակեցնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցը կրկին հետազոտելու դատավարական կարգի վերաբերյալ առկա հարցերը՝ ՀՀ վճռաբեկ

դատարանը իրավական դիրքորոշումներ է արտահայտել հետևյալ երկու հարցերի կապակցությամբ.

1) վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության դատավարական կարգի պահպանման կանոնների վերաբերյալ,

2) վերաքննիչ դատարանի կողմից ապացույցների հետազոտման կարգի պահպանման վերաբերյալ:

Այսպես, *առաջին հարցի* կապակությամբ իրավական դիրքորոշում է ձևավորվել այն մասին, որ «(…) վերաքննիչ դատարանը գործը պետք է քննի վերաքննության կարգով, ինչպես նաև իրավասու է գործը դատական քննության նշանակելու մասին որոշման մեջ այն վճռաբեկության կարգով քննելու մասին նշում կատարելուց հետո փոխելու այդ որոշումը և գործը քննելու վերաքննության կարգով ոչ միայն, եթե հիմնավոր է համարում կողմի այն պարզաբանումները, որ նոր նյութեր կամ նոր ապացույցներ հավաքելու կամ հետազոտելու միջնորդություններ Վերաքննիչ դատարան ներկայացնելը պայմանավորված է նրանով, որ դրանք առաջին ատյանի դատարան ներկայացնելու օբյեկտիվ հնարավորությունը բացակայել է, կամ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից անհիմն մերժվել է, այլև եթե Վերաքննիչ դատարանն ինքը անհրաժեշտ է համարում հետազոտել գործում առկա որևէ ապացույց: Վերաքննիչ և վճռաբեկ վերանայման ռեժիմների որակական տարբերությունն այն է, որ ի տարբերության վճռաբեկության կարգի, որը ենթադրում է բացառապես իրավունքի հիմքով վերանայում, վերաքննության ռեժիմը ենթադրում է գործի փաստական կողմը վերանայելու, ապացույցները հետազոտելու հնարավորություն: Հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գործում եղած կամ նոր ներկայացված ապացույց (ապացույցներ) հետազոտելու անհրաժեշտության դեպքում Վերաքննիչ դատարանում գործի քննությունը պետք է իրականացվի վերաքննության, այլ ոչ թե վճռաբեկության կարգով (…)» *(Տե՛ս Հայկ Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԵՄԴ/0007/01/17 որոշման 14-րդ կետը):*

Երկրորդ հարցի կապակցությամբ իրավական դիրքորոշում է ձևավորվել այն մասին, որ «(…) արդար դատաքննության իրավունքը և դրա տարրերից մրցակցության սկզբունքը պահանջում են, որ ապացույցների հետազոտումն իրականացվի դատաքննության պայմաններում՝ երաշխավորելով կողմերի համար այդ գործընթացին մասնակցելու հնարավորությունը: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ վարույթի ընթացքում ապացույցներ հետազոտելու հնարավորությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել արդար դատական քննության, մրցակցության հիմնարար դատավարական սկզբունքների չեզոքացմանը: Վերաքննիչ վարույթում մրցակցության սկզբունքն ապահովված կլինի միայն այն դեպքում, երբ թե՛ արդեն առաջին ատյանի դատարանում հետազոտված և թե՛ Վերաքննիչ դատարան ներկայացված նոր ապացույցների հետազոտումն իրականացվի դատական նիստում կողմերի մասնակցությամբ: Վերաքննիչ վերանայման կառուցակարգի տարրերից՝ դատական նիստին կողմերի պարտադիր մասնակցության պահանջը և ապացույցների հետազոտման հնարավորությունը սերտորեն փոխկապակցված են և ենթադրում են վերաքննության կարգով գործի քննության ժամանակ կողմերի պարտադիր մասնակցությամբ ապացույցների հետազոտման ընթացակարգ: Գործի քննության վերաքննության կարգն ապացույցների հետազոտման այլ մեխանիզմ չի նախատեսում. դատական նիստից դուրս կողմերի բացակայությամբ ապացույցների

հետազոտումն անհամատեղելի է արդար դատաքննության և դրա տարրերից մրցակցության պահանջի հետ, որոնց երաշխավորման պարտականությունը վերաքննիչ վերանայման կառուցակարգի շրջանակում կրում է Վերաքննիչ դատարանը: (…)» *(Տե՛ս Հայկ Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԵՄԴ/0007/01/17 որոշման 24-րդ կետը):*

3. Վարեն Ավետիսյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանը հստակեցնելով հանցագործությունների ռեցիդիվ գնահատելու և ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի կիրառման հարցը իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(…)հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս պետք է ղեկավարվել այն քրեական օրենքով, որի գործողության ընթացքում ռեցիդիվը ձևավորվում է, այն է՝ չհանված կամ չմարված դատվածության առկայության պայմաններում նոր դիտավորյալ հանցանք կատարելու պահին գործող քրեական օրենքով: Այսպես՝ եթե հանցագործությունների ռեցիդիվն անձի արարքում փաստացի գնահատվում է ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո, ապա պատիժը նշանակվում է տվյալ հոդվածով սահմանված կարգով: Մասնավորապես, դատարանն ընտրում է համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատիժը, իսկ ռեցիդիվի տեսակով պայմանավորված՝ նվազագույն պատժաչափը որոշակի համամասնությամբ պարտադիր խստացվում է. ռեցիդիվի դեպքում նշանակված պատիժը չի կարող պակաս լինել օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից, վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երկու երրորդից, իսկ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երեք քառորդից: Միևնույն ժամանակ դատարանը հաշվի է առնում նախկինում կատարված հանցանքների քանակը, բնույթն ու ծանրությունը, այն հանգամանքները, որոնց ուժով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները (…)» *(Տե՛ս Վարեն Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 18-ի թիվ ԿԴ/0010/01/17 որոշման 15-րդ կետը):*

Այդուհանդերձ, բազում խնդիրներ, որոնք ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների կողմից ներկայացվել և մանրամասն վերլուծության են ենթարկվել վճռաբեկ բողոքներում և միտված են եղել հակասական իրավակիրառական պրակտիկայի վերացմանը, օրենքի միատեսակ կիրառման, իրավական որոշակիության և կանխատեսելիության ապահովմանը, իրավունքի զարգացմանը, դեռևս շարունակում են մնալ չլուծված:

2018 թվականի ընթացքում վարույթ ընդունված 12 բողոքից 3-ը կամ 25.0%-ը եղել է արդարացման, 2-ը կամ 16.7%-ը՝ պատժի մեղմության դեմ, 5-ը կամ 41.6%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 2-ը կամ 16.7%-ը՝ այլ հիմքով:

2018 թվականի ընթացքում 39 գործով 44 անձի առաջադրված մեղադրանքները դատարանների կողմից վերաորակվել են:

ՀՀ դատախազությունում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտում գործնականում առաջացող մյուս կարևորագույն խնդիրները հանգում են հետևյալին.

- Դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթի արդյունավետության բարձրացմանն առնչվող հիմնական խնդիրներից մեկը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի ձևավորման արդյունքում առաջացած աշխատանքի

կազմակերպումն է՝ կապված դատարանների նստավայրերի փոփոխությունների հետ, որոնք լուրջ դժվարություններ են առաջացնում նույն դատախազի կողմից նույն օրը դատարանի տարբեր նստավայրերում մի քանի դատական նիստերի մասնակցելու հարցում: Արդյունքում ոչ միայն լրացուցիչ ռեսուրսներ են վատնվում այլև դանդաղում է դատական քննության ընթացքը:

- Քրեական գործերով դատական քննության ընթացքի երկար տևողությունն իհարկե ինքնուրույն և ուշադրության արժանի խնդիր է, նկատի ունենալով, որ այն ուղիղ կապ ունի ինչպես ողջամիտ ժամկետում քրեական գործի քննության միջազգային իրավական պահանջի ապահովման, այնպես էլ քրեական դատավարության անմիջական ու համասոցիալական խնդիրների արդյունավետ իրացման տեսանկյունից: Քրեական գործի արագ քննությունը ապահովում է քրեաիրավական վեճի արագ լուծումը և հանցանք կատարած անձի նկատմամաբ քրեաիրավական ներգործության միջոցների ժամանակին կիրառումը, ինչը դրա արդյունավետության հիմնական պահանջներից մեկն է: Դրան հակառակ՝ քրեական գործի տևական ու չավարտվող քննությունը խարխլում է վստահությունն արդարադատության համակարգի նկատմամբ, ենթադրելով էական ժամանակային խզում հանցավոր արարքի և դրա քրեաիրավական հետևանքի միջև, այն դարձնում այլևս անարդյունավետ՝ իսկ երբեմն հանգեցնում քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետների խախտման:

- Խիստ մտահոգիչ են նաև կայացված դատական ակտերը դատավարության մասնակիցներին ուղարկելու դատավարական ժամկետների օրեցօր շատացող խախտումները: Դրանցից մեկի դեպքում արդարացման դատական ակտը կայացնելուց հետո ընդհուպ անցել է երեք ամսից ավելի ժամանակ:

- Շարունակում է խնդրահարույց մնալ ՀՀ-ից դուրս գտնվող կամ այլ բացառիկ հանգամանքների հետևանքով դատարան չներկայացող դատավարության մասնակիցներին, մասնավորապես՝ վկաներին, փորձագետներին դատարանում հարցաքննելու հարցը:

Հիշյալ խնդրի լուծման ուղղությամբ ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակվել և ՀՀ կառավարությանն է ներկայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթը, որի ընդունման դեպքում հնարավոր կլինի բացառիկ հանգամանքների հաշվառմամբ դատավարության մասնակիցների հարցաքննությունը կատարել տեսակապի միջոցով:

- Դատարանի անկախության սկզբունքի իրացման երաշխիքներին զուգահեռ ոչ պակաս կարևորություն ունի նաև դատարանի պատասխանատվության աստիճանի բարձրացման ուղղությամբ անհրաժեշտ կառուցակարգերի մշակումը: Գործող իրավակարգավորումները, մեր գնահատմամբ, բավարար չափով չեն լուծում վերը նշված խնդիրների համաչափությունը:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն երաշխավորում է դատարանների և դատավորների անկախություն: Միաժամանակ, հանդիսանալով դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի միակ լուծող անկախ պետական մարմինը՝ իր այդ բացառիկ գործառույթը կարող է իրականացնել միայն այլ սուբյեկտների՝ ՀՀ արդարադատության նախարարի և ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի նախաձեռնությունների դեպքում: Ստացվում է, որ ԲԴԽ-ն կարող է ահազանգ ունենալ դատավորին կարգապահական

պատասխանատվության ենթարկելու հիմքի վերաբերյալ, սակայն որևէ միջոց չի կարող ձեռնարկել, քանի դեռ համապատասխան նախաձեռնությունները բացակայում են:

Պետք է նշել, որ 2018թ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից ներկայացվել է 5 դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդություն, որոնցից 2-ով հարուցվել է կարգապահական վարույթ, այդ թվում մեկ դատավոր արդեն ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, 2-ով վարույթի հարուցումը մերժվել է, 1-ով կարգապահական վարույթ հարուցելու հարցը դեռևս լուծված չէ:

Գտնում ենք, որ անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների միջոցով հարկ է ամբողջականացնել Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական գործառույթը՝ հնարավորություն տալով իրացնելու սեփական նախաձեռնությունը դատավորիների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելիս:

Իր կազմավորման, գործունեության համար բարձր երաշխիքներով օժտված Սահմանադրական անկախ հիշյալ մարմինն առավել արդյունավետ կարող է իրականացնել իր առաքելությունը՝ լիակատար պատասխանատու լինելով նաև դատական համակարգի անաչառ գործունեության համար:

5.Պետական շահերի պաշտպանության ոլորտ

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը և տարածքային բոլոր ստորաբաժանումները 2018թ. աննախադեպ ցուցանիշներ են ապահովել պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում:

Մասնավորապես, պետական շահերի պաշտպանության գործառույթի շրջանակում Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից 2018 թվականի ընթացքում կատարվել է 626 ուսումնասիրություն (2017թ.՝ 479 ուսումնասիրություն), որոնց արդյունքում հայտնաբերվել է 1.345 իրավախախտում (2017թ.՝ 456 իրավախախտում):

Դրանց շրջանակներում պետության շահերին հասցված վնասը վերականգնելու մասին նախազգուշացվել են 208 իրավաբանական և ֆիզիկական անձինք: Արդյունքում տարվա ընթացքում կամովին պետական բյուջե է վերականգնվել 525.533.000 ՀՀ դրամ 2017թ.՝ 149.266.000 ՀՀ դրամի դիմաց:

Ուսումնասիրության արդյունքներով պետական մարմիններին ներկայացվել է 163 հաղորդում՝ պետությանը պատճառված վնասների վերականգման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, անհրաժեշտության դեպքում պետական շահերի պաշտպանության հայցեր հարուցելու վերաբերյալ: Բացի այդ, ուսումնասիրությունների արդյունքներից, հայտնաբերված խախտումների բնույթից ելնելով՝ համապատասխան պետական մարմիններին մի քանի միջնորդագրեր են ներկայացվել՝ պետական շահերի խախտումների պատճառների և նպաստող պայմանների վերացման, այդ թվում՝ համապատասխան ոլորտները կարգավորող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախաձեռնելու նպատակով: Դրանց արդյունքում վերականգնվել է պետությանը պատճառված շուրջ 1 մլրդ 200մլն ՀՀ դրամի վնաս:

Նշված ուսումնասիրությունների ընթացքում դատախազների կողմից նախապատրաստված նյութերով դատարաններ են ներկայացվել ընդհանուր ավելի քան 5 մլրդ ՀՀ դրամի բռնագանձման պահանջով պետական շահերի պաշտպանության հայցեր, որը 7.5 անգամ ավելի է 2017թ. ընթացքում դատարան ներկայացված հայցերով բռնագանձման ենթակա գումարի չափից:

2018թ. ընթացքում դատախազության մարմինները դատարան են հարուցել 31 հայց՝ 5 մլրդ. 062 մլն. 021 հազ. ՀՀ դրամի բռնագանձման պահանջով (2017թ. ընթացքում դատարան է ներկայացվել 81 հայց՝ 676 մլն. 430 հազ. դրամի բռնագանձման պահանջով):

Դատարաններում քննվել է 40 հայց, որոնցից բավարարվել է 768 մլն. 398 հազ. ՀՀ դրամ հայցապահանջով 33 հայց, մերժվել՝ 528 մլն. 690 հազ. ՀՀ դրամ հայցապահանջով 4 հայց, կարճվել է 10 մլն. 643 հազ. ՀՀ դրամի 3 հայց, ընթացքում է գտնվում 4 մլրդ. 983 մլն. 849 հազ. ՀՀ դրամ հայցապահանջով 81 հայց:

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում բավարարված հայցերով փաստացի վերականգնվել է 9 մլն. 252 հազ. ՀՀ դրամ:

Բացի վերոնշյալը, դատախազության ստորաբաժանումների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող փաստերի առթիվ հարուցվել է 243 քրեական գործ (2017թ.՝ 71):

Հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է ավելի քան 30 մլրդ 100մլն. ՀՀ դրամ (ներառյալ նաև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ծրագրի իրականացման գործընթացում թույլ տրված առերևույթ չարաշահումներով պետությանը պատճառված մոտ 23.5 մլրդ վնասը)՝ (2017թ.՝ 567.205.000 ՀՀ դրամ), իսկ ընդհանուր առմամբ 2018թ. ընթացքում հարուցված պետական շահերի պաշտպանության հայցերով, ներկայացված հաղորդումներով, հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է մոտ 35 մլրդ. ՀՀ դրամ (2017թ.՝ 920.019.000 ՀՀ դրամ):

2018թ. ընթացքում ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության բնագավառում իրենց լիազորությունների շրջանակներում ձեռնարկված դատախազական ներգործության միջոցառումների արդյունքում պետական և համայնքային բյուջեներ են վերականգնվել շուրջ 2.35 մլրդ ՀՀ դրամ գումար, նախորդ տարվա 364 մլն ՀՀ դրամի դիմաց:

ՀՀ գլխավոր դատախազության 2018թ. աշխատանքի ծրագրի և ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարականների հիման վրա հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրություններ են կատարվել պետական և հանրային գույքի պահպանության, հարկերի և պետական տուրքերի հետ կապված պարտավորությունների կատարման, պետական սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, կրթության և գիտության, բնապահպանության և ընդերքօգտագործման, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, էներգետիկայի և հատկապես փոքր ՀԷԿ-երի գործունեության, հողօգտագործման և անասնապահության, ավտոգազալցման շարժական կայանի շահագործման և այլ ոլորտներ:

Ուսումնասիրությունների արդյունքում քրեական գործեր են հարուցվել հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի, սերմացուների տրամադրման, տավարաբուծության պետական աջակցության ծրագրերի իրականացման գործընթացում առերևույթ չարաշահումների, օրենքով սահմանված կանոնները խախտելու միջոցով հանքարդյունահանման, փոքր ՀԷԿ-երի շահագործման խախտումներն իրավասու պաշտոնատար անձանց կողմից չարձանագրելու և դրանից բխող միջոցներ չձեռնարկելու, պաշտոնական փաստաթղթերի կեղծմամբ, պաշտոնեական լիազորությունների չարաշահմամբ տարբեր բնակավայրերում օտարման ոչ ենթակա օբյեկտները երբեմն շուկայականից էականորեն ցածր գներով ապօրինի օտարելու, առանձին պետական ծրագրերի շրջանակներում, այդ թվում նաև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ծրագրի իրականացման համար, հատկացված ռեսուրսների փոշիացման, յուրացման, փաստացի չկատարված կամ թերի կատարված աշխատանքները պաշտոնատար անձանց կողմից որպես ամբողջությամբ կատարված համարելու, ՃԵԿ կանոնների խախտման համար վարչական տուգանքների վճարման ապահովումն անհնարին դարձնելու հանցավոր մեխանիզմների կիրառման և բազմաթիվ այլ փաստերի առթիվ:

Այսպես.

ՀՀ գլխավոր դատախազությունը պետական շահերի պաշտպանության հարցադրումներով, 2018թ. աշխատանքի ծրագրի շրջանակներում երեք հիմնական ուղղություններով ուսումնասիրություններ է իրականացրել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության, դրա համակարգում

գործող մարմինների և կազմակերպությունների հարուցած կամ նրանց դեմ ներկայացված հայցերի, դրանց հիման վրա ընդունված դատական ակտերի հիմնավորվածության, բողոքարկման ու կատարման ոլորտներում:

1. Մասնավորապես, ուսումնասիրվել է ընդերքօգտագործողների կողմից 2013-2016թթ. ընթացքում ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրքի վճարման գործընթացը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ընդերքօգտագործող թվով 60 տնտեսվարող սուբյեկտներ պետական տուրքի վճարման գծով ունեցել են ընդհանուր շուրջ 300 մլն ՀՀ դրամի չափով պարտավորություն: Նշված տնտեսվարող սուբյեկտներից 37-ը ճանաչվել են սնանկ, 3 տնտեսվարող սուբյեկտի սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումների քննությունը գտնվում է ընթացքի մեջ, իսկ 3 տնտեսվարող սուբյեկտ լուծարվել է՝ ունենալով պետական տուրքի վճարման գծով պարտավորություններ:

Ընդերքօգտագործման պայմանագրեր կնքած և պետական տուրքի գծով պարտավորություններ ունեցող տնտեսվարող սուբյեկտներից ոչ մեկը սահմանված կարգով չի զրկվել ընդերքօգտագործման թույլտվությունից, չնայած՝ համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի և ընդերքօգտագործման պայմանագրերի՝ ընդերքօգտագործողի կողմից օրենքով և պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու դեպքում այդ սուբյեկտին տրվում է զգուշացում, որից հետո 90 օրվա մեջ խախտումը չվերացնելու դեպքում լուծվում է ընդերքօգտագործման պայմանագիրը: Մի շարք դեպքերում վիճելի են եղել տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարման ենթակա ընտրված պետական տուրքի չափերը:

2. Ուսումնասիրվել է ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ներդրումներ իրականացնելու գործընթացը, որի արդյունքում պարզվել է, որ 2012-2017 թվականներին ընդերքօգտագործման պայմանագրերում նախատեսվել է ՀՀ մարզերի համայնքներում ներդրումներ կատարելու պարտավորություն 86 սուբյեկտների համար: Նշված սուբյեկտները պայմանագիրը կնքելուց մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածում պարտավոր էին համայնքներում կատարել ընդհանուր առմամբ շուրջ 280,5 միլիոն դրամի ներդրում (հաշվարկում չի ներառվել բնեղեն եղանակով իրականացվող ներդրումները):

3. Ուսումնասիրվել է նաև ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարների գծով պարտավորությունների կատարման, ինչպես նաև չկատարված պարտավորությունների գծով իրավասու պետական մարմինների կողմից ձեռնարկված միջոցների գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակը: Պարզվել է, որ ռեկուլտիվացիոն վճարների գծով 2018թ. հունիսի դրությամբ 308 ընդերքօգտագործող ունի ընդհանուր շուրջ 523 միլիոն դրամի չափով պարտավորություն:

Նշված բոլոր երեք ուղղություններով ընդերքօգտագործողների կողմից պետության առջև ունեցած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ ՀՀ մարզերի դատախազություններին ուղղված շրջաբերականի և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ուղարկված հաղորդման հիման վրա բոլոր պարտապան

ընդերքօգտագործողները նախազգուշացվել են պարտավորություններն ամբողջ ծավալով կատարելու անհրաժեշտության վերաբերյալ:

Դատախազական ներգործության անհրաժեշտ գործիքակազմի կիրառմամբ միջոցների վերականգնման նպատակով, ըստ անհրաժեշտության, պետական շահերի պաշտպանության հայցերի հարուցման հարցը քննարկելու համար ՀՀ գլխավոր դատախազությունը նաև դիմել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը՝ ընդերքօգտագործողների կողմից չկատարված պարտավորությունների վճարումների ընթացքի և գանձման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու և դրանց մասին անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկատվությունն ստանալու համար:

Իրականացված համատեղ միջոցառումների արդյունքում պետական տուրքի գծով վերականգնվել է շուրջ 93.5 միլիոն ՀՀ դրամ, ռեկուլտիվացիոն վճարների գծով՝ շուրջ 191 միլիոն ՀՀ դրամ, մշտադիտարկումների մասով՝ 3 միլիոն դրամ, իսկ համայնքներում կատարվել են ընդհանուր շուրջ 183 միլիոն դրամի ներդրումներ:

Բացի այդ, գրավոր զգուշացումներում նշված խախտումները սահմանված ժամկետում չվերացնելու հիմքով օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող 35 ընկերությունների նկատմամբ ներկայացվել են միջնորդագրեր ընդերքօգտագործման իրավունքները դադարեցնելու վերաբերյալ: 10-ը ոչ մետաղական ընկերությունների ընդերքօգտագործման իրավունքները դադարեցվել են, 21 ընկերությունների մասով գործընթացը ընթացքի մեջ է (այդ թվում՝ 4 մետաղական), իսկ 4 ընկերությունների վարչական վարույթը կարճվել է՝ գրավոր զգուշացման հիմքերը վերացնելու հանգամանքով:

Այսինքն, ընդհանուր առմամբ պետության և համայնքների նկատմամբ ընդերքօգտագործողների շուրջ 1 միլիարդ ՀՀ դրամ պարտավորություններից արդեն իսկ կատարվել են ավելի քան 470 միլիոնը, իսկ մնացած մասի կատարման ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

Բացի այդ, դատախազության ստորաբաժանումների, մասնավորապես ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության և տարածքային դատախազությունների կողմից պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում իրականացված համակարգված աշխատանքի և նախաձեռնողականության արդյունքում 2018թ. ընթացքում բացահայտվել են հանրապետության գրեթե բոլոր մարզերում հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման, ինչպես նաև սերմերի հատկացման պետական աջակցության ծրագրերի իրագործման գործընթացում տևականորեն գործած կոռուպցիոն չարաշահումների մեխանիզմներ: Բացի այդ, միջոցներ են ձեռնարկվել պարարտանյութի և սերմերի մատակարարմամբ զբաղվող պարտապան ընկերություններից բյուջետային վարկերի վերադարձման ուղղությամբ

Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2017թ. մարտ ամսվա դրությամբ պարարտանյութ մատակարարող կազմակերպություններին հատկացված բյուջետային վարկերից պետական բյուջե չի վերադարձվել 1 մլրդ. 112 մլն. 415 հազ. դրամ, իսկ սերմերի գծով 673.895.752 ՀՀ դրամ չի վերադարձվել «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին:

ՀՀ գլխավոր դատախազության հաղորդման հիման վրա ՀՀ գյուղատնտեսության և ֆինանսների նախարարությունների կողմից ձեռնարկվել են միջոցառումներ, որի արդյունքում պարարտանյութերի գծով պարտապան ընկերությունների պարտքի մնացորդը 2018թ. մայիսի 2-ի դրությամբ կազմել է շուրջ 396.000.000 ՀՀ դրամ: Այսինքն ձեռնարկված միջոցառումների արդյունքում շուրջ 700.000.000 ՀՀ դրամ արդեն իսկ վերադարձվել է պետական բյուջե:

Սերմերի գծով «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը դիմել է մարզերի ընդհանուր իրավասության դատարաններ՝ ՀՀ մարզպետարաններից շուրջ 663.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջով:

Հետագայում, ՀՀ կառավարության որոշմամբ ներվել են հողօգտագործողների պարարտանյութերի գծով շուրջ 165.000.000 ՀՀ դրամի, իսկ սերմերի գծով շուրջ 642.000.000 ՀՀ դրամի չափով պարտավորությունները՝ նույն գումարի չափով նվազեցնելով պետական բյուջեի հանդեպ մատակարար ընկերությունների վարկային պարտավորությունները: Սերմերի գծով 31.847.700 ՀՀ դրամ գումար ՀՀ կառավարության որոշմամբ չի ներվել՝ սահմանված չափաքանակից ավելի հատկացված լինելու պատճառաբանությամբ:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության համակարգմամբ ՀՀ մարզերի դատախազությունների և ՀՀ ոստիկանության կողմից ձեռնարկվել են միջոցառումներ՝ շահառուներին պարարտանյութերի և սերմերի տրամադրման, ինչպես նաև պարտավորությունների կատարման գործընթացի արժանահավատությունը ստուգելու վերաբերյալ:

Համագործակցված աշխատանքի արդյունքում պարզվել է, որ ծրագրերի շահառուները բազմաթիվ դեպքերում տեղյակ չեն եղել ծրագրերից և փաստացի դրանց չեն մասնակցել, կամ կատարել են պարտավորությունները, սակայն համայնքների ղեկավարների կողմից դրանք բյուջե չեն մուտքագրվել, իսկ հետագայում կեղծ տեղեկատվություն են ներկայացրել ծրագրին չմասնակցած կամ պարտավորությունները մարած շահառուների ենթադրյալ չկատարված պարտավորությունների վերաբերյալ, որոնք ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ ներվել են:

Բացահայտված առերևույթ հանցագործությունների փաստերով 2018թ. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի (պաշտոնեական լիազորությունները չարաշահելու), 314-րդ հոդվածի (պաշտոնեական կեղծիքի), 315-րդ հոդվածի (պաշտոնեական անփութության), 179-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի (յուրացնելու կամ վատնելու) հատկանիշներով պարարտանյութերի գծով հարուցվել է 25, իսկ սերմերի գծով՝ 49 քրեական գործ:

Հարուցված քրեական գործերով, առերևույթ հանցագործության հետևանքով պատճառված վնասի չափը կազմել է շուրջ 92.947.440 ՀՀ դրամ: Քրեական գործերով ձերբակալվել են 4 պաշտոնատար անձինք, քրեական հետապնդում է հարուցվել 18 պաշտոնատար անձանց նկատմամբ:

Քննության ընթացքում վերականգնված վնասի չափը կազմել է շուրջ 32 մլն դրամ:

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության և ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից ուսումնասիրվում է նաև արտադրական վտանգավոր օբյեկտ համարվող հեղուկ գազի, բնական (սեղմված) գազի, շարժական լցավորման կայանների շահագործման տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահպանման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակը:

Հաշվի առնելով, որ շարժական գազալցակայանների շահագործման գործընթացը անմիջականորեն առնչվում է քաղաքացիների կյանքի և առողջության անվտանգության հարցերին, ՀՀ դատախազության ստորաբաժանումների՝ Երևան քաղաքի և ՀՀ բոլոր մարզերի դատախազությունների կողմից հանձնարարականներ են ուղարկվել ՀՀ ԱԻՆ աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության, ՀՀ ոստիկանության և «Ճանապարհային ոստիկանության», ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի տարածքային մարմիններին՝ ապօրինի /չգրանցված/, փորձաքննություն չանցած կամ անօրինական վերասարքավորված գազի շարժական լցավորման կայաններ շահագործող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայտնաբերելու, դրանց շահագործումը արգելելու, ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերի խախտումների դեպքում օրենքով սահմանված պատասխանատվության հարցերը լուծելու նպատակով:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մինչև 2018թ. հանրապետության տարածքում տարբեր ժամանակահատվածներում փաստացի շահագործվող թվով 193 շարժական գազալցակայաններից 63-ը սահմանված կարգով որպես արտադրական վտանգավոր օբյեկտ ռեեստրում գրանցում չեն ունեցել:

45 դեպքերում գազի շարժական լցավորման կայանները սահմանված կարգով չեն անցել տեխնիկական անվտանգության փորձաքննություն, իսկ 12 դեպքերում գրանցված չեն եղել ՀՀ ԿԱ ՊԵԿ մարմիններում:

Ուսումնասիրության արդյունքում, արձանագրված խախտումների կապակցությամբ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից 60 դեպքերով հարուցվել են վարչական վարույթներ:

Վարչական վարույթներով 32 անձինք ենթարկվել են տուգանքի, որի ընդհանուր գումարը կազմել է շուրջ 35 մլն դրամ:

Գրանցում չունեցող 12 դեպքերի վերաբերյալ հանձնարարականներ են ուղարկվել ՀՀ ԿԱ ՊԵԿ մարմիններին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

Առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող խախտումների փաստերի առթիվ հարուցվել են 4 քրեական գործեր:

Բացի այդ, արձանագրված խախտումների կապակցությամբ միջնորդագրեր են ուղարկվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին՝ արձանագրված խախտումների, դրանց պատճառների և նպաստող պայմանների վերացման, ոլորտի հստակ իրավական կարգավորման հարցերը քննարկելու համար:

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պաշտոնատար անձիք, իրենց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, անտեսելով գործող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջները, 2009թ. ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության անունից ՓԲ ընկերության հետ կնքել են հանքարդյունաբերման լիցենզիայի պայմանագիր:

Նշված ընկերության հանքավայրի շահագործման իրավունքը դադարեցվել է՝ ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունները և ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու պատճառաբանությամբ:

Այնուհետև, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պատասխանատու պաշտոնատար անձիք, չարաշահելով իրենց պաշտոնեական դիրքը, հիմք ընդունելով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փաստացի ուժը կորցրած եզրակացությունը և դրա վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված անհիմն պաշտոնական պարզաբանումը, առանց օրենքով սահմանված տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացության, 2012թ. նոյեմբերի 23-ին նույն հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը տրամադրել են մեկ այլ ՍՊԸ-ի: Նույն օրը վերջինիս տրամադրվել է նաև օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն, իսկ 2012թ. դեկտեմբերի 12-ին՝ լեռնահատկացման ակտ, ինչն էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին և անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:

Այսպես, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան հանձնարարագրերի հիման վրա նշված ՍՊԸ-ում իրականացված ստուգմամբ արձանագրվել է, որ ընկերության կողմից առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, ընդերքի օգտագործման և պահպանության կանոնների խախտմամբ 2017թ. դեկտեմբեր ամսին նշված հանքավայրում իրականացվել է 1.330 տոննա հանքաքարի արդյունահանում, որում մետաղների քանակը կազմում է շուրջ 218 մլն դրամի՝ 11,31 կգ ոսկի, շուրջ 19 մլն դրամի՝ 84,5 կգ արծաթ և շուրջ 15 մլն դրամի՝ 5,25 տոննա պղինձ: Արդյունահանված հանքաքարը չի արտացոլվել ընկերության կողմից լիազոր մարմին ներկայացված հաշվետվություններում՝ էական վնաս պատճառելով ընդերքին, դրանում պարփակված օգտակար հանածոներին:

Նկատի ունենալով, որ արձանագրված խախտումներն առերևույթ պարունակում են հանցագործության հատկանիշներ՝ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի 2-րդ մասով և 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեին:

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից 2018թ. ընթացքում ուսումնասիրվել է նաև ՀՀ տարածքում գործող փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման, դրանց կողմից էլեկտրաէներգիայի արտադրության և ՀԵՑ առաքման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակը: Ուսումնասիրության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ վարչապետին:

ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 5-ի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից իրականացված ուսումնասիրությունների, ստուգումների և հսկողական գործառույթների արդյունքում պարզվել է, որ ՀՀ տարածքում շահագործվող ընդհանուր 184 փոքր ՀԷԿ-երից /որոնցից 147-ի շահագործման լիցենզիան տրվել է մինչև 2014թ.-ը/ 143-ում բացակայել են ջրաչափական սարքերը, ինչը հակասել է ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պահանջներին: Որոշ դեպքերում փոքր ՀԷԿ-երում չեն պահպանվել բնապահպանական թողքերի ծավալները՝ մի քանի անգամ խախտելով թույլատրված չափաքանակները, ինչպես նաև գետի հունում բացակայել են ձկնապաշտպան կառույցները և ձկնանցարանները, իսկ առկայության դեպքում, չեն ծառայել իրենց նպատակներին:

Արձանագրվել են նաև ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառի չափաքանակների բազմակի անգամ գերազանցման փաստեր:

Պարզվել է, որ լիազոր մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան պաշտոնատար անձիք, իրենց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, տարիներ շարունակ միջոցներ չեն ձեռնարկել ՀՀ տարածքում շահագործվող շուրջ 143 փոքր ՀԷԿ-երում ջրօգտագործման հաշվառման արդի տեխնոլոգիաների՝ սարքերի և սարքավորումների ներդրման հետ կապված խախտումների հայտնաբերման, արձանագրման, խախտումների դեպքում օգտագործման թույլատվության կասեցման կամ չեղյալ համարելու, ինչպես նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 63.2 հոդվածով /ջրօգտագործման թույլտվության պահանջները չկատարելը/ նախատեսված տուգանքը՝ շուրջ 29.000.000 դրամ նշանակելու և գանձելու ուղղությամբ: Դրա հետևանքով էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին՝ առաջացրել ծանր հետևանքներ:

Փաստի առթիվ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեին:

Հընթացս ուսումնասիրություններ են կատարվել նաև պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, առողջապահության և մի շարք այլ ոլորտներում:

Ամփոփելով պետք է փաստել, որ 2018թ. էական առաջընթաց է արձանագրվել ՀՀ դատախազության պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքներում:

Ինչպես երևում է արձանագրված ցուցանիշներից՝ նախորդ տարվա համեմատությամբ 889-ով կամ 195.05%-ով ավելացել է պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված իրավախախտումների թիվը, 172-ով կամ 242.5%-ով ավելացել է այդ ուսումնասիրությունների արդյունքում հարուցված քրեական գործերի թիվը, ինչը պայմանավորված է դատախազների կողմից պետական շահերի պաշտպանության ոլորտի ուսումնասիրությունները առավել ամբողջական իրականացնելու, քրեաիրավական գնահատական տալու համար անհրաժեշտ և հնարավոր բոլոր հիմքերը ուսումնասիրությունների ընթացքում ձեռք բերելու հանգամանքով: Ընդ որում, ուսումնասիրությունների արդյունքում հնարավոր է դարձել բացահայտել առանձին ոլորտներում պետության կողմից իրականացված ծրագրերի շրջանակում տևականորեն պահպանված կոռուպցիոն սխեմաները:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազության ստորաբաժանումների կողմից հարուցված պետական շահերի պաշտպանության հայցերով, ներկայացված հաղորդումներով, հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է շուրջ 36 մլրդ դրամ կամ 2017թ.-ի համեմատ 53 անգամ ավելի: Միաժամանակ՝ ուսումնասիրությունների հիման վրա կատարված նախազգուշացումների, բավարարված հայցերի, քննվող քրեական գործերի, ներկայացված հաղորդումների հիման վրա կատարված աշխատանքների արդյունքում 2018թ. ընթացքում վերականգնվել է ընդհանուր ավելի քան 2 մլրդ ՀՀ դրամի վնաս, ինչը նույնպես կապված է դատախազների հետևողական աշխատանքի, պետական շահերին

վերաբերվող խախտումները հայտնաբերելիս դրանք պատշաճ արձանագրելու, համապատասխան գնահատական տալու, պետությանը պատճառված վնասը վերականգնելու և խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների հետ, ինչպես նաև պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից դատախազության նկատմամբ վստահության բարձրացմամբ:

Ըստ էության, վերը նշված արդյունքները հատկապես ապահովվել են 2018թ. ընթացքում հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների արդյունքում ձևավորված նոր կառավարության՝ պետությանը պատճառված վնասների բացահայտման հարցում դրսևորած հետևողականության ու նախաձեռնողականության արդյունքում:

Գործադիր իշխանության տարբեր մարմիններն իրենց ոլորտներում հայտնաբերած խախտումների, չարաշահումների փաստերը ներկայացրել են ՀՀ դատախազություն, որն օրենքով սահմանված հիմք է հանդիսացել դատախազության կողմից իր գործառույթների իրականացման համար:

Խնդիրը կայանում է նրանում, որ 1995 թվականից սկսած հետևողականորեն կրճատվել ու սահմանափակվել են դատախազության՝ պետական շահերի պաշտպանության ոլորտում վերապահված լիազորությունները՝ առաջին հերթին դատախազությանը զրկելով նախաձեռնողական գործունեությունից: Ինչպես նախորդ, այնպես էլ 2018թ. ուժի մեջ մտած «Դատախազության մասին» ՀՀ օրենքների ուսումնասիրությունն ակնհայտ վկայում է դատախազության կողմից բացառապես պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման հնարավորության մասին՝ դրա համար արդեն իսկ բավարար հիմքերի առկայության դեպքում: Իսկ այդ բավարար հիմքերի ապահովման գործում դատախազությանը վերապահված չէ նվազագույն գործիքակազմ:

Մինչդեռ, ինչպես գործնականում օբյեկտիվորեն ծագող բազում խնդիրները, այնպես էլ հանրության՝ ավանդույթի ուժով պահանջները անհրաժեշտություն են դարձնում դատախազության կարևորագույն սահմանադրական այդ գործառույթի՝ արդյունավետ և լիարժեք պետական շահերի պաշտպանի դերում հանդես գալու հնարավորությունների ու կարողությունների սահմանումը:

Ներկայումս, միջազգային փորձի ուսումնասիրությամբ, ՀՀ դատախազությունում մշակվում է պետական այս գործառույթի արդյունավետ իրացման հայեցակարգ:

6. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում 2018 թվականի ընթացքում կատարվել է 1052 ստուգում և ուսումնասիրություն /2017թ. ընթացքում՝ 1246/, որոնց արդյունքում հայտնաբերվել է 203 խախտում /2017թ՝ 497/: Պատկան մարմիններին ուղարկվել է 19 հաղորդում /2017թ.՝ 19/, ներկայացվել՝ 14 միջնորդագիր /2017թ.՝ 54/, որոնց հիման վրա վերանայվել է օրինականությանը հակասող 1 ակտ /2017թ՝ 13/, իրականացվել է 6 ծառայողական քննություն /2017թ՝ 24/: Կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հարուցվել է 4 քրեական գործ /2017թ.՝ 15/, կասեցվել է օրենսդրությանը հակասող 2 ակտ:

Վերը նշված 1052 ստուգումներից և ուսումնասիրություններից 797-ը կատարվել են ձերբակալվածներին պահելու վայրերում /2017թ.՝ 904/, 143-ը՝ քրեակատարողական հիմնարկներում /2017թ.՝ 181/, 104-ը՝ ՀՀ պրոբացիայի պետական ծառայությունում /2017թ.՝ 132/, 7-ը՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում /2017թ.՝ 15/, 1-ը՝ ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատություններում /2017թ.՝ 12/:

Քրեակատարողական հիմնարկներում իրականացված ստուգումների արդյունքներով հայտնաբերված խախտումներն եղել են բազմաբնույթ՝ ՔԿՀ-ներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմանների, նրանց առողջության պահպանման, տեսակցության իրավունքի իրացման, ՔԿՀ-ների պետերի կողմից տույժեր և խրախուսանքներ կիրառելու, հանձնուքներ, ծանրոցներ, փաթեթներ ընդունելու և հանձնելու, ինչպես նաև քրեակատարողական օրենսդրության կատարման այլ գործընթացների վերաբերյալ: Հայտնաբերվել են նաև ՀՀ Կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ), ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ հաստատված՝ «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) մի շարք այլ կետերի խախտումներ:

Հայտնաբերված խախտումների պատճառները պարզելու, աշխատանքներում տեղ գտած թերությունները հետագայում բացառելու, ինչպես նաև պաշտոնատար անձանց պատասխանատվության, այդ թվում՝ կարգապահական ներգործության հարցը լուծելու նպատակով, պատկան մարմիններին ուղարկվել է 19 հաղորդում, որոնցով, հաշվի առնելով արձանագրված խախտումների բնույթն ու էական լինելը, գրեթե բոլոր դեպքերում առաջարկվել է անցկացնել ծառայողական քննություններ:

Հաղորդումների հիման վրա ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունից ստացված համապատասխան գրությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

ներկայացված հաղորդումների մեծ մասը փաստացի թողնվել է անհետևանք՝ լավագույն դեպքում որոշ ՔԿՀ-ների պաշտոնատար անձանց ուշադրությունը հրավիրելով հայտնաբերված խախտումների վրա և հանձնարարելով հետագայում բացառել այդպիսիք: Ստացված պատասխանների վերլուծությունից և ձեռնարկված միջոցառումներից հետևում է, որ իրականում պատկան մարմինների կողմից փորձ չի արվել անդրադառնալու նշված խախտումները ծնող պատճառներին, ինչպես նաև քննարկման առարկա դարձնելու խախտումների համար պատասխանատու պաշտոնատար անձանց մեղավորության աստիճանը՝ օրենսդրական ակտերի պահանջների խախտումները ՔԿՀ-ներում կարծես համարելով որպես սովորական իրողություն, որին կարելի է անդրադառնալ մակերեսորեն:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ դատախազության ոլորտը սպասարկող դատախազներին հստակ հանձնարարական է տրվել, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս առաջնային կարևորություն տրվի ազատությունից զրկված անձանց իրավունքների պատշաճ իրացման հարցին: Այսինքն իրականացվող հսկողության գործընթացում որպես ուղենիշ պետք է ընդունել ազատությունից զրկված անձի՝ ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված և ՀՀ միջազգային հանձնառություններից բխող իրավունքների պատշաճ ապահովման հարցը՝ վերջինս դիտարկելով իբրև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու դատախազական գործառույթի առաջնային նպատակներից մեկը:

Վերը ասվածի համատեքստում անհրաժեշտ է նշել հատկապես քրեակատարողական հիմնարկներում գտնվող հացադուլ հայտարարած և ինքնավնասում կատարած անձանց խնդիրներին արագ արձագանքելու և ուշադրության կենտրոնում պահելու առանձնահատուկ կարևորության մասին: Այսպես, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2018 թվականի ընթացքում ստացվել է հացադուլ հայտարարելու 430 դիմում, որոնցից 32-ի դեպքում հացադուլը զուգորդվել է ջրադուլով: Հացադուլ հայտարարած 22 անձ պահանջել է հանդիպում դատախազի հետ: ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների և կալանավորված անձանց կողմից հացադուլ հայտարարելու վերաբերյալ բոլոր դեպքերով ուսումնասիրվել է հացադուլ հայտարարողի նկատմամբ ՔԿ հիմնարկում ձեռնարկված միջոցառումների իրավաչափությունը, պարզվել է հացադուլ հայտարարվելու պատճառները, անհրաժեշտության դեպքում տվյալ անձը հարցման է ենթարկվել, և բացատրական աշխատանքներ են տարվել հացադուլը դադարեցնելու ուղղությամբ:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում, ՀՀ ոստիկանության ՃՊՎ-ներում, ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատություններում պահվող անձանց կողմից 2018 թվականի ընթացքում արձանագրվել է ինքնավնասման 652 դեպք, որոնց պատճառները հիմնականում կապված են եղել քրեական գործերի, տեղաբաշխման, անձնական խնդիրների հետ, որոշ դեպքերում ինքնավնասումը կատարվել է հոգեկան անհավասարակշիռ վիճակում, որոշ դեպքերում էլ ներկայացվել են անօրինական պահանջներ:

Յուրաքանչյուր ինքնավնասման դեպքով նախապատրաստվել են նյութեր, ինչպես նաև իրականացվել են սոցիալ-հոգեբանական բնույթի աշխատանքներ, մասնավորապես՝ ՔԿՀ հոգեբանի կողմից կատարվել են հոգեբանական աշխատանքներ, որի արդյունքում կազմվել է հոգեբանական եզրակացություն ինքնավնասման հնարավոր դրդապատճառների և վարքի հետագա կանխատեսումների վերաբերյալ, ինչպես նաև

իրականացվել են համապատասխան աշխատանքներ հետագայում անձի կողմից ինքնավնասման փորձերը կանխելու ուղղությամբ:

Տարված աշխատանքների արդյունքում 2018 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում կանխվել է ինքնավնասման 190 դեպք:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ոլորտը սպասարկող դատախազներին հանձնարարվել է հանդիպել քրեակատարողական հիմնարկներում գտնվող հացադուլ հայտարարած, ինչպես նաև ինքնավնասում կատարած անձանց, պարտադիր նախաձեռնել վերը նշված անձանց՝ սահմանված կարգով հարցման ենթարկելու գործընթաց՝ նման ծայրահեղ միջոցի դիմելու պատճառները պարզելու համար: Եթե հարցման արդյունքում պարզվի, որ նման վարքագիծը պայմանավորված է այդ անձանց վերաբերյալ քննվող կամ քննված քրեական գործերով կատարված դատավարական գործողություններով, ապա հարցման արձանագրության օրինակն անհապաղ անհրաժեշտ է ուղարկել տվյալ գործով անմիջական դատավարական հսկողություն իրականացնող դատախազին՝ այն մանրամասն քննարկման առարկա դարձնելու և հացադուլ հայտարարած, ինչպես նաև ինքնավնասում կատարած անձանց՝ օրենքով սահմանված իրավունքների պատշաճ ապահովումն երաշխավորելու նկատառումներով:

Հարկ է նշել, որ Կանոնակարգի՝ հացադուլ հայտարարած անձանց վերաբերող պահանջների խախտումներ են արձանագրվել ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում իրականացված ստուգման արդյունքում: Մասնավորապես պարզվել է, որ չեն պահպանվել Կանոնակարգի 173.7 և 173.8 կետերի պահանջները, որոնց համաձայն՝ հացադուլ իրականացնելու ժամանակահատվածում հացադուլ իրականացնող անձը գտնվում է մշտական (ամենօրյա) բժշկական հսկողության ներքո: Բժիշկը հացադուլ իրականացնող անձին, նրան հասկանալի լեզվով, ներկայացնում է սննդամթերքից և (կամ) ջրից հրաժարվելու հետևանքով առողջական վիճակի հետագա վատթարացման ռիսկերը և այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն հացադուլ իրականացնողի առողջական վիճակի չվատթարացման նպատակով: Մինչև հացադուլի դադարեցումը բժիշկը յուրաքանչյուր օր պարզում է հացադուլ իրականացնող անձի կողմից սննդամթերքի և (կամ) ջրի ընդունումից հրաժարվելու հետևանքով գիտակցության մթագնման կամ կորստի, ինչպես նաև կոմայի մեջ ընկնելու դեպքում բժշկական օգնություն և սպասարկում (այդ թվում՝ արհեստական սնուցման ձևով) տրամադրելու վերաբերյալ համաձայնության առկայության կամ բացակայության հանգամանքը և դրա մասին կատարում գրառում նրա բժշկական քարտում:

Չեն պահպանվել նաև Կարգի 25-րդ և 43-րդ կետերի պահանջները, որոնց համաձայն հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարը պարտավոր է կազմակերպել բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի մասնագետների ամենօրյա այցելություններ պատժախցում գտնվող կալանավորված անձանց կամ դատապարտյալներին՝ կատարելով նշումներ համապատասխան մատյանում: Պատժախուց փոխադրված կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ իրականացվում է ամենօրյա բժշկական հսկողություն՝ այցելությունների ընթացքում գանգատների ներկայացման և անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական հետազոտության հիման վրա: Պատժախուց այցելության վերաբերյալ բժշկական անձնակազմի կողմից կատարվում են գրառումներ համապատասխան մատյանում: Առողջական վիճակի վատթարացումը հիմք է կալանավորված անձին կամ

դատապարտյալին բժշկի եզրակացության հիման վրա պատժախցից սահմանված կարգով դուրս բերելու համար: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ հացադուլ հայտարարած անձին մշտական /ամենօրյա/ բժշկական հսկողության տակ պահելուն ուղղված գործառույթներն ունեն կարևոր նշանակություն հացադուլավորի կյանքի ու առողջության պահպանման համար և այդ գործառույթները չիրականացնելը կարող է էական հարվածի տակ դնել հացադուլավորի և պատժախուց տեղափոխված անձի կյանքի և առողջության պահպանման իրավունքը:

Ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց իրավունքների պատշաճ ապահովման նկատառումներից ելնելով՝ հարկ է նշել նաև ձերբակալված անձանց պահելու վայրում, քրեակատարողական հիմնարկում և հարկադիր բուժման վայրում պահվող անձանց մահվան դեպքերով արդյունավետ քննություն իրականացնելու պահանջի կարևորության մասին: Այդ նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է ապահովել, որպեսզի ձերբակալված անձանց պահելու վայրում, քրեակատարողական հիմնարկում և հարկադիր բուժման վայրում պահվող անձի մահվան հանգամանքները պարզվեն բացառապես հարուցված քրեական գործով վարույթի ընթացքում՝ դատավարության մասնակիցների, հատկապես տուժողի իրավահաջորդի՝ օրենքով, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ կյանքի իրավունքի խախտումների, խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ նախադեպերով սահմանված իրավունքների երաշխավորմամբ:

ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից ուսումնասիրվել և ամփոփվել են նաև 2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից կալանավորված անձանց կամ դատապարտյալների նկատմամբ կիրառված տույժերի և խրախուսանքների վերաբերյալ կայացված որոշումների օրինականության և համաչափությունը: Արդյունքում հայտնաբերվել է 81 խախտում, որոնց վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետին ուղարկվել է մեկ միասնական հաղորդում:

ՀՀ դատախազության դատախազները հաշվետու ժամանակաշրջանում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով մասնակցել են թվով 4327 դատական քննության /2017թ. ընթացքում՝ 3000/:

Վերը նշվածներից 1891-ը վերաբերում են դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելուն /2017թ.՝ 1082/, 12-ը՝ ՔԿՀ-ներում կատարված հանցագործություններով քրեական գործերով մեղադրանքի պաշտպանությանը, 30-ը՝ պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելուն /2017թ.՝ 16/, 110-ը՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելուն /2017թ.՝ 104/, 66-ը՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելուն /2017թ.՝ 45/, 604-ը՝ տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելուն /2017թ՝ 895/, 72-ը՝ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի այլ միջոցների կիրառումը փոփոխելուն կամ դադարեցնելուն /2017թ.՝ 43/, 119-ը՝ հարկադիր բուժումը փոփոխելուն կամ այն դադարեցնելուն /2017թ՝ 83/, իսկ 1423-ը՝ դատարանի

կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերին /2017թ.՝ 732/, որոնցից 3-ը՝ դատապարտյալներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը վերացնելու վերաբերյալ, 11-ը՝ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ գործեր են:

2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է 530 դատապարտյալ: Ընդ որում, եթե համեմատում ենք վերջին երեք տարիներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալների թվաքանակը, ապա դրական աճի միտումն ակնհայտ է: Այսպես, եթե 2016թ. պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է 115 դատապարտյալ, ապա 2017թ.՝ 365 դատապարտյալ /250-ով կամ 217.4%-ով ավելի/, իսկ 2018թ.՝ 530 դատապարտյալ /165-ով կամ 45.2%-ով ավելի/:

Պետք է փաստել, որ 2016թ. հետ համեմատած 2017-2018թթ. ընթացքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ քննված գործերի և կայացված դատական ակտերի թվի էական աճը, հիմնականում պայմանավորված է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացի ոլորտում 2017թ. մարտի 1-ին կատարված օրենսդրական բարեփոխումներով, որոնց արդյունքում էլ առավել երաշխավորվել է այս ոլորտում դատապարտյալների դատական պաշտպանության իրավունքը:

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերից 98-ով բերվել է վերաքննիչ բողոք /2017թ՝ 104/, որոնցից 40-ը բավարարվել է /2017թ՝ 27/, 10-ով բերվել է վճռաբեկ բողոք /2017թ՝ 3/, որոնցից 2-ը բավարարվել է, 6-ը՝ վերադարձվել է, իսկ 2-ի վերաբերյալ դեռ որոշումներ չեն կայացվել /2017թ. հաշվետու ժամանակաշրջանում կայացված որոշումներ չեն եղել/:

Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ գործերից 3-ով բերվել է վերաքննիչ բողոք /2017թ՝ 4/, 2-ով բերվել է վճռաբեկ բողոք, որից 1-ը բավարարվել է /2017թ. 0/:

Հարկադիր բուժումը փոփոխելու կամ այն դադարեցնելու վերաբերյալ բերվել է 4 վերաքննիչ բողոք /2017թ.՝ 10/:

Պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելու վերաբերյալ բերվել է 1 վերաքննիչ բողոք /2017թ.՝ 1/, որը բավարարվել է:

Տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ բերվել է 2 վերաքննիչ բողոք /2017թ.՝ 27/:

Հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ բերվել է 5 վերաքննիչ բողոք /2017թ.՝ 1/, որոնցից 1-ը բավարարվել է /2017թ՝ 1/:

Այլ գործերից 20-ով բերվել է վերաքննիչ բողոք /2017թ. 19/, որոնցից 8-ը բավարարվել է /2017թ.՝ 4/, 1-ով բերվել է վճռաբեկ բողոք, որն էլ բավարարվել է /2017թ.՝ 0/:

ՀՀ դատախազության դատախազների կողմից ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայությունում կատարվել են 104 ստուգումներ և ուսումնասիրություններ (2017թ.՝ 132), որոնց արդյունքում հայտնաբերվել է 26 խախտում, կասեցվել է օրենսդրությանը հակասող մեկ ակտ:

ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայությունն ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման և պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում

փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացման վերաբերյալ 2018 թվականին ընթացք է տվել 6650 անձի վերաբերյալ կազմված անձնական գործերի: Դրանցից 3395-ը փոխանցվել է 2017 թվականից, իսկ 3255-ը կազմվել է հաշվետու տարում:

Հաշվետու ժամանակահատվածում կազմված գործերից 452-ը վերաբերում են ՀՀ քր.օր.-ի 52-րդ, իսկ 574-ը՝ ՀՀ քր. օր-ի 54-րդ հոդվածներով նշանակված պատիժների կատարմանը:

Սահմանված վերահսկողության իրականացման վերաբերյալ գործերից 2223-ը վերաբերում են ՀՀ քր.օր-ի 70-րդ, 725-ը՝ ՀՀ քր. օր-ի 76-րդ, 17-ը՝ ՀՀ քր. օր-ի 91-րդ, իսկ 14-ը՝ ՀՀ քր. օր.-ի 78-րդ հոդվածներով նախատեսված դեպքերին, 571 անձի վերաբերյալ կազմվել է զեկույց:

Հաշվետու ժամանակաշրջանում բռնագանձման ենթակա ընդհանուր գումարով 761.329.784 ՀՀ դրամի չափով 2074 տուգանքից փաստացի բռնագանձվել է 524-ը՝ 161.912.246 ՀՀ դրամի չափով: 958 գործ 357.899.338 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով տուգանք բռնագանձելու վերաբերյալ կարճվել է՝ համաներման, ներման, դատապարտյալի մահվան, վաղեմությունն անցնելու կամ այլ պատճառներով: ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության կողմից հաշվառված շահառուներից 1712-ի նկատմամբ կիրառվել է «Երեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաս¬տա¬նի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցու¬թյամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքը, որոնցից 911-ը վերաբերում է «տուգանք» պատժատեսակին:

2018թ. ՀՀ դատախազության՝ ոլորտը սպասարկող դատախազների կողմից, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց դիմումների համաձայն, հարցման է ենթարկվել 290 անձ /2017թ՝ 74/:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը ՀՀ ԱՆ «Կոշ», «Սևան», «Վանաձոր», «Արմավիր», «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներում նախաձեռնել և կազմակերպել է դատապարտյալների ընդունելություն՝ նրանց բարձրացրած իրավական բնույթի խնդիրներին տեղում ծանոթանալու, դատախազության իրավասությունների սահմաններում և հնարավորության դեպքում դրանց օպերատիվ լուծումներ գտնելու, անհրաժեշտություն առաջանալու դեպքում իրավական խորհրդատվություն տրամադրելու նպատակով: Ընդունելություններին մասնակցել է նախապես դիմած ընդհանուր թվով 92 դատապարտյալ: Ընդունելությունների ընթացքում դատապարտյալների կողմից ներկայացվել են մի շարք խնդիրներ՝ հատկապես կապված պատժի կրման կարգի և իրենց հիմնական իրավունքների հետ: Արդյունքում հիմնարկների վարչակազմերին տրվել են հանձնարարականներ՝ ուղղված հիմնականում դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացի կարգավորմանը և իրավաբանական օգնություն ստանալու նրանց իրավունքի իրացման ապահովմանը:

Իսկ ընդհանուր առմամբ, 2018 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների կողմից կալանավորված անձանց և դատապարտյալների հետ քրեակատարողական հիմնարկներում կատարվել է իրավական

հարցերով 306 անհատական ընդունելություն /2017թ՝ 73/: Դրանցից 50-ը անցկացվել է վարչության պետի կողմից:

Այդուհանդերձ նշված ոլորտում առկա են բազում խնդիրներ՝ կապված դատապարտյալների կենցաղային պայմանների, վերջիններիս զբաղվածության, ինքնագործ միավորումներ ստեղծելու, կրթության իրավունքի իրացման հետ, որոնք համակարգային լուծում են պահանջում և ներկայումս այդ ուղղություններով ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվում են հայեցակարգային լուծումներ:

7. Միջազգային-իրավական համագործակցության ոլորտ

Հայաստանի Հանրապետության դատախազության հիմնական առաջնահերթություններից մեկը միջազգային-իրավական կապերի, միջազգային կառույցների հետ հարաբերությունների ամրապնդումն է, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարում այլ պետությունների իրավասու մարմինների հետ մինչդատական վարույթում գտնվող քրեական գործերով համագործակցության խորացումը:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ և 54.1-րդ գլուխներով ու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների՝ իրեն վերապահված գործառույթների իրականացումը՝ ըստ հետևյալ հիմնական ուղղությունների՝

1. Քրեական գործերով իրավական օգնություն (ներառյալ՝ քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ուղարկվող և ստացվող հարցումների կատարման ապահովում).

2018 թվականի ընթացքում ԱՊՀ մասնակից պետությունների դատախազություններ է ուղարկվել քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 170 միջնորդություն (2017թ.՝ 176), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 356 միջնորդություն (2017թ.՝ 277), ընդամենն ուղարկվել է 526 միջնորդություն, նախորդ տարվա 453 միջնորդության փոխարեն, որոնցից 55-ը կոռուպցին բնույթի հանցագործություններով քննվող քրեական գործերով:

2018 թվականի ընթացքում ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 145 միջնորդություն (2017թ.՝ 167), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 28 միջնորդություն (2017թ.՝ 18), ընդհանուր առմամբ ստացվել է 173 միջնորդություն, նախորդ տարվա 185-ի փոխարեն, որոնցից 6-ը կոռուպցին բնույթի հանցագործություններով քննվող քրեական գործերով:

2. Քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին միջնորդություններ.

2018 թվականի ընթացքում ուղարկվել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող անձանց հանձնելու մասին 51 միջնորդություն (2017թ.՝ 66), որոնցից 27-ն ուղարկվել է ԱՊՀ մասնակից պետությունների (2017թ.՝ 50), իսկ 24-ը՝ այլ օտարերկրյա պետությունների (2017թ.՝ 16) իրավասու մարմիններին:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազների կողմից ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության քրեական հետապնդման մարմինների կողմից հետախուզվողների հայտնաբերման մասին ստացված տեղեկությունների հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթները, անճշտությունների, թերությունների առկայության դեպքում պահանջվել են դրանց լրամշակված տարբերակները, իսկ անհրաժեշտության դեպքում, օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հանձնման միջնորդությունների քննարկման ընթացքում, միջազգային պայմանագրերի համաձայն, հայցվել ու տրամադրվել են լրացուցիչ տեղեկություններ ու փաստաթղթեր:

Այս գործընթացի ճիշտ կազմակերպման արդյունքում նվազագույնի են հասցվել հանձնման միջնորդությունների անհիմն մերժման դեպքերը:

Այսպես.

Հաշվետու ժամանակահատվածում ուղարկված 51 հանձնման միջնորդությունից 16-ը բավարարվել է (2017թ.՝ 27), 7-ը՝ մերժվել (2017թ.՝ 11), 28-ը քննարկման փուլում են: 2018թ. ընթացքում բավարարվել է նաև նախկինում ներկայացված 16 հանձնման միջնորդություն:

Կրկնակի /12-25/ աճել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված այն հետախուզվողների թիվը, որոնց նկատմամբ հայցող պետության իրավասու մարմինների կողմից որպես խափանման միջոց է ընտրված եղել կալանավորումը: Հետևաբար կրկնակի ավելացել է նաև ստացված հանձնման մասին միջնորդությունների թիվը:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված նման 25 միջնորդությունից (2017թ.՝ 12) բավարարվել է 12-ը, մերժվել՝ 3-ը, 4-ն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 6-ը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ եղել են քննարկման փուլում:

Պետք է փաստել, որ շարունակաբար աճում է օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված ու կալանավորված անձանց թիվը: 2019թ. հունվարի դրությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության տարբեր քրեակատարողական հիմնարկներում պահվել է դատախազների միջնորդությամբ կալանավորված 25 հետախուզվող (2017թ.՝ 15):

Աճել է նաև օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված այն հետախուզվողների թիվը, որոնց նկատմամբ հայցող պետության իրավասու մարմինների կողմից որպես խափանման միջոց է ընտրված եղել չհեռանալու մասին ստուրագրությունը կամ կալանավորման հետ չկապված այլ խափանման միջոց: ՀՀ գլխավոր դատախազությունում հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 189 անձի վերաբերյալ (2017թ.՝ 140):

3. Քրեական գործերով վարույթների փոխանցում (ստացված և ուղարկված քրեական գործեր և նյութեր).

Զգալիորեն աճել է նաև օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկվող քրեական գործերի և նյութերի թիվը:

Դատախազության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ է ուղարկվել 28 քրեական գործ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում 16-ի փոխարեն), որից 18-ը ուղարկվել են ԱՊՀ իրավասու մարմիններին, իսկ 10-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին:

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից վարչությունում ստացվել է 8 քրեական գործ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 9):

Քրեական գործերով իրավական օգնություն հայցելու և տրամադրելու, ինչպես նաև հանձնման և քրեական գործերով վարույթների փոխանցման գործընթացում խստորեն պահպանվում են ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերի, ինչպես նաև ներպետական օրենսդրության դրույթները:

2018թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության դատախազությունը շարունակել է համագործակցությունը ինչպես օտարերկրյա պետությունների դատախազությունների, այնպես էլ ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի, Դատախազների միջազգային ասոցիացիայի ու Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

Շարունակելով համագործակցությունը ՌԴ գլխավոր դատախազության հետ, դատախազությունն ապահովել է 2018-2020 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջև համագործակցության ծրագրի 1-ին /Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում ծագող իրավական խնդիրները և այդ ոլորտում դատախազական հսկողության հիմնահարցերը/ և 2-րդ /Տնտեսական գործունեության ոլորտում կատարված հանցագործությունների, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների օրինականացման /փողերի լվացման/ դեմ պայքար/ կետերով նախատեսված միջոցառումների իրականացումը, որոնցից 1-ը անցկացվել է ք. Երևանում, իսկ 1-ը՝ ք. Մոսկվայում:

Հունաստանի Հանրապետության գերագույն դատարանի դատախազության հետ համագործակցության արդյունքում նախապատրաստվել և 03.07.2018թ. Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության գլխավոր դատախազների կողմից ստորագրվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հունաստանի Հանրապետության գերագույն դատարանի դատախազության միջև Համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր:

Ուզբեկստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից առաջարկվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ուզբեկստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջև ստորագրել համագործակցության մասին Հուշագիր, որի կապակցությամբ ներկայումս դատախազությունն իրականացնում է համապատասխան ընթացակարգ:

Նշված համագործակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը մասնակցել է արտերկրում կազմակերպված մի շարք միջազգային միջոցառումների, մասնավորապես՝

1. 2018թ. սեպտեմբերի 8-ից 14-ը Հարավաֆրիկյան Հանրապետության Յոհանեսբուրգ քաղաքում կայացած Դատախազների միջազգային ասոցիացիայի 23-րդ տարեկան համաժողովին և գլխավոր ժողովին:

Համաժողովի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել հաշվետվողականության և ինքնուրույնության սկզբունքների շրջանակներում դատախազական համակարգի կառավարման հիմնախնդիրների վերաբերյալ ելույթով, որում փաստել է, որ ցանկացած երկրում արդյունավետ, վստահելի և լեգիտիմ արդարադատության համակարգի կայացման համար չափազանց կարևոր է քաղաքական և տարատեսակ այլ ճնշումներից, ներգործություններից դատախազական համակարգի պաշտպանվածության, քաղաքացիական վերահսկողության իրավական երաշխիքների ներդրումն ու գործադրման պայմանների ապահովումը, ընդհանրական միջազգային ստանդարտների տեղայնացումը:

Ընդգծվել է, որ այս ուղղությամբ Հայաստանում վերջին մի քանի տարիներին իրականացվել են նշանակալի գործնական քայլեր, մասնավորապես, Հայաստանում կատարված սահմանադրահիրավական բարեփոխումները կանխորոշել են դատախազության

զարգացման ուղիները, իսկ 2017թ. ընդունված և այս տարվա ապրիլից ուժի մեջ մտած «Դատախազության մասին» ՀՀ օրենքը ստեղծել է դատախազության համակարգային և գործառութային անկախության, հաշվետվողականության շարունակական ամրապնդման իրավական հիմքեր, որոնք ներկայումս ստանում են գործնական կիրառություն: ՀՀ դատախազությունը շարունակում է պարբերաբար կատարելագործել վերոնշյալ սկզբունքների իրականացման մեխանիզմները, որոնք առանցքային նշանակություն ունեն դատախազության կայուն զարգացման համար:

Մանրամասն ներկայացվել են իրականացված բարեփոխումներով Հայաստանի դատախազության հաշվետվողականության, դատախազության գործունեությանը միջամտելու անթույլատրելիության սկզբունքների իրագործմանը ներդրված կառուցակարգերը՝ սկսած ՀՀ գլխավոր դատախազին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու նոր ընթացակարգերից մինչև դատախազների թեկնածուներին ներկայացվող պահանջների, նրանց պաշտոնի նշանակման, պաշտոնեական առաջխաղացման, խրախոսման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու առավել թափանցիկ և հստակ լուծումները, հանցագործությունների քննությունների տարեկան արդյունքների հրապարակման, ԱԺ-ին դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդում ներկայացնելու օրենսդրական պահանջները:

Համաժողովի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը երկկողմ հանդիպում է ունեցել Շվեյցարիայի գլխավոր դատախազի հետ, որի ընթացքում երկու երկրների գլխավոր դատախազների միջև ձեռք են բերվել գործնական և առարկայական պայմանավորվածություններ՝ մասնավորապես հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների հայտնաբերման և վերադարձման հարցում համագործակցության շուրջ:

Նույն համաժողովի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպում է ունեցել նաև Արաբական Միացյալ Էմիրությունների դատախազության պատվիրակության ղեկավարի հետ, որի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել իրավական փոխօգնության շրջանակներում փոխադարձ շփումներն առավել դինամիկ, օպերատիվ, համակարգված և արդյունավետ դարձնելու շուրջ:

Երկկողմ հանդիպումներ են կայացել նաև մի շարք այլ երկրների դատախազությունների պատվիրակությունների ղեկավարների, ինչպես նաև Դատախազների միջազգային ասոցիացիայի նախագահի հետ, որոնց ընթացքում քննարկվել են իրավական փոխօգնության ոլորտում, անդրազգային հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության զարգացման ուղղությունները, ինչպես նաև այլ արդիական հարցեր, ձեռք են բերվել հետագա համագործակցության վերաբերյալ կոնկրետ պայմանավորվածություններ:

2. 2018թ. սեպտեմբերի 18-ից 21-ը Տաջիկստանի Հանրապետության Դուշանբե քաղաքում մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի 28-րդ նիստին:

Նիստի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել կոռուպցիայի դեմ համակարգային և քրեաիրավական պայքարի հայաստանյան փորձին և արդյունքներին վերաբերող ելույթով: Ներկայացվել են այս ուղղությամբ Հայաստանում վերջին տարիներին իրականացված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ բարեփոխումները, դրանցից բխող օրենսդրական լուծումները, վերջիններիս գործադրման առկա պրակտիկան:

Նիստի ընթացքում Կոորդինացիոն խորհրդի 20-ամյա հոբելյանի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը պարգևատրվել է «ԱՊՀ ԳԴԿԽ 20-ամյակը»

մեդալով՝ ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի զարգացման, նրա գործունեության կատարելագործման, այդ նպատակներով ԱՊՀ երկրների դատախազությունների միջև համագործակցության ամրապնդման գործում ներդրած ավանդի համար:

3. 2018թ. մայիսի 29-ից 31-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում մասնակցել է Վրաստանի դատախազության օրվա և այդ երկրի դատախազության կազմավորման 100-ամյակին նվիրված միջոցառումներին, որի շրջանակներում կազմակերպված երկկողմ հանդիպումների արդյունքում հստակեցվել են Վրաստանի գլխավոր դատախազության հետ համագործակցության հետագա ուղղությունները:

4. 2018թ. նոյեմբերի 13-ից 16-ը ԻԻՀ գլխավոր դատախազի հրավերով պաշտոնական այցով մեկնել է Իրանի Իսլամական Հանրապետություն:

Երկու երկրների գլխավոր դատախազների հանդիպման ընթացքում քննարկվել են ինչպես հարևան երկրների դատախազական համակարգերի միջև գործակցության հեռանկարները, այնպես էլ իրավական փոխօգնության ձևավորված աշխատանքային պրակտիկայի բարելավմանն ուղղված կոնկրետ հարցեր: Մասնավորապես՝ քննարկվել է Հայաստանում կամ Իրանում քննվող քրեական գործերով դատավարական կարգավիճակ ունեցող՝ մյուս երկրի քաղաքացի հանդիսացող անձանց իրենց երկրում գտնվելու դեպքում տեսաձայնային և տեխնիկական սարքավորումների միջոցով հարցաքննելու տեխնիկական հնարավորությունների ստեղծման հեռանկարը, ինչը կնպաստի իրավասու մարմինների կողմից քրեական գործերով օբյեկտիվ և բազմակողմանի քննություն ապահովելուն, ինչպես նաև երկու պետությունների քաղաքացիներին հնարավորություն կտա դատավարական կարգավիճակ ունենալու դեպքում, առանց տեղափոխման հետ կապված ավելորդ անհարմարությունների, արդյունավետ իրացնել իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Բացի դրանից, գլխավոր դատախազները քննարկել են նաև քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների կատարման ժամկետները հնարավորինս կրճատելու հարցը:

Հարկ է նշել, որ հանդիպումից հետո այս բնագավառում արձանագրվել է դրական տեղաշարժ:

Հանդիպման արդյունքում երկու պետությունների գլխավոր դատախազները ստորագրել են ՀՀ և ԻԻՀ գլխավոր դատախազությունների միջև 2019-2020 թվականների համագործակցության ծրագիր, որով նախատեսվում է մի քանի համատեղ միջոցառումներ անցկացնել Երևանում և Թեհրանում: Դրանք վերաբերում են հանձնման և քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման բնագավառում համագործակցության գործնական հարցերին, թմրամիջոցների մաքսանենգության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության, ինչպես նաև ապօրինի սահմանահատումների և ապօրինի միգրացիայի դեպքերով հարուցված քրեական գործերի քննությունների, հանցագործությունների արդյունքում ստացված ակտիվների հայտնաբերման, առգրավման, բռնագրավման և արտերկրից վերադարձման ուղղություններով գործակցությանը և աշխատանքային փորձի փոխանակմանը:

Ստանձնած միջազգային պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մասով կատարման ընթացքը ներկայացնելու, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու նպատակով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և գլխավոր դատախազի տեղակալները

հանդիպումներ են ունեցել նաև միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների՝ մարդկանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող իրավասու կառույցների ներկայացուցիչների, ինչպես նաև ՀՀ ժամանած այլ պաշտոնատար անձանց հետ, մասնավորապես.

1. 25.05.2018թ. ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի մոնիթորինգային հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներին, որի ընթացքում քննարկվել են ՀՀ-ում ընթացող դատաիրավական բարեփոխումների ընթացքը, ՀՀ դատախազության լիազորությունների և դրանց շրջանակներում իրավունքի գերակայության ապահովման՝ ՀՀ դատախազության առաքելությանը վերաբերող հարցեր:

2. 22.10.2018թ. ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ճանաչողական այցով Հայաստանում գտնվող՝ Ավստրիայի դատախազներից և դատավորներից կազմված պատվիրակությանը, որի ընթացքում քննարկվել են մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությանը, մեղադրանքի պաշտպանությանը, կոռուպցիայի դեմ պայքարին, ինչպես նաև իրավական փոխօգնության և քրեական հետապնդման ենթարկելու նպատակով անձանց հանձնման ոլորտներում համագործակցությանը վերաբերող հարցեր:

3. 19.06.2018թ. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է Գերմանիայի Բունդեսթագի Պետիցիայի հարցերով հանձնաժողովի նախագահին: Հանդիպման ընթացքում քննարկվել են կոռուպցիայի դեմ պայքարին, խափանման միջոցների կիրառման պրակտիկային, քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց իրավունքների պաշտպանության ապահովմանը, ընտանեկան բռնության հետ կապված հանցագործությունների քննությանն առնչվող հարցեր:

4. 17.07.2018թ. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալության (OFPRA) պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են կոռուպցիայի դեմ պայքարի, ընտանեկան բռնության, խոշտանգումների դեպքերի քննության, ապօրինի միգրացիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն առնչվող հարցեր, ինչպես նաև ՀՀ դատախազության փորձը՝ ընտանեկան բռնության գործերով քննության որակի բարձրացման տեսանկյունից:

5. 19.09.2018թ. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներն ընդունել են Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի գլխավորած պատվիրակությանը, որի ընթացքում քննարկվել են Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերին առնչվող քրեական գործերով իրականացվող քննությունների օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և ներգործության միջոցների արդյունավետությանը, կանանց և խոցելի այլ խմբերի քրեաիրավական պաշտպանության իրավիճակին, կառուցակարգերին առնչվող հարցեր, ինչպես նաև մի շարք այլ արդիական հարցեր:

Բացի դրանից, ԵԽ հանձնակատարի կողմից ուշադրության են արժանացել հասարակական հնչեղություն ունեցող մի շարք գործերով դատախազական հսկողության արդյունավետությանն առնչվող հարցերը՝ դատավարության ողջ ընթացքում օրինականության և դատավարության բոլոր մասնակիցների իրավունքների լիարժեք ապահովման լույսի ներքո:

6. 19.10.2018թ. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է Համաշխարհային բանկի (ՀԲ) և Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներից կազմված

պատվիրակությանը, որի ընթացքում քննարկվել են ՀԲ-ի աջակցությամբ Եվրոպական հանձնաժողովի կողմից նախաձեռնված՝ ԵՄ Արևելյան գործընկերության մաս կազմող, ինչպես նաև բալկանյան 12 երկրների մասնակցությամբ տարածաշրջանային ընդգրկման նոր ծրագրում ՀՀ դատախազության մասնակցության հնարավորություններին վերաբերող հարցեր:

7. 07.11.2018թ. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներն ընդունել են ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքի հարցերով հատուկ զեկուցողի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում հավաքների ազատության իրացման իրավական երաշխիքներին, գործող իրավական հիմքերի բավարարությանը, հավաքների մասնակիցների նկատմամբ անհրաժեշտության դեպքում կիրառվող ուժի համաչափության և դրա նկատմամբ ներքին ու արտաքին հսկողության մեխանիզմներին, ինչպես նաև հավաքների ընթացքում տեղ գտած իրավախախտումների փաստերով քննվող քրեական գործերի արդյունավետությանը, քրեական հետապնդումների հիմնավորվածությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ: Հանդիպման ընթացքում ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողը կարևոր ցուցիչ է համարել այն դիտարկումը, որ վերջին շրջանում էականորեն բարձրացել է իրավապահ մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահությունը:

8. 27.11.2018թ. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին նախապատրաստման և անցկացման ընթացքի դիտարկման նպատակով Հայաստանում գտնվող Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) դիտորդական առաքելության շտաբի ղեկավարին, որի ընթացքում քննարկվել են ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրախախտումների հանցավոր դրսևորումների կանխարգելման, նման դեպքերի արձանագրման դեպքում դատախազական ներգործության միջոցների կիրառման առնչվող հարցեր, պայմանավորվածություն է ձեռք բերվել դիտորդական առաքելության ժամանակահատվածում ընտրախախտումների և դրանց դեմ տարվող աշխատանքների վերաբերյալ տեղեկության փոխանակման հարցում համագործակցության վերաբերյալ:

9. 29.11.2018թ. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության ստուգումների և ֆինանսական վերահսկողության գլխավոր տեսչության պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում և Իրանում քննվող քրեական գործերով կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող՝ միմյանց երկրների քաղաքացիների հանձնման պատշաճ իրավական ընթացակարգերի շրջանակներում փոխադարձ աջակցություն ցուցաբերելուն, թմրանյութերի ապօրինի շրջանառության և տարանցման դեմ պայքարում գործակցությունը խորացնելուն, քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների կատարման ժամկետները կրճատելուն առնչվող հարցեր, ձեռք է բերվել պայմանավորվածություն օպերատիվ լուծումներ ապահովելու, իրավապահ համակարգերի համագործակցությունն առավել սերտացնելու վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազը հանդիպումներ է ունեցել նաև Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների հետ, մասնավորապես.

1. 17.01.2018թ. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանին: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև ինչպես երկկողմ, այնպես էլ

բազմակողմ ձևաչափերով քրեաիրավական ոլորտում համագործակցությունը խորացնելու հեռանկարները, կարևորվել է քննությունից խուսափող անձանց հայտնաբերելու և նախատեսված ընթացակարգերով միմյանց հանձնելու գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունը:

2. 23.08.2018թ. և 28.12.2018թ. ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանին, որի ընթացքում քննարկվել են 2017թ. նոյեմբերին Սանկտ-Պետերբուրգում կայացած Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ երկրների գլխավոր դատախազների նիստերի շրջանակներում տեղի ունեցած ՀՀ և ԻԻՀ գլխավոր դատախազների հանդիպման ընթացքում քննարկված՝ համագործակցության խորացմանը վերաբերող հարցեր, ինչպես նաև ԻԻՀ գլխավոր դատախազի հրավերով ՀՀ գլխավոր դատախազի այցն Իրանի Իսլամական Հանրապետություն:

Միաժամանակ, քննարկվել են երկու երկրների քաղաքացիների ակտիվ փոխայցելություններով պայմանավորված՝ վերջիններիս իրավական պաշտպանության ապահովման, ինչպես նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության, անդրազգային հանցագործությունների դեմ պայքարում առավել արդյունավետ մեխանիզմների գործադրման անհրաժեշտության հետ կապված հարցեր:

3. 05.10.2018թ. ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպանին, որի ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև քրեաիրավական ոլորտում փոխհարաբերությունների զարգացման նոր հնարավորություններին վերաբերող հարցեր, քաղաքացիների և ծառայությունների տեղաշարժի ակտիվացմանը զուգահեռ, քաղաքացիների իրավունքների քրեաիրավական պաշտպանության առավել գործուն մեխանիզմների կիրառմանը, արդարադատությունից խուսափող անձանց հայտնաբերելուն, անդրազգային բնույթ կրող հանցագործությունների դեմ պայքարում համատեղ ջանքերն ավելացնելուն առնչվող խնդիրներ, ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ՝ ծագող օրակարգային խնդիրներն առավել օպերատիվ և արդյունավետ լուծելու կապակցությամբ:

Բացի դրանից, 2018թ. հունիսի 30-ից հուլիսի 2-ը Երևան քաղաքում կազմակերպվել և անցկացվել են ՀՀ դատախազության 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներ, որոնց մասնակցելու համար Հայաստան են ժամանել բարձր մակարդակով պատվիրակություններ Դատախազների միջազգային ասոցիացիայից, ԱՊՀ գործադիր կոմիտեից, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդից, ԱՊՀ գլխավոր դատախազների համակարգող խորհրդից, ինչպես նաև Արցախի, ՌԴ-ի, ՉԺՀ-ի, Վրաստանի, Հունաստանի, Ռումինիայի, Էստոնիայի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի գլխավոր դատախազություններից:

ՀՀ դատախազության 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների ընթացքում կազմակերպվել են ՀՀ գլխավոր դատախազի երկկողմ հանդիպումները միջոցառումներին մասնակցելու համար Հայաստան ժամանած 16 պատվիրակությունների ղեկավարների հետ, որոնց հետ քննարկվել են երկկողմ համագործակցության հետագա զարգացման հարցեր:

Նշված միջոցառման շրջանակներում 02.07.2018թ. Երևանում կայացել է ԿՀՄԽ հերթական նիստը, որին մասնակցել են Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղրղզստանի դատախազությունների, Ղազախստանի պետական ծառայության և

կոռուպցիայի հակազդման գործերով գործակալության, ԱՊՀ գործադիր կոմիտեի պատվիրակությունները:

8.Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում իրավական ապահովման ոլորտում ՀՀ դատախազության կողմից, դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունների հիման վրա, մշակվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, որոնց նպատակն է կատարելագործել ՀՀ օրենսդրությունը և բարելավել ՀՀ դատախազության գործունեությունը, ամփոփվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքները, գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին ներկայացվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ամփոփ կարծիքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավաստեղծ գործունեության ոլորտում իրականացվել են իրավական ակտերի մշակման և լրամշակման աշխատանքներ, որոնց արդյունքում ներկայացվել է 2 օրենսդրական նախաձեռնություն, այդ թվում՝ 3 օրենքի նախագիծ:

Մասնավորապես,

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով առաջարկվող կարգավորումների նպատակն է հստակեցնել օրենքով սահմանված կարգով ազատությունը սահմանափակված օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց փախստականի կարգավիճակ ձեռք բերելու կամ ապաստանի համար դիմելու գործընթացը՝ այդ թվում՝ իրավասու մարմնի կողմից կայացված բացասական որոշումը դատական կարգով բողոքարկելու ողջ ընթացակարգը ենթարկելով ժամկետային կարգավորման, ինչպես նաև բացառել նույն հիմքով երկրորդ անգամ լիազոր մարմնին դիմելու պրակտիկան՝ իրավունքի չարաշահման հնարավորությունը բացառելու, իրավական որոշակիություն և քրեադատավարական հարաբերությունների բնականոն ընթացքն ապահովելու նպատակով:

Նախագծերը 24.01.2018թ. 20/5-4-18 թվակիր գրությամբ ուղարկվել են ՀՀ վարչապետին՝ շրջանառության մեջ դնելու և կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը միտված է կալանավորման կիրառման հիմքերի հստակեցմանը, քրեադատավարական ոլորտ տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցների ներառմանը, մասնավորապես՝ նախագծով առաջարկվող կարգավորման հիմնական ուղղությունները հետևյալն են՝

1. Օրենսգրքի 134-րդ հոդվածում տնային կալանքը և վարչական հսկողությունը որպես խափանման միջոցներ սահմանելը,

2. Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կալանավորման միևնույն հիմքերի պայմաններում կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման ավելի բարձր նշաձող սահմանելը, այն է՝ միայն այն դեպքում մեղադրյալի կալանավորումը, երբ առկա է հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար

նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը հինգ տարուց ավելի է,

3. այն հանցագործությունների համար, որոնցով նախատեսվող ազատազրկման ձևով հնարավոր առավելագույն պատժաչափը հինգ տարուց պակաս է, կալանավորման ավելի խիստ, այն է՝ մեղադրյալի անհիրավաչափ վարքագծի վերաբերյալ ոչ կանխատեսական, արդեն իսկ առկա փաստական տվյալների վրա հիմնված հիմքեր նախատեսելը (օրինակ՝ մեղադրյալը թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից և այլն),

4. կալանքի ժամկետը երկարացնելիս դատարանի առջև քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պատշաճ ջանասիրությունը հիմնավորելը,

5. պաշտոնավարման ժամանակավոր դադարեցում դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման հնարավորությունը ինչպես հանրային ծառայության մեջ գտնվող, այնպես էլ չգտնվող կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ նախատեսելը:

Նախագիծը 22.06.2018թ. 20/5-51-18 թվակիր գրությամբ ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարին՝ սահմանված կարգով ընթացք տալու և Կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

Հարկ է նաև նշել, որ հաշվետու ժամանակահատվածում ԱԺ-ի կողմից ընդունվել է ՀՀ դատախազության կողմից 2017 թվականին նախաձեռնած «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով հնարավորություն ընձեռնվեց անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, փոփոխելու կամ լրացնելու հետախուզման մեջ գտնվող անձին չառաջադրված մեղադրանքը, ինչպես նաև վերաձևակերպվեց 259-րդ հոդվածը՝ քննիչի և հետաքննության մարմնի դատավարական բնույթի պարտականությունները նախատեսելով քրեական դատավարության օրենսգրքում՝ այդպիսով բարձրացնելով հետախուզական աշխատանքի կազմակերպման և դրա նկատմամբ օրենքով նախատեսված հսկողության արդյունավետությունը:

Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (226.1 հոդված), որով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքում կատարել լրացում՝ քրեականացնելով ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու հրապարակային կոչերը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է նաև Կառավարության և ՀՀ վարչապետի որոշման մեկական նախագիծ, մասնավորապես.

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի N 818-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով առաջարկվում է «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի որոշման հավելվածում լրացնել 11-րդ ենթակետ, որի համաձայն՝ մարդու ազատությունը սահմանափակելիս մարդն իրավունք ունի պարզաբանում ստանալու «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում նախատեսված իրավասու մարմիններից 15 օրացուցային օրվա ընթացքում ապաստան հայցելու իրավունքի մասին:

Նախագիծը 24.01.2018թ. 20/5-4-18 թվակիր գրությամբ ուղարկվել է ՀՀ վարչապետին:

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի հունիսի 30-ի N 665-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ, որով առաջարկվում է մինչդատական վարույթում գտնվող քրեական գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքը մշակելու ժամկետը երկարաձգել մինչև 2019թ. սեպտեմբերի 15-ը:

Նախագիծը 14.09.2018թ. 02/20/10123-18 թվակիր գրությամբ ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազությունում ուսումնասիրվել են տարբեր գերատեսչություններից ստացված՝ օրենքի 138 (2017թ.՝ 170), կառավարության որոշման 60 (2017թ.՝ 22), վարչապետի որոշման 4, փոխվարչապետի որոշման 3 նախագծեր, որոնց վերաբերյալ կարծիքներ են ներկայացվել:

«Դատախազության մասին» նոր օրենքի ընդունումից հետո ՀՀ դատախազությունը ներգրավվել է առկա ենթաօրենսդրական կարգավորումները, ինչպես նաև դատախազության ներքին իրավական ակտերը նոր օրենքի դրույթներին համապատասխանեցնելու գործընթացում:

Այսպես՝ դատախազությունն ակտիվորեն ներգրավվել է ««Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 22.02.2018թ. N 167-Ա որոշման հավելվածով նախատեսված՝ ՀՀ կառավարության 14 որոշումների նախագծերի նախապատրաստման աշխատանքում: Մասնավորապես, պետական տարբեր մարմինների մասնակցությամբ և դատախազության անմիջական ներգրավվածությամբ մշակվել և հետագայում ընդունվել են.

«Պետության գույքային շահերի պաշտպանության կամ պետության գույքային շահերին առնչվող հայցի հայցագնի չափը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների),

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 15-ի N 1348-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների),

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1797-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների),

«Դատախազին այլ վայր գործուղելիս բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում դրամական փոխհատուցում տալու կարգը և չափը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների),

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 113-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների),

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի N 600-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը

(ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների),

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի N 601-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների),

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի N 602-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների),

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի N 603-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների),

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի N 604-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների),

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի N 605-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների),

«Դատախազի ապահովագրության և ապահովագրական գումարների չափերը, հաշվարկման, վճարման կարգը և պայմանները, ինչպես նաև առողջական վիճակի հետազոտման պայմանները, պարբերականությունը և կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների),

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների),

«Դատախազների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը, դատախազության խորհրդանիշը և համազգեստի տրամադրման ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի N 664-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ի կատարումն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների):

Մշակվել են նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքից բխող՝ ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան հրամանների նախագծեր: Մասնավորապես, «Դատախազության մասին» 17.11.2017թ. օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 09.04.2018թ.-ից մինչև 27.04.2018թ.-ը մշակվել են ՀՀ գլխավոր դատախազի շուրջ 21 հրամանների նախագծեր, որոնցով, ի թիվս այլնի, սահմանվել կամ հաստատվել են ՀՀ դատախազության

կոլեգիայի գործունեության կարգը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի կազմակերպման կարգը, դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը, դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը, դատախազի վարքագծի կանոններից բխող պահանջները, դատախազների ատեստավորում անցկացնելու կարգը և հարցաշարը, համազգեստի և տարբերանշանների կրման կարգը, դատախազին միանվագ դրամական օգնություն տալու կարգը և այլն:

Բացի դրանից, հաշվետու ժամանակահատվածում տարբեր պետական մարմիններին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին (Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, ՀՀ փաստաբանների պալատի նախագահ, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար և այլն), վերջիններիս կողմից ներկայացված ազգային զեկույցների, տարբեր հարցաշարերի, տեղեկատվական բնույթի այլ փաստաթղթերի՝ Հայաստանի Հանրապետության դատախազության իրավասությանն առնչվող հարցադրումների վերաբերյալ, տրամադրվել է 56 վերլուծական բնույթի տեղեկություն (տեղեկանք), նախորդ տարվա 50-ի փոխարեն:

Մասնավորապես՝

- 2018թ. մայիսի 17-ին Երևանում կայացած Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով Հայաստան-ԵՄ ենթակոմիտեի իններորդ նիստի արդյունքներով ձևավորված գործառնական եզրակացությունների վերաբերյալ,
- «GSP+» առևտրային ռեժիմի 2018-2019թթ. նոր հարցադրումների վերաբերյալ,
- Հայաստանի հետ ԵԱՀԿ-ի համագործակցության ծրագրի՝ Հայաստանի Հանրապետությունում անվտանգության ոլորտի բարեփոխումների նախագծի շրջանակներում ԵԱՀԿ քարտուղարության կարիքների գնահատման առաքելության արդյունքներն ամփոփող զեկույցի նախագծի վերաբերյալ,
- ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի իրականացման վերաբերյալ ՀՀ երրորդ պարբերական զեկույցի նախագծի վերաբերյալ,
- ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմիններում ՀՀ «Հիմնարար փաստաթղթի» վերանայված նախագծի վերաբերյալ,
- Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի (ԹՊԻՀ) շրջանակում անդրազգային կազմակերպված հանցավորության ու դրան սերտորեն առնչվող հանցագործությունների վերաբերյալ՝ սույն թվականի հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
- ԱՄՆ պետդեպարտամենտի 2018 թվականի՝ մարդու իրավունքների և կրոնական ազատությունների մասին ամենամյա զեկույցի պատրաստման համար,
- Եվրոպայի Խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից ՀՀ-ի վերաբերյալ գնահատման 4-րդ փուլի հանձնարարականների կատարումը պետական մարմինների կողմից պատշաճ ապահովելու նպատակով ներկայացվող առաջարկությունների վերաբերյալ,

- «Վերանայված Եվրոպական հարևանության քաղաքականության համատեքստում ՀՀ-ԵՄ հարաբերությունների վերաբերյալ զեկույց»-ի (Joint Staff Working Document: Report on EU-Armenia relations in the framework of the revised ENP) կազմման վերաբերյալ,

- ՄԱԿ-ի «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու մասին» 1970 թ. Փարիզի կոնվենցիայի դրույթների կատարման ազգային զեկույցի հարցաշարի վերաբերյալ,

- ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հակաահաբեկչական կոմիտեի գործադիր տնօրինության (ԱԽ ՀԿԳՏ) պատվիրակության Հայաստան կատարած այցի շրջանակներում արդյունքների ամփոփման հիման վրա պատրաստված զեկույցի նախնական տարբերակի և ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ զեկույցում արծարծված թեմաների վերաբերյալ և այլն:

ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվել է ՀՀ քրեական օրենսգրքի բլանկետային դիսպոզիցիաներ պարունակող հոդվածների ուսումնասիրություն՝ տվյալ հոդվածների իրավակարգավորումների՝ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0131/01/15 գործով 2018 թվականի մարտի 20-ին կայացված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխանությունը պարզելու նպատակով: Ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի որոշ հոդվածներ լիովին համապատասխանում են իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքին, որոշ հոդվածներ բավարարում են մասամբ, իսկ որոշ հոդվածներով նախատեսված բլանկետային դիսպոզիցիաներում հղում արվող կանոնները ընդհանրապես կարգավորված չեն ոլորտային օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով: Կատարված ուսումնասիրության արդյունքներով գրություն է ուղարկվել ՀՀ վարչապետին՝ իրավասու մարմիններին օրենսդրության մեջ առկա ոչ հստակ իրավակարգավորումները շտկելու նպատակով համապատասխան հանձնարարականներ տալու համար:

2018թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվել է 35 ծառայողական քննություն՝ 44 դատախազի նկատմամբ: 12 դատախազի նկատմամբ հարուցվել է 8 կարգապահական վարույթ: Տույժի է ենթարկվել 8 դատախազ, որոնցից 2-ի նկատմամբ նշանակվել է «դիտողություն», 5-ի նկատմամբ՝ «նկատողություն», 1-ի նկատմամբ՝ «խիստ նկատողություն»:

Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իրավակարգավորումների՝

իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար 2 դատախազի նկատմամբ նշանակվել է «դիտողություն», 4-ի նկատմամբ՝ «նկատողություն», իսկ 1-ի նկատմամբ՝ «խիստ նկատողություն» տեսակի կարգապահական տույժ,

դատախազի վարքագծի կանոնները խախտելու հիմքով 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ:

Ի կատարումն «Դատախազության մասին» օրենքի 79-րդ հոդվածի 6-րդ մասի՝ օրենքի ուժի մեջ մտնելուց պահից (2018 ապրիլի 9-ը) 15-օրյա ժամկետում նույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ձևավորվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է նոր ձևավորված էթիկայի հանձնաժողովի անդրանիկ նիստը, որի ընթացքում քննարկվել է 3 դատախազի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նույն

ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով անհատապես խրախուսվել է 286 դատախազ, որոնցից 16-ը՝ կրկնակի:

2018 թվականին դասային աստիճան է շնորհվել 120 դատախազի, այդ թվում՝ 46-ը արտահերթ՝ խրախուսման կարգով:

2018թ. ընթացքում ՀՀ դատախազության համակարգից իրենց անձնական դիմումների համաձայն ազատվել է 23 դատախազ, որոնցից 2-ը՝ կենսաթոշակի անցնելու կապակցությամբ:

Նույն ժամանակահատվածում դատախազի պաշտոնում նշանակվել է 19 անձ, որոնցից 10-ը ՀՀ արդարադատության ակադեմիայի շրջանավարտներ են, 7-ը՝ նախկին քննիչներ, 1-ը՝ նախկին դատախազ, իսկ 1-ը՝ 5 տարվա իրավաբանի ստաժով գիտությունների թեկնածու:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության դատախազությունում դատախազների հաստիքների թիվը եղել է 338, որոնցից թափուր՝ 10-ը:

9. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ

2018թ. ընթացքում ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 3525 դեպք, նախորդ տարվա 3416-ի դիմաց: Աճ է արձանագրվել 109 դեպքով կամ 3.2%-ով: Արձանագրված դեպքերից 2358-ը կամ 66.9%-ը եղել են պատահարներ-զանցանքներ, 1140-ը կամ 32.3%-ը՝ հանցագործություններ, այդ թվում՝ 727-ը կամ 63.8%-ը՝ զինվորական, 413-ը կամ 36.2%-ը՝ այլ ընդհանուր, իսկ 27 դեպքի կամ 0.8%-ի հանգամանքները 2019թ. հունվարի 1-ի դրությամբ դեռևս պարզված չեն եղել:

Նախորդ տարվա համեմատ պատահարներն աճել են 151-ով կամ 6.8%-ով, հանցագործությունները նվազել են 67-ով կամ 5.5%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունները նվազել են 41 դեպքով կամ 5.3%-ով, իսկ այլ հանցագործությունները՝ 26-ով կամ 5.9%-ով: Եթե 2017թ. ընթացքում արձանագրված 1207 հանցագործությունից 191-ը, կամ 15.8% են եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 111-ը՝ ծանր, իսկ 80-ը՝ առանձնապես ծանր, ապա 2018թ. արձանագրված 1140 հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր եղել են 163-ը, կամ 14.3%-ը, որոնցից 120-ը՝ ծանր, 43-ը՝ առանձնապես ծանր: Այսինքն, նախորդ տարվա համեմատ ծանր հանցագործություններն աճել են 9 դեպքով կամ 8.1%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները նվազել՝ 37 դեպքով, կամ 46.2%-ով:

2018թ. արձանագրված 43 առանձնապես ծանր հանցագործություններից 7-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 1-ը՝ համածառայակցի կողմից կատարված սպանության, 1-ը՝ զինծառայողի կողմից քաղաքացիական անձի սպանության, 1-ը՝ անհայտ անձի կողմից կատարված սպանության, 23-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության փորձի, 2-ը՝ համածառայակցի կողմից կատարված սպանության փորձի, 1-ը՝ պետի կողմից ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու, 7-ը՝ պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու դեպքեր են:

2018թ. ընթացքում ծառայության հետ կապված մահացել է 38 զինծառայող, որոնցից 7-ը՝ հակառակորդի կողմից սպանության, 1-ը՝ սպանության, 1-ը՝ ականի պայթյունի, 2-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման, 11-ը՝ ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու, 3-ը՝ հիվանդության, 6-ը՝ ավտովթարի, 3-ը՝ դժբախտ պատահարի, 2-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման, 2-ը՝ թռիչքների կանոնների խախտման հետևանքով: 2017թ. ընթացքում ծառայության հետ կապված մահացել է 56 զինծառայող, այդ թվում 21-ը՝ հակառակորդի արձակած կրակոցներից:

Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել 1173 զինծառայող (2017թ.՝ 1813), այսինքն՝ արձանագրվել է նվազում 640-ով կամ 35.3%-ով: Ընդ որում, գրեթե կրկնակի նվազել է ծանր մարմնական վնասվածք ստացած զինծառայողների թիվը /54-102/:

Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում, զինվորական հանցագործությունների մեջ առավել տարածված են մնում զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված (ՀՀ

քրեական օրենսգրքի 356-360-րդ հոդվածներ), ինչպես նաև զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված (ՀՀ քրեական օրենսգրքի 361-364 հոդվածներ) հանցագործությունները: Եթե 2017թ. ընթացքում արձանագրվել է նման հանցագործությունների 441 դեպք, ապա 2018թ. դրանց թիվը կազմել է 395:

Ըստ հանցատեսակների՝ նվազել են զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները՝ 10.4%-ով, ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու, զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու հետ կապված հանցագործությունները՝ 33.3%-ով, ռազմական տեխնիկայի օգտագործման կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ 39.1%-ով, կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները՝ 33.3%-ով: Փոխարենը աճել են հատուկ ծառայությունների կրման կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ 22.2%-ով, զինվորական պաշտոնեական հանցագործությունները՝ 29.3%-ով, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները՝ 32.1%-ով: Նախորդ տարիների համեմատ էապես նվազել են զորամասն ինքնակամ թողնելու դեպքերը: Հանցագործությունների բացահայտումը կազմել է 97.1 %, գրեթե նույնքան, որքան 2017թ.:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նման արդյունքները պայմանավորված են ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների և զորամասերի միջին ու բարձր հրամանատարական կազմի կողմից դրսևորվող հետևողականությամբ:

Սպանության, սպանության փորձի, ինքնասպանության, առողջությանը ծանր վնաս հասցնելու, ստորադասի նկատմամբ բռնի գործողության կամ դրա սպառնալիքի ցանկացած դեպքով քննության առարկա է դառնում համապատասխան պաշտոնատար անձանց կողմից դրանք կանխելու հնարավորության և առհասարակ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու հանգամանքը:

Առանձնակի կարևորվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների և զորամասերի միջին ու բարձր հրամանատարական կազմի հետևողականությունը:

Սպանության, սպանության փորձի, ինքնասպանության, առողջությանը ծանր վնաս հասցնելու, ստորադասի նկատմամբ բռնի գործողության կամ դրա սպառնալիքի ցանկացած դեպքով քննության առարկա է դառնում նաև համապատասխան պաշտոնատար անձանց կողմից դրանք կանխելու հնարավորության և առհասարակ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու հանգամանքը:

Նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների պահանջով հնարավորինս վեր են հանվել նշված բնույթի հանցագործություններ ծնող պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները, ձեռնարկվել և ձեռնարկվում են դատախազական ներգործության միջոցներ (գրվում են միջնորդագրեր, հաղորդումներ, դատախազները մասնակցում են դրանց քննարկումներին, անում են գործնական առաջարկություններ դրանց կանխարգելման ուղղությամբ և այլն):

Բացի դրանից, որպես հանցագործությունների կանխարգելման արդյունավետ միջոց, կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից հաճախակի՝ զորամասերում, ինչպես սպայական անձնակազմի, այնպես էլ ժամկետային

զինծառայողների շրջանում, անցկացվել են զրույց-զեկուցումներ, դասախոսություններ, տրվել են պարզաբանումներ, կատարվել են օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների, հրահանգների մեկնաբանություններ և վերլուծություններ:

Կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տվել, որ ՀՀ ԶՈՒ-ում արձանագրված հանցագործությունների վերաբերյալ նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության ընթացքում հիմնական դժվարությունները կապված են եղել տեղի ունեցած դեպքերի փաստական հանգամանքների խորքային և իրական պատճառների վերհանման, պարզաբանման և ապացույցների ձեռքբերման հետ:

Նախապատրաստված բազմաթիվ նյութերի և հարուցված քրեական գործերի վերլուծությունների համաձայն, եզակի չեն դեպքերը, երբ արձանագրված հանցագործությունները հետևանք են սպայական անձնակազմի կողմից կատարված հանցագործությունների ու այլ իրավախախտումների, ինչպիսիք են՝ զինծառայողների նկատմամբ համածառայակիցների, կրտսեր և ավագ սպայական կազմի ներկայացուցիչների կողմից դրսևորվող ոչ կանոնագրքային վարքագծի տարաբնույթ դրսևորումները, որոնք երբեմն հանգեցրել են զորամասը կամ ծառայության վայրը լքելուն, հետևաբար դրանց իրական պատճառներն ու կատարմանը նպաստող պայմանները բացահայտելու, վեր հանելու, հանցագործություն կատարած զինծառայողներին օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու դեպքում զգալիորեն կկրճատվեն ու կնվազեն վերը հիշատակված բնույթի հանցագործությունները:

Հարկ է փաստել, որ հաշվետու ժամանակահատվածում հանցավորության մակարդակը սպաների շրջանում աճել է. եթե 2017թ. ընթացքում արձանագրվել է սպաների կողմից կատարված հանցագործությունների 258 դեպք, ապա 2018թ.՝ 263, այսինքն՝ աճ է արձանագրվել 5-ով, կամ 1.9 %-ով:

Վերլուծությունը ցույց է տվել, որ 2018թ. արձանագրված հանցագործություն կատարած զինծառայողների թվաքանակում սպաների տեսակարար կշիռը կազմում է 25.7% (2017թ.՝ 23.7%), ենթասպաներինը՝ 1.4% (2017թ.՝ 2.3%), պայմանագրային զինծառայողներինը՝ 18.1% (2017թ.՝ 18.7%), ժամկետային զինծառայողներինը՝ 54.7% (2017թ.՝ 55.2%):

Կատարված վերլուծություններով պարզվել է նաև, որ 2018թ. ընթացքում ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական մարմինների վարույթում քննվել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված 2819 քրեական գործ, որոնցից 303-ը փոխանցվել են նախորդ տարվանից, 1211-ը՝ հարուցվել են հաշվետու տարում, 13-ը՝ ստացվել է այլ մարմիններից, 1292-ով վերսկսվել է նախաքննությունը, 2-ը միացվել է այլ գործերի:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական գործերից 1358-ի նախաքննությունն ավարտվել է: Դրանցից 20-ը մեղադրական եզրակացություններով ուղարկվել են դատարաններ, 1338-ով վարույթները կարճվել են: Ընդ որում՝ 216-ով վարույթները կարճվել են ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 949-ը՝ ՀՀ քր. դատ. օր-ի 37-րդ հոդվածի (իրադրության փոփոխման), 173-ը՝ այլ հիմքերով: Իրադրության փոփոխման հիմքերով վարույթները կարճված քրեական գործերից 715-ով վարույթները կարճվել են «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ, 227-ով՝ զորակոչիկի զինված ուժեր

զորակոչվելու կապակցությամբ: 1016 քրեական գործով վարույթները կասեցվել են, 5 քրեական գործ ուղարկվել է այլ մարմիններ, 436 քրեական գործ փոխանցվել է 2019թ.:

Հաշվետու ժամանակահատվածում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու վերաբերյալ նախապատրաստվել է 213 նյութ, որոնցով մերժվել է քրեական գործի հարուցումը: Դրանցից 203-ը՝ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 1-ը՝ ՀՀ քր. դատ. օր-ի 37-րդ հոդվածի, 9-ը՝ այլ հիմքերով:

Զինվորական դատախազության դատախազների ամենօրյա առանձնակի հսկողության տակ են գտնվել հաշվետու ժամանակահատվածում արձանագրված կոռուպցիոն բնույթի հանցագործությունները և դրանց նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության իրականացումը:

Անդրադառնալով այդ հանցագործությունների դեպքերի շարժընթացին ու վիճակագրական տվյալներին՝ հարկ է նշել, որ 2018թ. ընթացքում ՀՀ ԶՈՒ և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների 182 դեպք, ինչը 66-ով կամ 56.9%-ով ավելի է, քան 2017թ.: Բոլոր դեպքերի վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության դատախազների դատավարական ղեկավարմամբ և դատախազական հսկողությամբ նախապատրաստվել են նյութեր: Դրանցից 173-ով հարուցվել են քրեական գործեր՝ հիմնականում խարդախության, հափշտակության, կաշառք տալու, ստանալու և կաշառքի միջնորդության, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ անցնելու, պաշտոնեական կեղծիք կատարելու, պետի (հրամանատարի) կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելու, իշխանազանցության կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելու և այլ հատկանիշներով:

Բացի դրանից, 2018թ. ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական մարմինների վարույթ են ընդունվել նաև նախորդ՝ 2017թ.-ից փոխանցված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով հարուցված, անավարտ մնացած 62 քրեական գործ (2017թ.՝ 34), վարույթը վերսկսված 8 քրեական գործ (2017թ.՝ 8), այլ մարմիններից ստացված 40 քրեական գործ (2017թ.՝ 7), քրեական գործերից անջատված մասեր՝ 6 (2017թ.՝ 7), դատախազների կողմից լրացուցիչ քննության վերադարձված 2 քրեական գործ (2017թ.՝ 0):

Ընդհանուր առմամբ 2018թ. ընթացքում վարույթում քննվել է կոռուպցիոն բնույթի 291 քրեական գործ (2017թ.՝ 171), որոնցից 109-ի նախաքննությունն ավարտվել է (2017թ.՝ 88): Դրանցից 66-ով վարույթները կարճվել են (2017թ.՝ 52), այդ թվում՝ 15-ով՝ ոչ արդարացնող (2017թ.՝ 13) հիմքով: 43 քրեական գործ 86 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարաններ (2017թ.՝ 36 գործ, 72 անձ):

8 քրեական գործով վարույթները կասեցվել են (2017թ.՝ 4), ընդ որում, 4-ով վարույթները կասեցվել են ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի հիմքով (2017թ.՝ 1), 4-ով՝ ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ կետի հիմքով (2017թ.՝ 3):

32 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության (2017թ.՝ 4), 33-ը միացվել են մեկ վարույթում (2017թ.՝ 12), 109 քրեական գործի նախաքննությունն ընթացքի մեջ է և դրանք փոխանցվել են 2019թ. (2017թ.՝ 33):

Կատարված ուսումնասիրությունն ու վերլուծությունը վկայում են այն մասին, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների արձանագրման աճը պայմանավորված է ինչպես կոռուպցիոն դրսևորումների դեմ ձևավորվող հասարակական անհանդուրժողականությամբ, նմանօրինակ դեպքերի բացահայտմանն ուղղված

տարաբնույթ միջոցառումների իրականացմամբ, այնպես էլ կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը հստակեցնելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի 2017թ. հունվարի 19-ի թիվ 3 հրամանով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների ցանկի սահմանմամբ և այդպիսի հանցագործությունների համար քրեական պատասխանատվության անխուսափելիությամբ:

Կոռուպցիոն հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու նպատակով զինված ուժերի ստորաբաժանումներում շարունակվում են նյութական միջոցների ստացման, պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացմանը միտված միջոցառումները: Ապահովվում է նյութական միջոցների սահմանված կարգերին համապատասխան հաշվառումը՝ զերծ մնալով ձևական փաստաթղթավորման արատավոր դրսևորումներից:

Ընդհանուր առմամբ, 2018թ. ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված, ավարտված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են 422.236.614 դրամի նյութական վնասի պատճառման փաստեր, ինչը 7.3 անգամ ավելի է 2017թ. ցուցանիշից (2017թ.՝ 57.458.594 դրամ), որոնցից մինչդատական վարույթում վերականգնվել է 410.653.037 դրամը, ինչը 8 անգամ գերազանցում է 2017թ. արդյունքը (2017թ.՝ 51.607.924 դրամ):

2018թ. շուրջ 61.9%-ով նվազել են կրկնահանցագործությունները, ինչը մեծապես պայմանավորված է հանցագործություններ կատարած զինծառայողների նկատմամբ զորամասերի հրամանատարությունների, ՌՈ բաժինների և կայազորների զինդատախազությունների աշխատակիցների կողմից իրականացված խիստ հսկողությամբ, նրանց հետ տարվող բացատրական աշխատանքներով: Կարծում ենք, որ կրկնահանցագործությունների դինամիկայի վրա դրական ազդեցություն է ունեցել ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություն կատարած զինծառայողների նկատմամբ նրանց կողմից գործուն զղջալու, հանցագործությունն առաջին անգամ կատարված լինելու դեպքերում հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու պրակտիկան: Պրակտիկան ցույց է տալիս, որ հանցավոր շեղում թույլ տված երիտասարդների նկատմամբ ներողամտության ցուցաբերումը շատ դեպքերում կարող է նրանց վրա ավելի մեծ դրական ազդեցություն ունենալ ոչ միայն զինվորական ծառայության, այլ նաև հետագա ողջ կյանքի ընթացքում:

2018 թվականին զինվորական դատախազության դատախազների կողմից էական աշխատանքներ են իրականացվել նաև նախորդ տարիներին կատարված հանցագործությունների բացահայտման և հետախուզական աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացման, առկա թերությունների հայտնաբերման և դրանց վերացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական ստորաբաժանումների վարույթներում առկա են եղել նախորդ տարիներից փոխանցված, ՀՀ քր. դատ օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցված 906 քրեական գործ (2017թ.՝ 902): 2018թ. ընթացքում նույն հիմքով կասեցվել է ևս 90 քրեական գործ (2017թ.՝ 56): Կատարված վերլուծությամբ պարզվել է, որ 2018թ. ընթացքում ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) կասեցված քրեական գործեր չեն վերսկսվել, նախկինում կատարված հանցագործությունների բացահայտման դեպքեր չեն արձանագրվել:

2018թ. ընթացքում, ղեկավարվելով ՀՀ զինվորական դատախազի 12.06.2017թ. N13 կարգադրության և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, ՀՀ զինվորական դատախազության սպասարկման տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ ՌՈ բաժիններում և բաժանմունքներում ուսումնասիրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցված քրեական գործերով կազմված օպերատիվ փնտրողական գործերը՝ հանցանք կատարած անձանց բացահայտման ուղղությամբ դատախազական գործունեության կազմակերպման միասնական կառուցակարգեր ձևավորելու և դրա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ուսումնասիրության ընթացքում հետազոտման առարկա են դարձել հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզելու նպատակով իրականացված միջոցառումների՝ օպերատիվ հարցումների, օպերատիվ տեղեկությունների ձեռքբերման նպատակով տարբեր իրավասու մարմիններին հասցեագրված գրությունների իրավական հիմքերը, դրանց կատարման անհրաժեշտությունը, ժամանակին կատարված լինելը և դրանց արդյունքում ստացված տեղեկությունների հավաստիությունը: Այդ ընթացքում նախաքննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների հայտնաբերման և հետաքննության մարմնին ուղղորդող նշանակության ցուցումներ տալու անհրաժեշտություն չի առաջացել:

Նախաքննության մարմնի՝ քննիչի կողմից տրված գրավոր հանձնարարությունների հիման վրա իրականացվել են համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Քրեական գործերով ձեռք բերված տվյալների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տեղեկությունների միջև հակասություններ չեն հայտնաբերվել:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող աշխատակիցների կողմից իրենց պաշտոնեական լիազորությունների իրականացման ընթացքում թույլ տրված խախտումներ չեն հայտնաբերվել:

2018թ. ընթացքում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումների և հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման ու լուծման մասին օրենքի և մյուս համապատասխան իրավական ակտերի, հանձնարարականների (ցուցումների) պահանջների կատարումն ապահովելու նպատակով կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից հետաքննության մարմիններում անցկացվել են 436 ստուգումներ և ուսումնասիրություններ՝ նախորդ տարվա 394-ի դիմաց:

Կատարած ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում արձանագրվել է իրավախախտումների 49 դեպք (2017թ.՝ 4), 51 անձի վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել են միջնորդություններ՝ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ: Արդյունքում՝ 8 անձ ենթարկվել է կարգապահական տույժերի:

2018թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության դատախազների հսկողությամբ նախապատրաստվել և ավարտվել է 5583 նյութ (2017թ.՝ 5492), որոնցից 2767-ը՝ քննչական (2017թ.՝ 3021), 2816-ը՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից (2017թ.՝ 2471):

Հետաքննության մարմինների կողմից նախապատրաստված նյութերով կայացված 2033 մերժման որոշումներից 7-ը վերացվել է և հարուցվել են քրեական գործեր (2017թ.՝ 6): Դրանցից 5-ով վարույթները կարճվել են, 2-ով նախաքննությունն ընթացքի մեջ է:

2018թ. ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժնի դատախազների կողմից վերահսկողություն է իրականացվել կայազորների զինվորական դատախազություններից ստացված 755 նյութերով կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների օրինականության նկատմամբ (2017թ.՝ 534): Բոլոր նյութերով կայացված որոշումների օրինականությունը վերստուգվել և հաստատվել է:

Դատախազության կողմից մշտապես կարևորվում է զորամասերի հրամանատարների՝ որպես հետաքննություն իրականացնող մարմինների, քրեադատավարական կարգով նյութեր նախապատրաստելու համար անհրաժեշտ գիտելիքները և հմտությունները զարգացնելու անհրաժեշտությունը, ինչը զորամասերում հանցավոր դրսևորումները բացահայտելու և դրանցով պատշաճ քննություն ապահովելու, քրեական պատասխանատվության անխուսափելիության գիտակցման արմատավորմամբ զինծառայողներին հանցավոր վարքագծից հնարավորինս զերծ պահելու կարևոր նախապայմաններից է: Այդ նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ խնդիր է դրվել մշակել և իրականացնել համապատասխան ծրագրեր: Համոզված ենք, որ զորամասերի հրամանատարների գործունեության արդյունավետության գնահատման չափանիշներից պետք է դարձնել նրանց կողմից հանցագործությունների բացահայտման ուղղությամբ ցուցաբերված ջանասիրությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ բաժինների վարույթում քննվող 4872 քրեական գործի նկատմամբ (2017թ.՝ 4310):

2436 քրեական գործի նախաքննությունն ավարտվել է (2017թ.՝ 2006): Ավարտված քրեական գործերից 588-ը՝ 915 անձի նկատմամբ (2017թ.՝ 642 գործ, 953 անձ) մեղադրական եզրակացությամբ, 2 գործ 2 անձի նկատմամբ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ ուղարկվել են դատարաններ, 1848 քրեական գործով վարույթները կարճվել են (2017թ.՝ 1362), 1177 քրեական գործով վարույթները կասեցվել են (2017թ.՝ 1328), 108 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության (2017թ.՝ 64), 181-ը միացվել է այլ գործերի (2017թ.՝ 162), 912-ը փոխանցվել է 2019թ. (2017թ.՝ 719):

2018թ. ընթացքում քրեական գործերով վարույթները կարճելու 38 (2017թ.՝ 18) որոշում վերացվել է:

Զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցների կողմից մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 588 քրեական գործ 915 անձի վերաբերյալ (2017թ.՝ 642 գործ 953 անձի վերաբերյալ): Դատարան ուղարկված բոլոր գործերն էլ ընդունվել են վարույթ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ, 578 քրեական գործ 852 անձի վերաբերյալ քննվել է դատարանում, որոնցից 453 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 643 անձ (2017թ.՝ 529 գործ, 818 անձ):

Դատարանների որոշումներով 114 քրեական գործ 193 անձի վերաբերյալ կարճվել է (2017թ.՝ 11 գործ, 16 անձ): Բացի դրանից, 39 անձ պատժի կրումից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ (2017թ.՝ 3 անձ): 10 քրեական գործով 15 անձի

վերաբերյալ և 3 առանձին քրեական գործերով 4 անձի մասով կայացվել է արդարացման դատավճիռ (2017թ.՝ 2 գործ, 6 անձ), իսկ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ չեն կիրառվել (2017թ.՝ 2 գործ, 2 անձ):

Դատապարտված 643 անձից 599-ը եղել է զինծառայող (2017թ.՝ 750): Դատապարտված զինծառայողներից 138-ը եղել է սպա (2017թ.՝ 177), 461-ը՝ պայմանագրային և ժամկետային զինծառայող (2017թ.՝ 573): Նախորդ տարվա համեմատությամբ 151-ով նվազել է դատապարտված զինծառայողների թիվը: Զինծառայողների հետ մեկտեղ դատապարտվել է նաև 44 քաղաքացիական անձ, այդ թվում՝ 1 անչափահաս:

2018թ. ՀՀ զինվորական դատախազությունում ուսումնասիրվել և ամփոփվել են «2017թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից իրականացված դատախազական հսկողության վիճակը», «2016-2017թթ. ընթացքում ՀՀ ԶՈՒ սպաների կողմից կատարված բռնարարքների դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման, նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության /վերահսկողության/ և մեղադրանքի պաշտպանության բնագավառներում իրականացված դատախազական գործունեության արդյունքները»:

Ուսումնասիրվել և ամփոփվել են նաև «2011-2017թթ. ընթացքում ՀՀ ԶՈՒ զինծառայողների կողմից իրենց առողջությանը վնաս պատճառելու /անդամախեղելու/ եղանակով զինծառայությունից խուսափելու դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության և մեղադրանքի պաշտպանության բնագավառում իրականացված դատախազական գործունեության արդյունքները»:

Կատարված բոլոր ուսումնասիրություններով և ամփոփումներով ստացված արդյունքները, զեկուցագրերով, սահմանված ժամկետներում ուղարկվել են ՀՀ զինվորական դատախազին կամ ՀՀ գլխավոր դատախազի՝ հանձնարարականը տված տեղակալին, իսկ յուրաքանչյուր ուսումնասիրության և ամփոփման արդյունքներով հետևություններ են արվել նշված բնագավառում աշխատանքների կազմակերպման ավելի արդյունավետ կանոնակարգեր սահմանելու, դրանք քրեադատավարական արդի պրակտիկային համապատասխան կիրառելու ուղղությամբ:

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից 2018թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով կատարվել է **394** ուսումնասիրություն (2017թ.՝ 384):

Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել է 292 խախտում (2017թ.՝ 253): Ուսումնասիրությունների արդյունքում խախտումների արձանագրման ցուցանիշն ունեցել է շուրջ 10% աճ: ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից իրականացված 43 ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է 42 խախտում:

Ուսումնասիրությունների արդյունքում 2018թ. ընթացքում տրվել է 101 նախազգուշացում (2017թ.՝ 178), ուղարկվել է 60 հաղորդում (2017թ.՝ 62): Պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու վերաբերյալ 2018թ. ընթացքում տրվել է 101 նախազգուշացում (2017թ.՝ 178), որոնց արդյունքում վերականգնվել է պետությանը

պատճառված շուրջ 200 մլն ՀՀ դրամի վնաս, որը կազմում է 2018թ. ընթացքում վերականգնված վնասի շուրջ 30%-ը:

2018թ. ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված՝ պետությանը պատճառված վնասի չափը կազմել է համապատասխանաբար՝ 1.803.945.459 և 265.715.850 ՀՀ դրամ (ընդհանուր՝ 2.069.661.309 ՀՀ դրամ), որից դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ վերականգնվել է համապատասխանաբար՝ 587.459.012 ՀՀ դրամ և 92.771.042 ՀՀ դրամ (որից 8.291.197 ՀՀ դրամը՝ նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված վնասներից), ընդհանուր՝ 680.230.054 ՀՀ դրամ:

Այսպիսով, հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված՝ պետությանը պատճառված վնասի չափը կազմել է 2.069.661.309 ՀՀ դրամ (2017թ.՝ 1.805.202.342 դրամ), իսկ վերականգնված վնասի չափը՝ 680.230.054 ՀՀ դրամ (2017թ.՝ 294.507.920 դրամ):

2018թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրություններով նախապատրաստվել է 133 նյութ (2017թ.՝ 118): Հարուցվել է 58 քրեական գործ (2017թ.՝ 47) և 8 հայց (2017թ.՝ 8):

2018թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության ոլորտում հարուցվել է 8 հայց, որոնցից 2-ը՝ քաղաքացիական և 6-ը՝ քրեական դատավարության կարգով: Հարուցված հայցերով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 31.318.871 ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքացիական դատավարության կարգով հարուցվել է 1 հայց՝ 8.476.000 ՀՀ դրամ վնաս բռնագանձելու պահանջի և սնանկ ճանաչելու վերաբերյալ 1 դիմում՝ 19.034.050 ՀՀ դրամի չկատարված անվիճելի պարտավորության վերաբերյալ: Բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 27.510.050 ՀՀ դրամ:

Հայցադիմումը և սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարանի կողմից ընդունվել է վարույթ: Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու նպատակով հայցադիմումով դատարան է ներկայացվել հայցագնի չափով պատասխանողին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու վերաբերյալ միջնորդություն, որը բավարարվել է: Հայցադիմումը՝ 8.476.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է, դատական ակտը դեռևս չի ստացել օրինական ուժ:

Սնանկ ճանաչելու մասին դիմումը բավարարվել է: Պարտապանը ճանաչվել է սնանկ, իսկ վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Նշանակվել է սնանկության գործով կառավարիչ, որի կողմից դեռևս պարտապանին սնանկ ճանաչելու մասին հայտարարություն չի տրվել: Պետությանը պատճառված 27.510.050 ՀՀ դրամի վնասը դեռևս չի վերականգնվել:

Հաշվետու ժամանակաշրջանում քրեական դատավարության կարգով հարուցվել է 6 հայց, որոնցով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 3.808.821 ՀՀ դրամ:

Ներկայացված հայցադիմումներից 5-ն ամբողջությամբ բավարարվել է, վերականգնվել է պետությանը պատճառված 3.610.134 ՀՀ դրամի վնասը, իսկ 1 հայցադիմումը՝ 168.687 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ դատաքննության փուլում է:

2018թ. ընթացքում հարուցված հայցերով վերականգնվել է պետությանը պատճառված 3.640.134 ՀՀ դրամի վնաս (2017թ. ընթացքում՝ 1.448.010 ՀՀ դրամ):

10. Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման ոլորտ

Ֆիզիկական անձանց, իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունների աշխատակիցների կողմից կատարված հանցագործությունների, պետության շահերի, օրենքով նախատեսված դեպքերում՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, օրինականության խախտումների մասին դիմումների, բողոքների և առաջարկությունների (այսուհետ՝ դիմում), պետական մարմինների պաշտոնատար անձանց գրագրության սահմանված ժամկետներում արդյունավետ քննարկման, ինչպես նաև ՀՀ դատախազությունում քաղաքացիների և այլ անձանց ընդունելության հետ կապված աշխատանքները կազմակերպվել են՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը և ղեկավարվելով «Դատախազության մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը հաստատելու մասին» N 59 հրամանով հաստատված կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

2018թ. ՀՀ դատախազությունում ստացվել է 11198 դիմում-բողոք, որոնցից 1760-ը եղել է կրկնակի, 695-ը բավարարվել է, 1762-ը մերժվել է, 3472-ին տրվել է պարզաբանում, 177-ը թողնվել է անհետևանք, 12-ը վերադարձվել է դիմումատուին, 30 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է, 130 դիմումի քննարկում մնացել է անավարտ, 84 դիմումի քննարկման արդյունքում հարուցվել է քրեական գործ:

2018 թվականի ընթացքում դատախազների կողմից կազմակերպվել է քաղաքացիների 2763 ընդունելություն (2017թ.՝ 2051), որոնցից 1130-ը (2017թ.՝ 952) ՀՀ գլխավոր դատախազությունում:

Այդ թվում՝

1) ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների մոտ կազմակերպվել է 109 (2017թ.՝ 64) ընդունելություն:

2) ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերի, վարչությունների պետերի տեղակալների, դատախազների մոտ՝ 443 ընդունելություն (2017թ.՝ 144):

3) 578 քաղաքացու (2017թ.՝ 744) ընդունել է ՀՀ դատախազության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժինը:

Ընդունելության ներկայացած քաղաքացիների հարցերին տրվել են պատշաճ պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են ընդունելություններ դատավարական հսկողություն իրականացնող դատախազների և նրանց վերադասների մոտ, դիմումներն ուղարկվել են դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ կամ այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու և քաղաքացիներին պատասխանելու համար:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության թափանցիկությունն ու կանխատեսելիությունը, ինչպես նաև վարույթի մասնակիցների իրավունքների պատշաճ պաշտպանությունն ապահովելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի հրամանով սահմանվել են քաղաքացիների ընդունելության կարգն ու պայմանները, հստակեցվել են դատախազների նախաձեռնությամբ քաղաքացիների

ընդունելության ընթացակարգերը, դատախազներին հանձնարարվել է ավելի հաճախ կազմակերպել վարույթի մասնակիցների, նրանց ներկայացուցիչների ընդունելություն՝ անհրաժեշտության դեպքում անձամբ ցուցաբերելով նախաձեռնություն:

ՀՀ դատախազությունն ու նախաքննական մարմինները, էապես կարևորելով իրենց գործունեության հրապարակայնության ապահովումը՝ ակտիվացրել են աշխատանքները նաև իրենց ամենօրյա գործունեության լուսաբանման ոլորտում:

Առաջնային համարելով հանցավորության դեմ պայքարում, ինչպես նաև քրեական հետապնդման և հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության անխուսափելիության ապահովման շրջանակներում քրեական հետապնդման մարմինների վերաբերյալ հանրային իրազեկվածության ապահովումն ու հանրային վստահության մակարդակի բարձրացումը, իրականացվել է լայն հասարակությանը և թիրախավորված մասնագիտական շրջանակներին ուղղված առավել նախաձեռնողական տեղեկատվական քաղաքականություն:

Ինչպես ՀՀ դատախազության, այնպես էլ նախաքննական մարմինների կողմից հաղորդագրությունների միջոցով անհրաժեշտ տեղեկություն է փոխանցվել հանրային առավել մեծ վստանգավորություն և հնչողություն ունեցող հանցատեսակներով, ինչպես նաև սոցիալական նշանակության ոլորտներում կատարված հանցագործությունների դեպքերով կոնկրետ քրեական գործերի հարուցման, դրանց նախաքննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Առավել թիրախավորված և հետևողականորեն լուսաբանվել են հատկապես կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, դրանց վերաբերյալ քննվող քրեական գործերով կոռուպցիոն հանցագործությունների առերևույթ կատարման մեջ մեղադրվող պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցված քրեական հետապնդումների՝ ինչպես կոնկրետ դեպքերը, այնպես էլ այս ոլորտում իրավապահ մարմինների կողմից իրականացված համագործակցված, ուղենիշային աշխատանքները:

Հաղորդագրությունների միջոցով անհրաժեշտ տեղեկություն է փոխանցվել հանրային առավել մեծ վտանգավորություն և հնչողություն ունեցող հանցատեսակներով, ինչպես նաև սոցիալական նշանակության ոլորտներում կատարված հանցագործությունների դեպքերով կոնկրետ քրեական գործերի հարուցման, դրանց նախաքննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Դատախազության պաշտոնական հրապարակումներում հատուկ ուշադրություն է դարձվել հանցագործությունները ծնող պատճառների և պայմանների վերացման ուղղությամբ դատախազների կողմից պետական և համայնքային իշխանության մարմիններին հասցեագրված միջնորդագրերի, հաղորդումների, այդ նախաձեռնությունների հետևանքների, արդյունքների մասին հանրային իրազեկմանը:

ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների ղեկավարները տարբեր ձևաչափերով հրապարակային ընդարձակ տեղեկություն են տրամադրել համապատասխան վարչական տարածքում 2018թ. ընթացքում հանցավորության, քրեական հետապնդման ոլորտի աշխատանքների, հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի, դատախազության տարածքային ստորաբաժանումների տարբեր նախաձեռնությունների վերաբերյալ:

Ընդ որում, ՀՀ դատախազությունը չի բավարարվել միայն օպերատիվ հաղորդագրությունները պաշտոնական կայք-էջում տեղադրելով, այլ դատախազության ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցել են ամենատարբեր ձևաչափերով, այդ թվում՝

նաև ԶԼՄ-ներով կազմակերպվող թեմատիկ քննարկումներին, բանավեճերին, հեռուստատեսային և ռադիոհաղորդումներին (մասնավորապես, դատախազության ներկայացուցիչները մասնակցել են համացանցային, հեռուստատեսային և ռադիոհեռարձակում ունեցող 98 հաղորդումների), որոնց ընթացքում հանդես են եկել քննարկվող հիմնահարցերի վերաբերյալ ՀՀ դատախազության դիրքորոշումներն արտահայտող և հիմնավորող համապատասխան մեկնաբանություններով: